

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

2005

3

Հրատարակվում է
Հայաստանի Հանրապետության
պետական կառավարման ակադեմիայի
գիտական խորհրդի որոշմամբ

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Գլխավոր խմբագիր՝

ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր

խմբագրական խորհուրդ՝

ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀՀ նախագահի առաջին օգնական

ՎԻԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ նախագահի օգնական

ՄԱՆՎԵԼ ԲԱԴՄԻՅԱՆ

ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի
նախագահ

ՎԱՅԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ

իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր

ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր

ԳԱՌՆԻԿ ՍԱՖԱՐՅԱՆ

իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր

ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
(պատասխանատու քարտուղար)

ԷՂՈՒԱՐԴ ՕՐԴՅԱՆ

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

ՆԱԻՐԱ ՀԱՎՈՐՅԱՆ

հոգեբանական գիտությունների դոկտոր

ՄԵԼՍ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

հոգեբանական գիտությունների դոկտոր

ԳԱՐԻԿ ՔԵՆՅԱՆ

քաղաքագիտության դոկտոր

ՄԱՐԻԱՍ ՄԱՐԳԱՐՅԱՆ

փիլիսոփայական գիտ. թեկնածու, դոցենտ

«ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ»
ԵՐԼԱՆ

ПУБЛИЧНОЕ УПРАВЛЕНИЕ

Главный редактор:

Армен Арутюнян доктор юридических наук, профессор

Совет редакторов:

Армен Геворгян первый помощник президента РА
Виген Саргсян помощник президента РА
Манвел Бадалян председатель Совета гражданской службы РА
Vahe Stepanyan доктор юридических наук, профессор
Гагик Арутюнян доктор юридических наук, профессор
Гарник Сафарян доктор юридических наук, профессор
Юрий Суварян доктор экономических наук, профессор
(ответственный секретарь)
Эдуард Ордян доктор экономических наук, профессор
Наира Акопян доктор психологических наук
Мелс Мкртумян доктор психологических наук, профессор
Гарик Керян доктор политических наук
Мариам Маргарян кандидат философских наук, доцент



*Public Administration Academy of the
Republic of Armenia*

PUBLIC ADMINISTRATION

Chief editor:

Armen Harutyunyan, doctor of Sciences (Law), Professor

Board of editors:

Armen Gevorgyan chief assistant to the President of the RA
Vigen Sargsyan assistant to the President of the RA
Manvel Badalyan president of Civil Service Council of the RA
Vahe Stepanyan doctor of Sciences (Law), Professor
Gagik Harutyunyan doctor of Sciences (Law), Professor
Garnik Safaryan doctor of Sciences (Law), Professor
Yuri Suvaryan doctor of Sciences (Economics), Professor
(responsible secretary)
Eduard Ordyan doctor of Sciences (Economics), Professor
Naira Hakobyan doctor of Sciences (Psychology)
Mels Mkrtyunyan doctor of Sciences (Psychology), Professor
Garik Keryan doctor of Sciences (Political Sciences)
Mariam Margaryan doctor of Philosophy, Docent

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հանրային կառավարում	6-19
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ <i>ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ.....</i>	6
Իրավագիտություն	20-44
ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ <i>ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՂՔՅՈՒՐՆԵՐԸ ՄԱՐԴՈՒ ՀԻՄՆԱՐԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.....</i>	20
ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ <i>ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ.....</i>	33
Տնտեսագիտություն (կառավարում)	45-58
ՎԻԼԵՆ ԽԱԶԱՏՐՅԱՆ <i>ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ.....</i>	45
Հոգեբանություն	59-89
ՍՎԵՏԼԱՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ <i>ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ.....</i>	59
ԳԱՅԱՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ <i>ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԻՏՈՒՄՆԵՐՆ ԱՌԱՋՆՈՐԴՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՒՄ.....</i>	85
Քաղաքագիտություն	95-114
ՏԻԳՐԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ <i>ՈՒՐ ԵՆ ՏԱՆՈՒՄ «ԳՈՒՆԱՎՈՐ» ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃԱՄՓԱՆԵՐԸ.....</i>	95
ՄԱՐԻԱՄ ՄԱՐԳԱՐՅԱՆ <i>ԿԱՌԱՎԱՐՈՂ ԸՆՏՐԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎԱՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԱՆՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ.....</i>	107
Գրքերի տեսություն	120-116
Հուլազգիր հեղինակից	122-118

СОДЕРЖАНИЕ

Публичное управление	6-19
Ю. СУВАРЯН <i>ПУБЛИЧНАЯ ПОЛИТИКА: МЕТОДОЛОГИЯ, АНАЛИЗ И СТРУКТУРА</i>	7
Юридические науки	20-44
А. АРУТЮНЯН <i>ИСТОЧНИКИ ЕВРОПЕЙСКОГО ПРАВА ОБ ОСНОВНЫХ ПРАВАХ ЧЕЛОВЕКА</i>	20
А. ГАМБАРЯН <i>КОНСТИТУЦИОННО-ПРАВОВАЯ ОТВЕТСТВЕННОСТЬ В СИСТЕМЕ ЮРИДИЧЕСКОЙ ОТВЕТСТВЕННОСТИ</i>	33
Экономика (управление)	45-58
В. ХАЧАТРЯН <i>МЕТОДОЛОГИЧЕСКИЕ ВОПРОСЫ ОЦЕНКИ ЭФФЕКТИВНОСТИ ПУБЛИЧНОГО УПРАВЛЕНИЯ ЭКОНОМИКОЙ</i>	45
Психология	59-89
С. АРУТЮНЯН <i>ПРОБЛЕМА СОЦИАЛИЗАЦИИ И ИНДИВИДУАЛИЗАЦИИ В ПСИХОЛОГИИ</i>	59
Г. АРУТЮНЯН <i>СОВРЕМЕННЫЕ ТЕНДЕНЦИИ В ВОПРОСАХ ЛИДЕРСТВА</i>	80
Политология	90-114
Т. ТОРОСЯН А. ВАРДАНЯН <i>КУДА ВЕДУТ ДОРОГИ "ЦВЕТНЫХ" РЕВОЛЮЦИЙ?</i>	90
М. МАРГАРЯН <i>ПРАВЯЩАЯ ЭЛИТА В ПРОЦЕССЕ ДЕМОКРАТИЧЕСКОГО ТРАНЗИТА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ</i>	102
Обзор книг	115-116
Памятка автору	117-118

CONTENT

Public Administration	6-19
<hr/> <hr/>	
Y. SUVARYAN <i>PUBLIC POLICY: METHODOLOGY, ANALYSIS, AND STRUCTURE</i>	6
Law	20-44
<hr/> <hr/>	
A. HARUTYUNYAN <i>SOURCES OF EUROPEAN LAW ON FUNDAMENTAL HUMAN RIGHTS</i>	20
A. GHAMBARYAN <i>CONSTITUTIONAL-LEGAL RESPONSIBILITY IN THE SYSTEM OF LEGAL RESPONSIBILITY</i>	33
Economics (management)	45-58
<hr/> <hr/>	
V. KHACHATRYAN <i>METHODOLOGICAL PROBLEMS OF EVALUATION PUBLIC ADMINISTRATION EFFECTIVENESS OF ECONOMY</i>	45
Psychology	59-89
<hr/> <hr/>	
S. HARUTYUNYAN <i>PROBLEMS OF SOCIALIZATION AND INDIVIDUALIZATION IN PSYCHOLOGY</i>	59
G. HARUTYUNYAN <i>CONTEMPORARY TENDENCY ON THE LEADERSHIP ISSUES</i>	80
Political science	90-114
<hr/> <hr/>	
TIGRAN TOROSYAN, ARAXIA VARDANYAN <i>WHERE DO THE PATHS OF "COLOURED" REVOLUTIONS LEAD?</i>	90
MARIAM MARGARYAN <i>THE RULE ELITE IN THE PROCESS OF DEMOCRATIC TRANSITION OF THE REPUBLIC OF ARMENIA</i>	102
The review of books	115-116
<hr/> <hr/>	
Instruction to the author	. 117-118
<hr/> <hr/>	

ՅՈՒ. Մ. ՍՈՒՎԱՐՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

**ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ՍԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ,
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

Հանրային կառավարումը՝ իբրև նոր ժամանակներում հասարակական կյանքի կառավարման տարատեսակ և արդեն իրողություն, ունի որոշակի գործառույթներ, որոնցից հիմնականներն են նպատակադրումը, կազմակերպումը, շահադրդումը և վերահսկողությունը: Գոյություն ունեն նաև հատուկ գործառույթներ, որոնք վերաբերում են պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական-քաղաքական կազմակերպությունների ոլորտային որոշակի գործունեությանը (տնտեսական, սոցիալական, քաղաքական, բնապահպանական, պաշտպանական, ինտեգրաման և այլն):

Նպատակադրման գործառույթն արտացոլում է հանրային կառավարման մարմինների քաղաքականությունը որոշակի ժամանակահատվածում լուծելու գործունեության բնույթով պայմանավորված կամ առաջացած հիմնախնդիրները: Արդի ընկալմամբ՝ քաղաքականության մշակման ու իրականացման գործընթացը բնորոշվում է որպես քաղաքականության վերլուծություն:

**1. ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ,
ԲՆՈՐՈՇ ԳԾԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ**

Քաղաքականությունը՝ իբրև գիտական կատեգորիա և հասարակական երևույթ, մշտապես ուղեկցել է մարդկային հասարակությանը, հանդիսացել գիտական հետաքրքրությունների ոլորտ, հանրային կյանքն ուղղորդող և միաժամանակ այն արտացոլող դժվարընկալելի իրողություն:

Գիտական գրականության մեջ գոյություն ունեն քաղաքականության տարբեր մեկնաբանություններ, որոնք դասակարգվում են սոցիոլոգիական, տնտեսագիտական, բարոյագիտական, սուբստանցիոնալ (էական), ինստիտուցիոնալ, գործընթացային խմբերի [1, էջ 15-16, 2, էջ 39-48]:

Քաղաքականության էության **սոցիոլոգիական** ըմբռնումը հանրային ռեսուրսների տնօրինման հնարավորության համար մարդկանց խմբերի (ըստ մարքսիստների՝ նաև դասակարգերի և ազգերի) պայքարը և մրցակցությունն է:

Ըստ **տնտեսագիտական** մեկնաբանության՝ քաղաքականությունը «տնտեսության խտացված արտահայտությունն է», դրա պահանջ-մունքների և շահերի արտացոլումը: Այս մեկնաբանությունն ավելի բնորոշ է մարքսիզմին, ըստ որի «քաղաքականությունը, քաղաքական գաղափարները, քաղաքական հաստատությունները, ինստիտուտները, քաղաքական հարաբերությունները համապատասխան տնտեսական բազիսի վերնաշենքի կարևոր բաղկացուցիչ մասն են» [3, էջ 388-389]:

Բարոյագիտական առումով քաղաքականությունը հանրային բարեկեցության հասնելուն ուղղված գործունեություն է, որը հիմնվում է մարդկային հասարակության բարոյական սկզբունքների, արժեքների (արդարության, խաղաղության, ազատության և այլն) և նպատակների ընդունման ու իրականացման անհրաժեշտության վրա: Այս մեկնաբանությունը ձևավորվել է վաղնջական ժամանակներում: Դրա հեղինակներից է Արիստոտելը (մ. թ. ա. 384-322 թթ.):

Քաղաքականությունը՝ ըստ **սուբստանցիոնալ** մոտեցման, իշխանությունը գրավելուն, կամ դրա բաշխմանը մասնակցելուն, պահպանելուն և օգտագործելուն ուղղված գործողությունների ամբողջություն է: Սույն մեկնաբանության հեղինակներից են Ն. Մաքիավելին, Մ. Վեբերը:

Ինստիտուցիոնալ մեկնաբանմամբ քաղաքականությունն իշխանության ինստիտուտների, առաջին հերթին՝ պետության, ինչպես նաև քաղաքական կուսակցությունների ու միավորումների գործունեության ուղղությունների որոշումը և դրա իրականացմանը մասնակցությունն է:

Քաղաքականության էությունը՝ ըստ **գործընթացային** մոտեցման, հանրության համար ընդհանուր և պարտադիր որոշումների նախապատրաստման, ընդունման և իրականացման գործընթացն է:

Անշուշտ, քաղաքականության վերը բերված բնորոշումները դիտարկում են այն տարբեր հայեցակետերից՝ կարևորելով բարոյ և բազմիմաստ կատեգորիայի այս կամ այն էական հատկանիշը:

Սակայն, դրանք միաժամանակ մատնանշում են քաղաքականության էության կարևորագույն բաղադրիչները. նպատակները՝ մարդկանց խմբերի մրցակցությունը ռեսուրսները տնօրինելու, ինչպես նաև հանրության պահանջմունքները, շահերը և բարեկեցությունը կարևորելու համար, միջոցները՝ իշխանությունը և դրա ինստիտուտները գրավելը, որոշումների ընդունումը և դրանց իրականացման ապահովումը:

Գոյություն ունեն նաև քաղաքականության առավել ամբողջական բնութագրումներ: Մասնավորապես, դրանցից է հետևյալ ձևակերպումը. «քաղաքականությունը սոցիալական խմբերի և անհատների գործունեությունն է գիտակցելու և ներկայացնելու սեփական հակադիր կոլեկտիվ շահերը, մշակելու ողջ հասարակության համար պարտադիր որոշումներ, որոնք կարող են իրագործվել պետական իշխանության միջոցով» [2, էջ 48]:

Հայ քաղաքագիտական գրականության մեջ քաղաքականության էությունը մեկնաբանվում է երկու մոտեցումներով.

- իբրև գործունեություն անհատների, սոցիալական խմբերի, հասարակական ինստիտուտների հարաբերությունների բնագավառում իրենց շահերը պաշտպանելու համար,

- պայքար իշխանության համար:

Միաժամանակ, որպես ամփոփ բնորոշում, նշվում է, որ «քաղաքականությունը հասարակական հարաբերությունները կարգավորող, վերահսկող գործունեություն է, որն ընդգրկում է էկոնոմիկան, գաղափարախոսությունը, իրավունքը, հոգևոր ու կրոնական կյանքի ոլորտները» [4, էջ 6]:

Բերված բնորոշումները թերի են նրանով, որ լրիվ չեն ընդգրկում քաղաքականության էության համար կարևոր բաղադրիչները՝ նպատակը, անհրաժեշտ ռեսուրսները և տեխնոլոգիան:

Մեր կարծիքով, այդ առումով առավել ընդգրկում է քաղաքականության հետևյալ սահմանումը. այն քաղաքական կազմակերպությունների և մարդկանց խմբերի գործունեությունն է սեփական ու մարդկանց բարեկեցության ապահովման նպատակով հանրային ռեսուրսները տնօրինելու և իշխանության ինստիտուտների միջոցով հասարակության համար պարտադիր որոշումներ ընդունելու ու դրանց իրագործումն ապահովելու համար:

Ի սկզբանե քաղաքականության էությունն ու գործառույթները դիտարկվել են պետության հետ փոխառնչություններում և այդ առումով քաղաքականությունը մեկնաբանվել է գերազանցապես իբրև պետական քաղաքականություն:

Սակայն XIX դարի վերջին և XX դարի ընթացքում աստիճանաբար պետությունը կորցնում է քաղաքականության մշակման և իրականացման միակ միջոց լինելու նշանակությունը [1, էջ 19), առաջանում են քաղաքականության նոր ինստիտուտներ, պետական կառավարումը վերածում է հանրային կառավարման, իսկ պետական քաղաքականությունը՝ հանրային քաղաքականության:

Ըստ այդմ՝ հանրային քաղաքականությունը ստանում է նորացված բովանդակություն և տեխնոլոգիաներ (կառուցակարգեր), դրսևորման նոր ձևեր և գործընթացներ:

Հանրային քաղաքականության արդի տեսաբաններից մեկի՝ Լ. Ա. Փալի բնորոշմամբ՝ «հանրային քաղաքականությունը հանրային իշխանությունների կողմից ընտրված գործողությունների կամ հակագործողությունների ամբողջությունն է՝ ուղղված տվյալ հիմնախնդրի կամ դրա հետ կապված հիմնախնդիրների լուծմանը» [5, էջ 36]:

Գոյություն ունեն մասնավորապես՝ «դերակատարների (սուբյեկտների) կամ դերակատարների խմբի նպատակային գործողությունները հիմնախնդիրը կամ հիմնախնդրային հարցը լուծելու ընթացքում» [6, էջ 5]:

Մեկ այլ բնորոշմամբ՝ «պետական (հանրային) քաղաքականությունը նպատակների, խնդիրների, գերակայությունների, ռազմավարական ծրագրերի և պլանային միջոցառումների ամբողջություն է, որոնք մշակվում և իրագործում են պետական ու մունիցիպալ իշխանության մարմինները՝ քաղաքացիական հասարակության ինստիտուտների ներգրավմամբ» [7, էջ 17]:

Հաշվի առնելով բերված սահմանումների ընդհանուր բնույթը՝ հանրային քաղաքականության էությունն առավել որոշակի կարող է բնութագրվել հետևյալ կերպ. հանրային քաղաքականությունը հանրային կառավարման մարմինների գործունեությունն է հանրության բարեկեցության ապահովման նպատակով առկա ռեսուրսները տնօրինելու և իշխանության հանրային ինստիտուտների միջոցով ու բնակչության մասնակցությամբ հասարակության համար պարտադիր որոշումներ ընդունելու ու դրանց իրագործումն ապահովելու համար:

Հանրային քաղաքականության հիմնական գործառույթներն են [2, էջ 52, 1, էջ 20].

- հասարակության ինտեգրումը, հասարակական կարգի և կազմակերպվածության ապահովումը,

- հասարակության և դրա կուլեկտիվ սուբյեկտների ընդհանուր նպատակների սահմանումը, ինչը դրսևորվում է պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական-քաղաքական կազմակերպությունների ծրագրերի ձևով և այդ նպատակների իրականացման համար մարդկանց գործունեության կազմակերպումն ու ռեսուրսների մոբիլիզացումը,

- դեֆիցիտային արժեքների և բարիքների ավտորիտար ու բոլորի համար պարտադիր բաշխումը, ինչն իրագործվում է գլխավորապես պետական և մունիցիպալ բյուջեների ընդունման միջոցով,

- խմբային կոնֆլիկտների կանխումը և կարգավորումը,

- սոցիալական սուբյեկտների լիազորությունների և պարտականությունների օրենսդրանորմատիվային կարգավորումը, որը թվարկված գործառույթների իրականացման իրավական հիմքն է:

Հանրային քաղաքականությունը դրսևորվում է դրա կազմակերպական կառուցվածքը կազմող քաղաքականության ինստիտուտների՝ պետության, տեղական ինքնակառավարման համակարգի, քաղաքական կուսակցությունների, սոցիալական խմբերի, զանգվածային լրատվության միջոցների գործունեությամբ և այդ ամենի հիմքը հանդիսացող օրենսդրանորմատիվային ակտերի բովանդակությամբ:

2. ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՍՈՂԵԼՆԵՐԸ

Քաղաքականությունը քաղաքագիտության՝ իբրև գիտաճյուղի, հետազոտության առարկան է: Քաղաքագիտությունը գիտություն է քաղաքականության, դրա և մարդկանց ու հասարակության փոխառնչությունների մասին: Ժամանակակից քաղաքագիտության մեջ առանձնանում են երկու մակարդակներ՝ **տեսական (հիմնարար) և կիրառական (գործնական)** [2, էջ 34]: Արևմտյան գիտական գրականության մեջ քաղաքագիտության երկու մակարդակները կամ հատվածներն անվանվում են **քաղաքականության հետազոտություն և քաղաքականության վերլուծություն** [6, էջ 8]: Այս երկու տարբերակումները չունեն իմաստային տարբերություններ: Եթե տեսական քաղաքագիտությունը կամ քաղաքականության հետազոտությունն ակադեմիական գիտություն է և զբաղվում է քաղաքականության տեսական-մեթոդաբանական հիմնախնդիրներով, ապա կիրառական քաղաքագիտությունը կամ քաղաքականության վերլուծությունը կոչված է որոշակի քաղաքական իրավիճակների հաշվառմամբ նախագծելու և իրագործելու իրական կամ գործնական քաղաքականություն քաղաքական ինստիտուտների համար: Անշուշտ, քաղաքականության վերլուծությունը հենվում է տեսական քաղաքագիտության ձևակերպված օրինաչափությունների, մշակած մեթոդաբանության վրա, որոնք ունեն համընդհանուր բնույթ: Կիրառական քաղաքագիտության յուրահատկությունն այն է, որ դրա որոշակի մեթոդաբանությամբ ընդհանրացրած տեղեկատվությունը, կանխատեսումային հաշվարկները և մշակած երաշխավորություններն ունեն երկու սահմանափակում՝ վերաբերում են **որոշակի իրավիճակի և ընդգրկում են սահմանափակ ժամանակահատված:**

Ընդհանուր առմամբ, քաղաքագիտությունը, ինչպես հայտնի է, բազմաշերտ է (դրա կազմավորման հիմք են հանդիսացել քաղաքական փիլիսոփայությունը, իրավագիտությունը, տնտեսագիտությունը, սոցիոլոգիան) և օգտագործում է ինչպես նշված գիտություններին բնորոշ մեթոդները, այնպես էլ հիմնախնդիրների հետազոտության սեփական մեթոդներն [4, էջ 21-25] ու մոդելները: Քաղաքականության վերլուծությունն առանձնանում է նաև նրանով, որ ընդհանուր մեթոդաբանության հիմքի վրա այն ուղղորդված է դեպի առաջացած կամ պոտենցիալ **հիմնախնդիրների լուծումը: Հիմնախնդիր – լուծում** կապը քաղաքականության վերլուծության կամ որ նույնն է՝ կիրառական քաղաքագիտության առանցքային առանձնահատկություններից է: Օրինակ՝ ներկայումս անցման փուլում գտնվող կամ այն նոր հաղթահարած երկրներում, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետությունում արդիական է բնակչության աղքատության հաղթահարման բազմաբնույթ հիմնախնդիրը: Քաղաքագիտությունը, նաև տնտեսագիտությունը, սո-

ցիոլոգիան, կարող են բնութագրել աղքատությունը, այն ծնող պատճառները: Սակայն, քաղաքականության վերլուծության խնդիրն այն է, որ ոչ միայն որոշակի իրավիճակում բացահայտվի հիմնախնդիրը, ներկայացվեն այն պայմանավորող պատճառները, այլ նաև մշակվեն և առաջարկվեն հիմնախնդրի լուծման գործողությունների ծրագիր, ռեսուրսներով հիմնավորված միջոցառումներ, որոնք որոշակի ժամանակաընթացքում պետք է ապահովեն հստակ և քանակապես արտահայտված արդյունքներ: Քաղաքականության վերլուծության հաջորդ տարբերիչ առանձնահատկությունը տեսական քաղաքագիտությունից այն է, որ հիմնախնդրի առաջարկվող հնարավոր լուծումը պետք է համապատասխանի որոշակի **արժեքային համակարգի, նորմաների**, որոնք ունեն չափանիշի նշանակություն և ընդունված են տվյալ հասարակությունում կամ սոցիալական խմբում: Հաճախ այդ արժեքները և նորմաներն արտացոլվում են իշխանության ինստիտուտների ընդունած ռազմավարական հայեցակարգերում, սահմանադրական և այլ օրենսդրանորմատիվային ակտերում:

Այսպիսով, Լ. Փալի ձևակերպմամբ՝ «քաղաքականության վերլուծությունը մտքի կանոնակարգված կիրառումն է հանրային հիմնախնդիրների լուծման մեջ» [5, էջ 35]:

Գոյություն ունեն նաև քաղաքականության վերլուծության այլ սահմանումներ: Օրինակ՝ ըստ ամերիկյան տեսաբան Ու. Ն. Դանի՝ «քաղաքականության վերլուծությունը տարբեր գիտությունների վրա հիմնված հետազոտություն է, որը նախատեսված է ստեղծելու, քննադատաբար գնահատելու և փոխանցելու տեղեկատվությունը, որն օգտակար է քաղաքականությունը հասկանալու և կատարելագործելու համար» [8, էջ 1-2]:

Հանրային քաղաքականության վերլուծությունն իբրև գործընթաց կարող է դիտարկվել ըստ դրա իրականացման մակարդակների, ոլորտների և ճյուղերի:

Հանրային քաղաքականության վերլուծությունն իրագործվում է հետևյալ երեք մակարդակում.

- **մակրոմակարդակ**, որը ներառում է երկրի պետական իշխանության մարմինների կողմից իրագործվող քաղաքականությունը,

- **միկրոմակարդակ**, որը բովանդակում է տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մարմինների գործունեությունը, ինչպես նաև առանձին կազմակերպությունների՝ կուսակցությունների, հասարակական միավորումների, ՁԼՄ-ների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների կողմից իրագործվող քաղաքականությունը,

- **մեզամակարդակ**, որն արտահայտում է միջազգային կազմակերպությունների՝ ՄԱԿ-ի, Եվրամիության, Հյուսիսատլանտյան դաշինքի, Համաշխարհային բանկի, Արժույթի միջազգային հիմնադրամի և նման այլ կառույցների գործունեությունը:

Հանրային քաղաքականության վերլուծության **ոլորտներ** են.

- պետաիրավական քաղաքականությունը,
- տնտեսական քաղաքականությունը, դրա գերակայությունները,
- սոցիալական քաղաքականությունը,
- արտաքին քաղաքական ու տնտեսական հարաբերությունները,
- հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունը,
- տարածքային քաղաքականությունը,
- բնապահպանական քաղաքականությունը:

Անհրաժեշտաբար հանրային քաղաքականության վերլուծությունն ընդգրկում է նաև տնտեսության առանձին ճյուղերում վարվող քաղաքականությունը, մասնավորապես՝ արդյունաբերական և ագրարային քաղաքականությունը, ծառայությունների (տրանսպորտ, կապ, կրթություն, առողջապահություն, զբոսաշրջություն, առևտուր և այլն) ոլորտի գործունեությանն առնչվող հիմնախնդիրների լուծումը:

Հանրային քաղաքականության վերլուծության գործընթացն իրագործելու առումով տարբերում են երկու խումբ մոդելներ. առաջինը վերաբերում է քաղաքականության վերլուծության կազմակերպմանը, իսկ երկրորդ խումբն ընդգրկում է հիմնախնդիրների լուծման համար կիրառվող մոդելները:

Առաջին խումբը ներառում է չորս մոդել [7, էջ 38]:

Դրանցից առաջինը «վերևից – ներքև» մոդելն է, երբ հիմնախնդիրների լուծման վերաբերյալ որոշումներն ընդունվում են կառավարման բարձր մակարդակներում, այնուհետև դրանք հասցեագրվում են կառավարման միջին և ստորին մակարդակներին, որոնք իբրև կատարողներ իրագործում են ընդունված որոշումները կամ մշակված ծրագրերը:

Հաջորդը «ներքևից – վերև» մոդելն է: Ըստ այդմ՝ հիմնախնդիրների լուծման տարբերակների որոնումը սկսվում է կառավարման ստորին և միջին օղակներում: Նրանք առաջարկում են հիմնախնդրի լուծման ուղիները, որոնք ընդհանրացվում են կառավարման բարձր մակարդակում և հաշվի առնելով ստորին և միջին օղակներից ստացված առաջարկությունները, մշակվում է և իրագործվում որոշակի քաղաքականություն:

Երրորդը «կենտրոնացված մոդելն» է, որը նման է առաջինին: Ըստ այդ մոդելի՝ քաղաքականությունը մշակում է կառավարման ապարատն առանց հաշվի առնելու քաղաքականության օբյեկտների մոտեցումները, առաջարկությունները:

Չորրորդ մոդելն անվանվում է ժողովրդավարական, որի դեպքում քաղաքականությունը մշակվում է մասնակցային սկզբունքով, հաշվի են առնվում քաղաքացիների, հասարակական կազմակերպությունների առաջարկություններն ու նախաձեռնությունները, այսինքն՝ քաղա-

քականության օբյեկտները մասնակցում են պարտադիր որոշումների ընդունմանը:

Սողելների երկրորդ խումբն ընդհանուր առմամբ բնութագրում է յուրաքանչյուր հիմնախնդրի պատճառահետևանքային կապերը: Քաղաքականության մոդելավորումը, ըստ Լ. Փալի, հիմնախնդրի գծով աշխատանքներ տանելու համար ամենահամապատասխան գործիքի ընտրության գործընթացն է [5, էջ 182]: Իսկ քաղաքականության մոդելներն իրավիճակային հիմնախնդրի տարբեր կողմերի՝ հնարավոր արդյունքների (նպատակների) և դրանք պայմանավորող գործոնների կապի արտահայտությունն են: Քաղաքականության մեջ կիրառվող մոդելները բաժանվում են երկու խմբի՝ նկարագրական և նորմատիվային [8, էջ 87]:

Նկարագրական մոդելները բացատրում են քաղաքականության կամ հիմնախնդրի լուծման այս կամ այն տարբերակի պատճառներն ու հնարավոր արդյունքները, ինչպես նաև օգտագործվում են գործողությունների ծրագրի արդյունքների ընթացիկ վերահսկողության նպատակով: Այդ մոդելները նաև արդյունավետ միջոց են կանխատեսումային հաշվարկների համար: Այդպիսի մոդելներից են հանրահայտ Կորբ-Դուգլասի արտադրական ֆունկցիան, միջճյուղային հաշվեկշռի ստատիկ և դինամիկ մոդելները, անվճարաբերության գրաֆիկը, կորելացիոն-ռեգրեսիոն մոդելները և այլն:

Նորմատիվային մոդելներն ավելի ունիվերսալ են: Դրանք ոչ միայն արտահայտում են հիմնախնդրի պատճառահետևանքային կապերը, ուստի ունեն նկարագրական բնույթ, կարող են օգտագործվել կանխատեսումային հաշվարկների համար, այլև հնարավորություն են ընձեռում հիմնախնդրի լուծման հնարավոր տարբերակներից որոշակի չափանիշներով (նորմաներով) կատարել լավագույնի (օպտիմալի) ընտրություն: Նման մոդելներից են հանրահայտ տրանսպորտի խնդիրը, բարդ տոկոսների բանաձևը, պաշարների օպտիմալ չափի որոշման մոդելը և այլն: Ի դեպ, նկարագրական մոդելների հիման վրա որոշակի օպտիմալության չափանիշի և սահմանափակումների գործադրմամբ կարելի է կառուցել նորմատիվային մոդել: Իբրև օրինակ դիտարկենք արտադրական ֆունկցիան:

Եթե դրա նկարագրական տեսքին՝ $P = T^\alpha \cdot K^\beta$, ավելացնենք օպտիմալության չափանիշը՝ $P \rightarrow \max$, սահմանափակումները՝

$$T \leq M, K \leq N, \beta < 1, \alpha < 1, \text{ որտեղ}$$


M և N -ն աշխատողների թվի և կապիտալի սահմանային մեծություններն են, ապա կստանանք արտադրական ֆունկցիայի նորմատիվային մոդելը:

Յուրօրինակ մոդել է նաև հանրային քաղաքականության մշակման տրամաբանական մոդելը:

Հանրային քաղաքականության վերլուծության՝ իբրև կիրառական գիտաճյուղի համար, որի առանցքը, ինչպես նշվեց, «հիմնախնդիր-լուծում» մոդելն է, չափազանց կարևորվում է որոշակի քաղաքականության մշակման և դրա իրականացման ապահովման տրամաբանությունը և մեթոդաբանությունը: Վերջինս բովանդակում է հանրային քաղաքականության մշակման սկզբունքները և մեթոդները: Տրամաբանությունը, որը հաճախ դիտարկվում է իբրև քաղաքականության պարբերաշրջան, բաղկացած է 6 հաջորդական փուլերից (**տե՛ս գծանկար 1**), որոնք գտնվում են փոխադարձ կապի մեջ: Ի դեպ՝ յուրաքանչյուր նախորդ փուլ բովանդակում է անհրաժեշտ տեղեկություններ հաջորդ փուլի համար, իսկ փուլային տրամաբանությունը չի բացառում ըստ անհրաժեշտության վերադարձը նախորդ փուլերին՝ հիմնախնդրի բնութագրության, ներքին և արտաքին միջավայրի գործոնները վերագնահատելու, այլընտրանքային տարբերակները վերստին դիտարկելու համար, այսինքն՝ մշակման գործընթացը, ըստ էության, ունի իտերատիվ բնույթ, ինչն ուղղված է քաղաքականության լավագույն տարբերակի ընտրությանը:

Քաղաքականության մշակման տրամաբանության կարևոր բաղադրիչներից է հետադարձ կապի ապահովումը, որի նպատակը սահմանված հիմնախնդրի (նպատակի) ու դրա կենսագործման արդյունքների համադրումն է և ըստ անհրաժեշտության նպատակի ճշգրտումը կամ քաղաքականության իրականացման կազմակերպական բարելավումը: Որոշ դեպքերում քաղաքականության իրականացման արդյունքները շեղվում են նախապես սահմանված նպատակներից, ինչը կարող է լինել կամ նպատակների (քաղաքականության) անբավարար հիմնավորվածության կամ քաղաքականության իրականացման ընթացքում տեղ գտած կազմակերպական թերությունների հետևանք: Նման շեղումները բացահայտվում են քաղաքականության մոնիտորինգի շնորհիվ, իսկ հետադարձ կապը հնարավորություն է ընձեռում դրանք հաղթահարել:

Քաղաքականության մշակման փուլերը



Հանրային քաղաքականության մշակման փուլային տրամաբանությունը մեթոդաբանական առումով համապիտանի բնույթ ունի: Այն կարող է կիրառվել միկրո-, մակրո- և մեզա-մակարդակներում, ըստ ոլորտների և ճյուղերի քաղաքականության մշակման համար: Անշուշտ, տարբեր ոլորտներում, ճյուղերում ու մակարդակներում քաղաքականության մշակումը և իրականացման ապահովումը կարող են ունենալ մեթոդական որոշ յուրահատկություններ: Օրինակ՝ հիմնախնդիրների բնույթը, ներքին և արտաքին միջավայրերի գործոնները, քաղաքականության այլնտրանքները, ընտրված քաղաքականության իրականացումը մասշտաբների, բովանդակության, քաղաքականության նշանակության, դրսևորման ձևերի առումներով յուրահատուկ են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման քաղաքականության համար: Դրա հետ մեկտեղ՝ ընդհանուր են քաղաքականության մշակման մեթոդաբանությունը և փուլերը:

Քաղաքականության վերլուծության կարևորագույն փուլերից է դրա գնահատումը: Այն ստացված որոշակի արդյունքների՝ ապրանքների, ծառայությունների և ազդեցությունների ու սահմանված նպատակների համադրումն է և հետապնդում է երկու հիմնական խնդիրների լուծում.

- քաղաքականության իրականացման շնորհիվ ձեռք բերած արդյունքների համակողմանի բնութագրում,

- նոր ժամանակի, այսինքն՝ ապագա քաղաքականության մշակման նպատակով նվաճված մակարդակի, կանխատեսման սկզբունքների, քաղաքականության գործողությունների իրականացման մեթոդների վերլուծություն և թերությունների բացահայտում և ելակետային վիճակի բնութագրություն:

Այդպիսով ապահովվում է հետադարձ կապն իրագործվող քաղաքականության արդյունքների, դրա իրականացման կառուցակարգի և նորի մշակման ու կենսագործման մեթոդաբանության և սկզբունքների միջև:

Կարևորելով գնահատման գործընթացի նշանակությունը՝ ընդգծվում է, որ «Գնահատումն առավելապես ջանք է՝ որոշելու համար քաղաքականության կամ ծրագրի արժեքը կամ հասարակական օգտակարությունը և ոչ թե հասարակ ջանք՝ տեղեկատվություն հավաքելու քաղաքականության գործողությունների սպասվելիք և անսպասելի արդյունքների վերաբերյալ [8, էջ 357]:

Մեկ այլ մոտեցմամբ՝ «Գնահատումն ավարտված կամ իրականացման փուլում գտնվող պետական քաղաքականության (կամ ծրագրերի) փաստացի արդյունքների ուսումնասիրության ու չափման մեթոդների և կառուցակարգերի ամբողջությունն է՝ դրա կատարելագործման նպատակով» [7, էջ 329]:

Սոցիոտրոփնոզը և գնահատումը, թեև ունեն ընդհանրություններ, սակայն տարբերվում են միմյանցից: Ինչպես նշվել է, սոցիոտրոփնոզը դիտարկում է քաղաքականության իրականացման ընթացքը՝ առավելա-

պես կարևորելով միջանկյալ արդյունքները և նպատակների իրականացման ապահովումը: Այլ կերպ ասած՝ մոնիտորինգը նախնական ու ընթացիկ վերահսկողությունն է: Քաղաքականության իրականացման նպատակով ներգրավվում են նյութական և աշխատանքային այնպիսի ռեսուրսներ, որոնք համապատասխանում են ակնկալվող վերջնական արդյունքներին: Բյուջեն նույնպես նախնական վերահսկողության ձև է: Ընթացիկ վերահսկողությունը, ինչը մոնիտորինգի առանցքն է, ուղղված է քաղաքականության իրականացման ապահովմանը: Գնահատումը, ի տարբերություն մոնիտորինգի, վերաբերում է քաղաքականության վերջնական արդյունքներին, ինչպես նաև դրա կատարելագործմանը, մասնավորապես՝

- ընդունվող կառավարչական որոշումների գիտական հիմնավորվածության բարձրացմանը,
- հանրային քաղաքականության բովանդակության հարստացմանը, այն հանրության իրական պահանջմունքներին համապատասխանեցմանը,
- քաղաքականության իրականացման մեթոդների և միջոցների զարգացմանը,
- քաղաքական ինստիտուտների գործունեության և նրանց կողմից իրականացվող քաղաքականության արդյունավետության բարձրացմանը:

Գնահատման համար կարևորվում են քաղաքականության գործողությունների և արդյունքների քանակական ու որակական արտահայտման ցուցանիշները: Քաղաքականության նախագծման-մոնիտորինգի-գնահատման եռմիասնական գործընթացների նպատակը նույնն է՝ որոշակի քաղաքական, տնտեսական, սոցիալական արդյունքների ստացումը, ուստի նպատակահարմար է, որ այդ գործընթացների բնութագրման ցուցանիշները լինեն միասնական, միջանցիկ ու համադրելի: Այս պահանջները հարկ է հաշվի առնել ցուցանիշների նախագծման ժամանակ, քանի որ միայն համադրելի ու միջանցիկ ցուցանիշներով կարելի է իրականացնել քաղաքականության մոնիտորինգն ու գնահատումը:

Հանրային քաղաքականության գնահատման բարձր արդյունավետությունն ապահովելու համար անհրաժեշտ է առանձնացնել քաղաքականության բաղադրիչները՝ դրանք գնահատելով առանձին-առանձին: Ըստ այդմ կարող են գնահատվել.

- քաղաքական ընդհանուր ռազմավարությունը, դրա հաապատասխանությունը հանրության պահանջմունքներին,
- քաղաքականության իրականացմանը հատկացված ռեսուրսները, դրանց օգտագործումը,
- քաղաքականության արդյունքները՝ ապրանքները, ծառայությունները և հասարակական երևույթների ու գործընթացների վրա քաղաքականության ազդեցությունը,

▪ քաղաքականության իրականացման մեթոդների ու միջոցների արդյունավետությունը,

▪ քաղաքական ինստիտուտների գործունեության արդյունավետությունը քաղաքական ռազմավարության իրականացման գործընթացում:

Հանրային քաղաքականությունը գնահատվում է զանազան մեթոդներով: Դրանցից առաջինը քաղաքականության վերջնական արդյունքների և առաջադրված նպատակների համադրումն ու քննական վերլուծությունն է: Այս դեպքում տեղեկատվության աղբյուրը հաշվառման և վիճակագրական տեղեկատվությունն է: Հաջորդ եղանակն ընտրանքային հետազոտություններն են, այդ թվում սոցիոլոգիական ուսումնասիրությունները, փորձագիտական հարցումները: Կարող են կիրառվել նաև տնտեսամաթեմատիկական մոդելավորման եղանակները:

Գնահատումը կարող է կատարվել ավանդական ձևերով, որոնցից են խոհրդարանական լսումները, գործադիր իշխանության տարբեր օղակների ղեկավարների (նախարար, մարզպետ, համայնքի ղեկավար և այլն) հաշվետվությունները, միջգերատեսչական հանձնաժողովների զեկուցումները, ԱԺ վերահսկիչ պալատի աուդիտ-ստուգումները և դրանց վերաբերյալ հաղորդումները, պետական բյուջեի և այլ ծրագրերի կատարման վերաբերյալ հաշվետվությունները:

Հանրային քաղաքականության վերլուծության մեթոդաբանությունը և մոդելները կարևոր նախադրյալներ են արդյունավետ քաղաքականության մշակման ու իրականացման համար:

Գրականություն

1. Политология (ответ. ред. **В. С. Комаровский**), М., изд-во “РАГС”, 2002.
2. **Пугачев В. П.**, Политология, М., изд-во “ЭКМО”, 2003.
3. Հայկական սովետական հանրագիտարան, հ. 12, Ե., 1986:
4. **Բալյան Ի. Ս.** և ուրիշներ, Քաղաքագիտության ներածություն, Ե., Մխիթար Գոշ, 1996:
5. **Leslie A. Pal**, Beyond Policy Analysis: Public Issue Management in Turbulent Times, Third Edition, Scarborough, Nelson Thompson Learning, 2005.
6. **Янг Э., Куинн Л.**, Как написать действенный аналитический документ в сфере государственной политики, Киев, изд-во “К. И. С.”, 2003.
7. **Лобанов В. В.**, Государственное управление и общественная политика. СПб, Питер, 2004.
8. **William N. Dunn**, Public Policy Analysis: An Introduction, Third Edition, Pearson Education, Inc., Upper Saddle River, 2004

YURI SUVARYAN

Doctor of Sciences (Economics), Professor

**PUBLIC POLICY: METHODOLOGY, ANALYSIS,
AND STRUCTURE**

The process of policy making and implementation is considered policy analysis.

The development of a certain policy, as well as logic and methodology of ensuring its implementation is extremely important for the public policy analysis as an applied discipline, with "the problem-solution" model being its core idea. The former contains the principles and methods of public policy making.

The successive phases of policy making are: problem definition, situational evaluation of internal and external environments, identification of policy alternatives, policy evaluation, policy implementation and monitoring, selection from among various alternatives, and policy framing.

ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՍԱՐԴՈՒ
ՅԻՄՆԱՐԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Չնայած իրենց կարևորությանը՝ մարդու հիմնարար իրավունքներն ընդգրկված չեն հիմնադիր պայմանագրերում և միայն վերջերս են սկսել էական ուշադրության արժանանալ Համայնքի իրավունքում, որը պայմանավորված էր նաև Եվրոպական դատարանի՝ մարդու իրավունքների պաշտպանության նկատմամբ որդեգրած դիրքորոշմամբ:

Եվրոպական դատարանի ամենաառաջնահերթ նպատակներից մեկն է եղել Համայնքի իրավունքի կիրառման արդյունավետության ապահովումը, որն իր հերթին հանգեցրել է ազգային իրավունքի նկատմամբ Համայնքի իրավունքի գերակայության հաստատմանը: Եվրոպական համայնքների իրավունքի գերակայության դոկտրինան մասամբ կամ ամբողջությամբ ընդունվել է ազգային դատարանների կողմից, սակայն Համայնքի ստեղծման առաջին իսկ օրերից գերմանացի իրավաբանները միանշանակ մոտեցում չունեին այն հարցի կապակցությամբ, թե արդյոք Համայնքի իրավունքը պետք է գերակայությամբ օժտված լինի Գերմանիայի Հիմնական օրենքի նկատմամբ, և հատկապես այն նորմերի նկատմամբ, որոնք վերաբերում են մարդու հիմնարար իրավունքներին: Գերմանիայի բոլոր օրենքները, այդ թվում՝ դաշնային օրենսդրությունը, պետք է համապատասխանեն Սահմանադրությանը: Գերմանիայի Դաշնային սահմանադրական դատարանը լիազորված է որոշել, թե որքանով է օրենսդրությունը համապատասխանում Սահմանադրությանը: Գերմանիայի ազգային օրենսդրությունը պետք է համապատասխանի Սահմանադրության սկզբունքներին, ուստի զարմանալի չէ, որ որոշ գերմանացի իրավաբանների կարծիքով Համայնքի իրավունքը չի կարող կիրառվել Գերմանիայում, եթե այն հակասում է մարդու հիմնարար իրավունքների վերաբերյալ սահմանադրական դրույթներին: Գերմանիայի պատմության առանձնահատկությունների լույսի ներքո, անկասկած, հասկանալի է գերմանացի իրավաբանների նվիրվածությունը «հիմնական օրենք» հասկացությանը, մասնավորապես՝ մարդու հիմնարար իրավունքների մասով:

Այս տեսակետից հատկանշական է, որ հիմնարար իրավունքների նկատմամբ դատարանի ունեցած մոտեցումը փոքր-ինչ տարբերվում է իրավունքի մյուս ընդհանուր սկզբունքների նկատմամբ ունեցած մոտեցումից: Պատճառն այն է, որ հիմնարար իրավունքների հստակ դոկտրինայի ընդունումը նախ և առաջ պայմանավորված է եղել Համայնքի իրավունքի գերակայության ճանաչման հարցում գերմանական դատարաններին համոզելու ցանկության շնորհիվ: Այնուամենայնիվ, Եվրոպական դատարանը ղեկավարվում է Համայնքի իրավունքի գերակայության սկզբունքով՝ այն չհակադրելով ազգային իրավունքին:

Եվրոպական համայնքներում մարդու իրավունքների հայեցակարգի ձևավորումը մեծապես հիմնվում է այս ոլորտում միջազգային ունիվերսալ և տարածաշրջանային պայմանագրերի վրա: Եթե Համայնքի ակտը հակասում է այն պայմանագրում ամրագրված մարդու իրավունքներին, որին որևէ անդամ պետություն մասնակից է, ապա անդամ պետությունը կարող է չկիրառել այդ ակտն իր տարածքում՝ վախճնալով խախտել պայմանագիրը¹:

Հարկ է հիշել, որ Նոլդի գործում Եվրոպական դատարանը խոսում էր այն պայմանագրերի մասին, որոնցով անդամ պետությունները «համագործակցել» են կամ համարվում են ստորագրող կողմեր: Համաձայն դրա՝ անհրաժեշտություն չկա, որպեսզի անդամ պետությունն իրականում դառնա պայմանագրի մասնակից: Բավարար է միայն մասնակցել բանակցություններին և դրանք հասցնել պայմանագրի կնքման փուլին: Նմանապես հարկ չկա, որ պայմանագրի ստորագրմանն անպայման հաջորդի վավերացումը: Դա բավականին ազատություն է տալիս դատարանին՝ որոնելու իր ուղենիշները:

Այս առումով ամենակարևոր պայմանագիրը Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիան է: Բոլոր անդամ պետությունները դրա մասնակիցներն են, և կասկած չկա, որ կոնվենցիայի կողմից պաշտպանվող իրավունքները Համայնքի մարդու իրավունքներն են: Եվրոպական դատարանը մի շարք առիթներով անդրադարձել է դրան: Մյուս պայմանագրերը, որոնց նա անդրադարձել է, 1961թ. նոյեմբերի 18-ի Եվրոպական սոցիալական խարտիան է և Աշխատանքի միջազգային կազմակերպության 111-րդ կոնվենցիան (25 հունիսի, 1958):

Չնայած Գերմանիայի ազգային դատարանների դիրքորոշումը փոխելու իր բոլոր ջանքերին՝ Եվրոպական դատարանն անմիջապես հաջողության չի հասել: Internationale Handelsgesellschaft գործում Գերմանիան չբավարարվեց Եվրոպական դատարանի վճռով և խնդրան-

¹ Եթե անդամ պետությունը դառնար մարդու իրավունքների պայմանագրի մասնակից նախքան համայնքին միանալը, ապա նա պարտավորված չէր լինի կիրառել համայնքի օրենքն այն աստիճան, որ բախման մեջ մտներ նախորդ պայմանագրի հետ: Տես Եվրահամայնքի պայմանագրի 307-րդ [234-րդ] հոդվածը, ինչը նախատեսում է, որ նման պայմանագրերից ծագող իրավունքներն ու պարտականությունները «չպետք է տուժեն պայմանագրի կետերից»:

քով դիմեց Գերմանիայի սահմանադրական դատարանին՝ վճիռ կայացնելու համար: Սահմանադրական դատարանը նշեց, որ Համայնքի իրավունքում մարդու իրավունքների համակարգված ցանկի բացակայության պարագայում դժվար է որոշել, թե արդյոք մարդու իրավունքների վերաբերյալ Համայնքի չափանիշները համապատասխանում են ազգային Սահմանադրության ներկայացրած պայմաններին: Հետևաբար, սահմանադրական դատարանը պատրաստ չէր վերջնական համարել Եվրոպական դատարանի վճիռը: Այնուհետև, դատարանն ինքնուրույն քննելով հարցը, վճռեց, որ Համայնքի համապատասխան գործողությունը չի խախտում մարդու իրավունքների սահմանադրական դրույթները: Ինչևէ, դրանով հաստատվեց վերջինիս գերակայությունը և հաստատվեց Համայնքի ակտերը Գերմանիայում չկիրառելու հնարավորությունը, եթե դրանք խախտում են սահմանադրական դրույթները: Միայն 1986թ.՝ Wunache Handelsgesellschaft գործի քննության ժամանակ, սահմանադրական դատարանը հայտարարեց, որ այլևս չի վերանայելու Համայնքի ակտերը՝ երաշխավորելով, որ դրանք չեն խախտում մարդու իրավունքները: Բավական էր թողնել դա Եվրոպական դատարանին:

Ամստերդամի պայմանագրով նախատեսված լրացումներն այժմ փաստում են, որ մարդու իրավունքները հարգելը Համայնքին միանալու նախապայմաններից մեկն է, և այն անդամ պետությունը, որը համառորեն անտեսում է դրանք, կարող է զրկվել պայմանագրերով նախատեսված իր որոշ իրավունքներից:

1979թ. հրապարակված մի զեկույցում Հանձնաժողովը Համայնքին պաշտոնապես առաջարկում էր հավատարիմ մնալ Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիային: Հանձնաժողովը մտավախություն ուներ, որ Համայնքի ակտերը կարող էին խախտել կոնվենցիայով պաշտպանվող իրավունքները, կամ էլ այդ ակտերը կարող էին տարբեր կերպ մեկնաբանել Եվրոպական դատարանի ու Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի (որն ստեղծվել էր կոնվենցիայի ներքո) կողմից: Ի պատասխան դրա՝ Խորհուրդը որոշեց ճշտել Եվրոպական դատարանի դիրքորոշումը, թե, արդյո՞ք, Համայնքի համար իրավաբանորեն հնարավոր էր դառնալ կոնվենցիայի մասնակից:

Այդ կապակցությամբ դատարանն ամրագրեց, որ առանց Համայնքի պայմանագրերում լրացում կատարելու համայնքը կոնվենցիային միանալու լիազորություններ չունի:

Այս որոշման ընդունումից հետո Համայնքի իրավունքի և Եվրոպական կոնվենցիայի միջև հակասությունների խնդիրն ավելի սուր բնույթ ստացավ: Քանի որ Համայնքը կոնվենցիայի մասնակից չէ, այն չի կարող պատասխանատվություն կրել դրա պահանջները խախտելու համար, սակայն արդյո՞ք կոնվենցիային մասնակից բոլոր անդամ պետությունները պատասխանատվություն չպետք է կրեն, եթե Համայնքի իրավունքով նրանցից պահանջվող որևէ ակտ խախտում է կոնվենցիայի պայմանները: Սկզբում մարդու իրավունքների Եվրոպական

հանձնաժողովը, որն այժմ գոյություն չունի, դրական դիրքորոշում ուներ այս հարցում՝ ընդունելով, որ կոնվենցիայի որևէ մասնակից իր իրավասության շրջանակներում չի կարող խուսափել մարդու իրավունքների պաշտպանության պատասխանատվությունից լոկ այն պատճառով, որ դրա քայլերը պայմանավորված են միջազգային համաձայնագրով:

Այսօր Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, կարծես, այլ դիրքորոշում ունի: Հիմնարար է Մաթեասն ընդդեմ Միացյալ Թագավորության (Matthews v. United Kingdom) գործով կայացված որոշումը, որտեղ նշված է, որ Միացյալ Թագավորությունը խախտել է կոնվենցիան՝ թույլ չտալով Ջիբրալթարի բնակիչներին մասնակցել Եվրոպական խորհրդարանի ընտրություններին: Այս ընտրությունների անցկացման կարգը սահմանված է Եվրահամայնքի պայմանագրի 138-րդ և Եվրատոմի պայմանագրի 108-րդ հոդվածներով: Եվրոպական խորհրդարանի ընտրություններին մասնակցելու իրավունքն ամրագրված է նաև մեկ այլ ակտում, որն անդամ պետությունների կողմից վավերացվեց որպես պայմանագիր, և, չնայած դրա իրավական կարգավիճակի վերաբերյալ որոշ հակասությունների առկայությանը, այն համարվում է Համայնքի պայմանագրերի դրույթները մանրամասնեցնող լավագույն ակտը: Այս ակտը նախատեսում է, որ այն պետք է կիրառվի Միացյալ Թագավորության նկատմամբ՝ այդպիսով բացառելով Ջիբրալթարը: Դրա հետևանքը հանդիսացավ այն, որ Համայնքի իրավունքը պայմանագրային պարտավորության տեսքով արգելեց Միացյալ Թագավորությանը ճանաչել խորհրդարանական ընտրություններին մասնակցելու Ջիբրալթարի բնակչության իրավունքը:

Փաստորեն, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի այս վճիռը հիմք հանդիսացավ այնպիսի պրակտիկայի ձևավորման համար, որը չի բացառում Եվրոպական համայնքների անդամ պետությունների պատասխանատվությունը նույնիսկ այն դեպքում, երբ վերջիններս ղեկավարվել են Համայնքի շրջանակներում կնքված որևէ պայմանագրով և անշեղորեն պահպանել դրա դրույթները: Սրանում արտացոլվում է Համայնքի իրավունքի նկատմամբ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի առաջնայնությունը ճանաչելու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումը [1, էջ 135-146]:

2000թ. դեկտեմբերի 7-ին Եվրոպական խորհրդարանը, խորհուրդը և Հանձնաժողովը «հանդիսավոր հռչակեցին» Եվրամիության հիմնարար իրավունքների խարտիան: Խարտիան ներկայումս դեռ չունի իրավաբանական ուժ, սակայն Եվրոպական դատարանը, ամեն դեպքում, հաշվի կառնի դրա դրույթները որոշումներ կայացնելիս:

Եվրոպական համայնքներում և Եվրոպական Միությունում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում արձանագրված դրական տեղաշարժերն առաջին անգամ ցույց տվեցին ազգային սահմանադրական ավանդույթների և Մարդու իրավունքների եվրոպական Կոն-

վեցնցիայի հիմնական սկզբունքների վրա հիմնված իրավական դոկտրինայի էական դերը: Այս տեսակետից պետք է նշել, որ հիմնադիր պայմանագրերում արտացոլված դրույթները գտնվում են մշտական զարգացման մեջ՝ նպատակ ունենալով ամրապնդել պաշտպանության նորմատիվային շրջանակները:

Տարիների ընթացքում համայնքների շրջանակներում նախատեսվեց և ստեղծվեց հիմնական իրավունքների գրավոր կատալոգ՝ ներառելով Մարդու իրավունքների եվրոպական Կոնվենցիայում ամրագրված հիմնական իրավունքները և ազատությունները:

Այսպես, Եվրոպական համայնքներում ճանաչվում են հետևյալ իրավունքները և ազատությունները.

- ազգային խտրականության արգելման սկզբունքը՝ հատկապես, կարևորելով եվրոպական քաղաքացիների հավասարության իրավունքը,
- մտքի, խղճի և կրոնի ազատությունը,
- արտահայտվելու ազատությունը,
- անձնական կյանքի պաշտպանության իրավունքը,
- արհմիութենական ազատության իրավունքը և գործադուլի իրավունքը,
- միավորվելու ազատությունը, միավորումներ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքը,
- սեփականության իրավունքը,
- տնտեսական գործունեություն իրականացնելու ազատության իրավունքը,
- համայնքային իստիտուտների կողմից պաշտպանության և դատավարական երաշխիքների իրավունքների հարգումը,
- տնտեսվարող սուբյեկտների օրինական շահերի պաշտպանության իրավունքը,
- անհաղթահարելի ուժի հաշվի առնումը, որոշակի վերապահումներով՝ նրա ընդհանուր սկզբունքի արժեքի առումով,
- անհրաժեշտ պաշտպանության հաշվի առնումը,
- արդյունավետ իրավական հղման իրավունքի սկզբունքը,
- անաչառ դատավարության իրավունքը,
- դատավարության ողջամիտ ժամկետի իրավունքը,
- դատավորի կողմից լսված լինելու իրավունքը,
- անմեղության կանխավարկածը [2, էջ 277-284]:

Ա. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍԻՆ

Եվրոպական համայնքի մասին պայմանագիրը համարվում է ողջ Միության սկզբնական իրավունքի կարևորագույն աղբյուրը: Հատկապես այստեղ են գտնվում այն նորմերը, որոնք գործածության մեջ են դնում Եվրոպական Միության քաղաքացիության ինստիտուտը: Դրանք պայմանագրի առանձին, երկրորդ՝ «Միության քաղաքացիությունը»

մասի առարկան են, որոնք ամրագրում են նաև անձի մի շարք այլ հիմնարար իրավունքներ (օրինակ՝ կոլեկտիվ դիմումի (հանրագրի) կամ տեղաշարժման և բնակության վայրի ընտրության իրավունքը):

Անհատի մի շարք իրավունքներ, հիմնականում տնտեսական ոլորտը շոշափող, պարունակվում են նաև ԵՅ-ի մասին պայմանագրի այլ մասերում (հատկապես երրորդ՝ «Չամայնքի քաղաքականությունը» մասում): Մասնավորապես դրանց թվին են պատկանում ընդհանուր շուկայի «ազատությունները» (աշխատողների տեղաշարժման ազատությունը, ընկերություն հիմնելու ազատությունը), աշխատանքի վարձատրության հարցերում կնոջ և տղամարդու հավասարության սկզբունքը և այլն):

ԵՅ-ի մասին պայմանագիրը համարվում է նաև Միության ինստիտուտների լիազորությունների գլխավոր սկզբնաղբյուրը՝ անձի իրավական կարգավիճակի, հիմնարար իրավունքների ու ազատությունների և ժողովրդավարական սկզբունքների կարգավորման և պաշտպանության հարցերում: Օրինակ՝ համաձայն փաստաթղթի 12-րդ և 13-րդ հոդվածների առաջին մասի («Սկզբունքները») Խորհուրդը և Եվրախորհրդարանը լիազորված են կիրառել օրենսդրական ակտեր և այլ միջոցներ՝ հավասարության սկզբունքների այնպիսի խախտումների դեպքում, ինչպիսիք են՝ ազգային, սեռային, ռասայական, էթնիկական ծագման և նման այլ հատկանիշների խտրականությունը:

Վերջապես, Եվրոպական համայնքի մասին պայմանագրում կանոնակարգված են մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանության կարևոր երաշխիքներ՝ հատկապես վերագրված ինստիտուտների ուսնձգություններից, բողոքներ մարդու իրավունքների պաշտպանին (օմբուդսմեն), հայցեր Եվրոպական և առաջին ատյանի դատարաններ, այդ թվում Չամայնքի և նրա պաշտոնատար անձանց կողմից քաղաքացուն պատճառված վնասների փոխհատուցման վերաբերյալ և այլն:

Բ. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ի տարբերություն ԵՅ-ի հիմնադիր պայմանագրի՝ Եվրոպական Միության մասին պայմանագիրը գլխավորապես կարգավորում է փոխհարաբերություններն անդամ պետությունների և վերագրված ինստիտուտների միջև՝ երկրորդ և երրորդ հեռարանների շրջանակներում:

Միաժամանակ, հենց Եվրոպական Միության մասին պայմանագրում են ամրագրված սահմանադրական կարգի ընդհանուր սկզբունքները, որոնց պահպանումը պարտադիր են քաղաքական իշխանության բոլոր մակարդակների համար (հոդված 6): Դրանց մեջ կարևորներից մեկը մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հարգման սկզբունքն է:

Միության ինստիտուտների կողմից այս սկզբունքի խախտումը կարող է հայցի հիմք ծառայել Եվրոպական համայնքների դատարան

(հոդված 46), իսկ եթե նման խախտումներն անընդհատ և հետևողական ձևով թույլ են տալիս անդամ պետությունները, ապա նրանց նկատմամբ Եվրոպական Միության Խորհրդի որոշմամբ կարող են կիրառվել բռնարգելքներ [3, էջ 282-383]:

Եվրոպական Միության պայմանագիրը, Եվրոպական համայնքի պայմանագրի 130 Ս հոդվածի 2-րդ մասում (ներկայիս 177-րդ հոդված) ներմուծելով զարգացման ուղղությամբ համագործակցության վերաբերյալ իրավական նորմ, մասամբ պատասխանեց ադապտացված իրավական բազայի սահմանմանը վերաբերող սպասումներին. «Այս ոլորտում համայնքի քաղաքականությունն աջակցում է ժողովրդավարության և իրավական պետության զարգացման ու ամրապնդման ընդհանուր նպատակին, ինչպես նաև մարդու իրավունքների, հիմնարար ազատությունների հարգման նպատակին»:

Անստերդամի պայմանագիրը

Անստերդամի պայմանագիրը փոփոխություններ չառաջացրեց Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիային միանալու հարցի կապակցությամբ՝ դրա վերաբերյալ անդամ պետությունների կողմից տարբեր դիրքորոշումներ ունենալու պատճառով:

Անստերդամի պայմանագրում Եվրոպական համայնքի պայմանագրի 13-րդ հոդվածի ներառումը, համաձայն որի, «Առանց վնասելու սույն պայմանագրի մյուս դրույթներին և դրանով Համայնքին տրամադրված իրավասությունների շրջանակներում Խորհուրդը, Հանձնաժողովի առաջարկությամբ և Եվրոպական Խորհրդարանի հետ խորհրդակցելուց հետո, միաձայն, կարող է ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ՝ սեռի, ռասայի կամ էթնիկական ծագման, կրոնի կամ համոզմունքների, հաշմության, տարիքի կամ սեռական կողմնորոշման վրա հիմնված ցանկացած խտրականության վերացման ուղղությամբ», այսուհետ իրավական բազա է տրամադրում Համայնքին՝ իրավունքների և ազատությունների պաշտպանության վերաբերյալ նոր դրույթներ ընդունելու համար:

Անստերդամի պայմանագիրը կատարելագործեց Եվրոպական Միությունում հիմնական իրավունքների պաշտպանության կառուցակարգերը՝ լրամշակելով դրանց վերաբերյալ պայմանագրերի համապատասխան դրույթները:

Եվրոպական Միության մասին պայմանագրի 6-րդ հոդվածում մտցվեց նոր՝ 1-ին մաս, համաձայն որի՝ «1. Միությունը հիմնված է ազատության, ժողովրդավարության, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հարգման, ինչպես նաև իրավական պետության սկզբունքների վրա, սկզբունքներ, որոնք ընդհանուր են բոլոր անդամ պետությունների իրավունքների համար»:

Նիսի պայմանագիրը

Մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ Նիսի պայմանագրի համապատասխան դրույթները շատ սահմանափակ ձևով են կարգավորում այս ոլորտի հարաբերությունները:

Դրանք նախատեսում են վերանայել Եվրոպական Միության պայմանագրի 7-րդ հոդվածը, որը հնարավորություն կտա արձագանքել և համապատասխան միջոցներ կիրառել Եվրոպական Միության պայմանագրի 6-րդ հոդվածի 1-ին մասում շարադրված սկզբունքների խախտման լուրջ սպառնալիքի դեպքում:

Նիսի պայմանագրով նախատեսված Եվրոպական համայնքի 181 A հոդվածը, մյուս կողմից, ամրապնդում է երրորդ պետությունների հետ տնտեսական, ֆինանսական և տեխնիկական համագործակցության վերաբերյալ համաձայնագրերի պայմանների իրավական բազան, սահմանելով, որ «այս ոլորտում համայնքի քաղաքականությունն է աջակցել ժողովրդավարության և իրավական պետության զարգացման և ամրապնդման ընդհանուր նպատակին, ինչպես նաև մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հարգման նպատակին» [2, էջ 287-296]:

Գ. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ 1989 Թ. ՀՈՉԱԿԱԳՐԵՐԸ

1989 թվականին Եվրոպական համայնքների շրջանակում (Միությունը դեռևս գոյություն չուներ) մարդու իրավունքների մասին ընդունվեցին խորհրդատվական ուժ ունեցող երկու ակտ՝ հիմնարար իրավունքների ու ազատությունների Հռչակագիրը, աշխատողների հիմնական սոցիալական իրավունքների մասին Համայնքի խարտիան:

Հիմնարար իրավունքների ու ազատությունների Հռչակագրի տեքստը հաստատվեց Եվրոպական խորհրդարանի կողմից: Այն պարունակում է մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքների ու ազատությունների ծավալուն համակարգը, դրանց իրավաբանական երաշխիքները, ինչպես նաև ԵՀ-ի քաղաքական հանրակարգի որոշ սկզբունքներ («ժողովրդավարության սկզբունքը»), որոնք ամրագրված են 17-րդ հոդվածում:

Հիմնարար իրավունքների և ազատությունների Հռչակագիրը սեղմ փաստաթուղթ է, բաղկացած 25 հոդվածից, որոնցում հռչակված են բոլոր կատեգորիաների՝ հիմնական, այդ թվում և սոցիալ-տնտեսական իրավունքներն ու դրանց երաշխիքներն ու կարևոր սկզբունքները, անհատի իրավական վիճակի (օրենքի առջև հավասարության սկզբունքը՝ հոդված 3) և քաղաքական ողջ համակարգի (ժողովրդավարության սկզբունքները՝ հոդված 17) վերաբերյալ:

Համայնքի Խարտիան՝ աշխատավորների հիմնական սոցիալական իրավունքների մասին, ԵՅ անդամ պետությունների իրավաստեղծ համագործակցության արդյունք է: Այն հավանության է արժանացել ԵՅ անդամ պետությունների բարձր մակարդակի հանդիպումների ընթացքում և ինչպես երևում է անվանումից, գլխավորապես արտացոլում է վարձու աշխատողների սոցիալ-տնտեսական իրավունքները, ինչպիսիք են՝ աշխատողների ազատ տեղաշարժման իրավունքը, սոցիալական պաշտպանվածության իրավունքը, պրոֆեսիոնալ միություններում միավորվելու ազատությունը, գործադուլի իրավունքը և այլն:

Խարտիայի հիմնական մասը պարունակում է 30 կետ, որոնցից շատերն ունեն ծրագրային բնույթ (օրինակ՝ համաձայն 17-րդ կետի, «աշխատողների տեղեկացվածության, խորհրդակցությունների և կառավարման մասնակցության իրավունքները պետք է զարգացնել որոշակի համապատասխան ուղղություններով՝ ուշադրություն դարձնելով տարբեր անդամ պետություններում գոյություն ունեցող պրակտիկային»:

Եվրախորհրդարանի Հռչակագիրը և Սոցիալական իրավունքների խարտիան (համաձայն նրա ներածականի, որը նույնպես հռչակագրի ուժ ունի) միայն վերապահումներով կարող են համարվել Եվրոպական Միությունում մեջ մարդու և քաղաքացու իրավական վիճակի աղբյուրներ: Թեպետ, երկու փաստաթղթերն էլ ունեն ոչ պակաս քաղաքական նշանակություն, այնուամենայնիվ, դրանցից ոչ մեկն իրավաբանորեն պարտադիր նորմատիվային ակտի ուժ չի ստացել:

Դ. ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Եվրոպական Միության մասին պայմանագրում ներկայումս հռչակված հիմնարար իրավունքների և ազատությունների գերակայության սկզբունքն իրենից ներկայացնում է դատարանի նախադեպային իրավունքի ծածկագրում, որը դեռևս 60-ական թվականներից պարտադիր էր Եվրոպական համայնքների համար:

Եվրոպական Միության դատարանների որոշումներում առաջին անգամ դրվել և իրավաբանորեն ամրագրվել են անհատի՝ մի շարք առանձին իրավունքներ և ազատություններ՝ ԵՄ-ի նկատմամբ, այդ թվում և սեփականության իրավունքը, անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը և այլն:

Չնայած ԵՄ-ի հիմնադիր փաստաթղթերում հիմնարար իրավունքների համահավաք ցանկի բացակայությանը, դեռևս 1969 թվականին, Դատարանն այդ իրավունքները ճանաչեց որպես «Միության իրավունքի ընդհանուր սկզբունքներից» մեկը: Դրանք պարտավոր են պահպանել ինչպես անդամ պետությունները, այնպես էլ ԵՄ-ի վերպետական

ինստիտուտները: Այստեղից հետևում է, որ Խորհրդի, Հանձնաժողովի, Եվրախորհրդարանի կողմից հրապարակված իրավական այն ակտերը, որոնք խախտում են անձի հիմնարար իրավունքներն ու ազատությունները, կարող են չեղյալ համարվել Դատարանի որոշմամբ:

Ինչպիսի՞ աղբյուրներից ելնելով է, որ Եվրոպական դատարանը որոշակի իրավունքը կարող է ճանաչել որպես «հիմնարար» և հանդես գալ դրա պաշտպանությամբ: Դատարանը նման աղբյուրները բաժանել է երեք խմբի:

Նախ՝ դա անդամ պետությունների «ընդհանուր սահմանադրական ավանդույթներն են», որոնցում, մասնավորապես, առաջին անգամ ամրագրվել են հիմնական իրավունքները:

Ելնելով հիշյալ ավանդույթներից՝ Դատարանը, որպես կանոն, հիմք է վերցնում այն երկրների սահմանադրական նորմերն ու երաշխիքները, որոնցում ապահովված են առավելագույն չափորոշիչները հիմնարար իրավունքների պաշտպանության գործում: Նման մոտեցումը շահեկանորեն առանձնացնում է դատարանի որոշումներն այս ասպարեզում միջազգային իրավական նորմերից, ինչի կապակցությամբ արժանացել է արևմտաեվրոպական իրավագետների գնահատականին [4, էջ 113]:

Երկրորդ աղբյուրը, որից սնվում է ԵՄ դատարանն իր որոշումները կայացնելիս, մարդու իրավունքների մասին միջազգային այն պայմանագրերն են, որոնց մասնակից են բոլոր անդամ պետությունները կամ դրանց մեծ մասը: Չնայած համայնքները և Միությունն անմիջականորեն չեն համարվում այդ համաձայնագրերի կողմեր, Դատարանը, այնուամենայնիվ, գտավ, որ դրանք նույնպես կապված են տվյալ ակտերի դրույթներով:

Ի թիվս մարդու իրավունքների մասին ընդհանուր սահմանադրական ավանդույթների և կոնվենցիաների՝ Դատարանը, որպես երրորդ աղբյուր, ցուցում է միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչված սկզբունքները (առաջին հերթին մարդու իրավունքի և ազատության գերակայությունը), որոնք նույնպես ամրագրված են մի շարք միջազգային փաստաթղթերում. ՄԱԿ-ի 1945թ. կանոնադրությունը, 1975թ. Հելսինկիի ակտը և այլն [5, էջ 21-22]:

Մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության խնդրում Եվրոպական համայնքների դատարանի ավանդը հսկայական է և դժվար է գերազնահատել:

**Ե. 1950 Թ. ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Մարդու հիմնարար իրավունքների պաշտպանությանը և զարգացմանը նվիրված Եվրոպական Միության և համայնքների բոլոր աղբյուրների մեջ գերակա նշանակություն է ձեռք բերել Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950թ. Եվրոպայի Խորհրդի կոնվենցիան:

ԵՄ դատարանն անփոփոխ կերպով ընդգծում է, որ Եվրոպական համայնքներում Կոնվենցիան հստակ տեղ ունի՝ որպես մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների գլխավոր աղբյուրի և դատարանի այս բնորոշումը 1992 թվականին ամրագրվել է Եվրոպական Միության հիմնադիր պայմանագրում:

Կոնվենցիան ստորագրվել է Եվրոպայի Խորհրդի շրջանակներում, ներկայումս ունի իրավունքների մասին համաեվրոպական օրինագծի դեր և պարտադիր է նաև Հայաստանի համար:

Քանի որ Կոնվենցիային մասնակից են Եվրոպական Միության բոլոր անդամ պետությունները, դատարանը, 70-ական թվականներից Կոնվենցիան ճանաչեց որպես կոմունիտար իրավունքի աղբյուր, որի կիրառումը պետք է պահպանվի ոչ միայն Միության երկրներում (որպես Կոնվենցիան ստորագրած կողմ), այլև Համայնքներում՝ ամբողջությամբ վերցված:

Դատարանի որոշումները հաստատվեցին Եվրոպական Միության մասին պայմանագրով: Պայմանագրի 6-րդ հոդվածի 2-րդ պարագրաֆի համաձայն «Միությունը հարգում է մարդու հիմնական իրավունքները, ինչպես որ դրանք երաշխավորված են 1950թ. նոյեմբերի 4-ին Հռոմում ստորագրված Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայում...»:

Եվրոպայի Խորհրդի կոնվենցիայի որդեգրումը պայմանավորված էր նրանով, որ Եվրոպական Միությունը չուներ «Իրավունքների մասին» սեփական օրինագծեր: Թեպետ գտնված որոշումն իրադրությունից դուրս գալու լավագույն ելքը չէր, քանի որ Կոնվենցիան, հակառակ իր անվանման, ամրագրում է անձի հիմնարար իրավունքների և ազատությունների ոչ ամբողջական համալիրը:

Նրա բնագրում գրեթե բացակայում են «Երրորդ սերնդի» սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքները:

ժամանակակից չափորոշիչների մակարդակով բոլոր կատեգորիաների հիմնական իրավունքների և ազատությունների ճանաչման և պաշտպանության պահանջը ստիպեց Միության ինստիտուտներին և անդամ պետություններին վերադառնալ սեփական, միութենական «ի-

րավական օրինագծերի» մշակման հարցին՝ սկզբնապես հռչակագրերի տեսքով, ապա և Հիմնարար իրավունքների մասին լիարժեք Խարտիայի ստեղծումով:

Գրականություն

1. **Hartley T.C.** “The Foundations of European community Law”, Oxford, 2003, p. 135-146.
2. **Joël Rideau**, “Droit institutionnel de L’Union et des communautés Europeennes”, 4^e edition, L, G, D, J, Paris, 2002.
3. “Право Европейского Союза” отв. ред. **Кашкин С. Ю.**, с. 382-383.
4. **Morange J.**, Les libertes publiques. Paris 1990, p. 113, («Хартия Европейского Союза об основных правах», с. 22).
5. «Хартия Европейского Союза об основных правах», под ред. **С. Ю. Кашкина**, М., 2001, с. 21-22.

ARMEN HARUTYUNYAN

Doctor of Sciences (Law), Professor

**BASIC SOURCES OF EUROPEAN LAW ON
FUNDAMENTAL HUMAN RIGHTS**

Despite their importance fundamental human rights are not included in basic treaties of the European communities and European Union and have been paid attention to only recently in the Community law which was conditioned also by the accepted position on human rights protection of the European Court of Justice.

The decisions of the Court were ratified by the treaty of the European Union. According to Paragraph 6 of Article 2 “the Union respects human rights as they were guaranteed in the European Convention on Protection of Human Rights and Fundamental Freedoms signed in Rome on November 4, 1950...”.

The adoption of the Convention of the European Council was conditioned by the fact that the European Union did not have its own laws on “Human Rights”. Although the decision found was not the best way out as the Convention, despite its title, prescribed not complex of basic human rights and freedoms.

Social-economical and cultural rights of the “Third generation” are almost omitted.

The demand for recognition and protection of all categories of fundamental rights and freedoms on the level of contemporary standards made the Union institutes and Member States return to the provision of their own, union “legal law projects” first in the form of declarations and then forming a complete Charter on Fundamental Rights.

ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՀՀ ՊԿ ակադեմիայի

իրավագիտության ամբիոնի ասպիրանտ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ
ԻՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

Իրավաբանական պատասխանատվությունն իրավական այն ինստիտուտներից է, որը մշտապես գտնվել է իրավագիտության ուշադրության կենտրոնում: Իրավաբանական պատասխանատվության հիմնախնդիրների ուսումնասիրությամբ զբաղվել են ինչպես իրավունքի տեսության, այնպես էլ ճյուղային գիտությունների ներկայացուցիչները:

Հայտնի է, որ սոցիալական կյանքի տարբեր ոլորտներում, այդ թվում իրավական կյանքում, տեղի են ունենում արմատական փոփոխություններ: Իրավաբանական պատասխանատվությունը, հանդիսանալով մշակույթի, քաղաքակրթության ինքնուրույն տարրերից, իրավական արժեքային համակարգի վերափոխման պայմաններում պահանջվում է նոր լույսի ներքո դիտարկել նրա հիմնախնդիրները: Օրինակ՝ նախկինում ընդունված էր իրավաբանական պատասխանատվության հետևյալ ավանդական տեսակները՝ քրեական, վարչական, քաղաքացիական, կարգապահական, ինչպես նաև նյութական պատասխանատվություն: Ներկայումս այս մոտեցումն արմատական վերանայման կարիք ունի: Այսպես, 2003թ. ապրիլի 24-25 Տոլյատիում՝ «Իրավաբանական պատասխանատվության արդիական խնդիրները» թեմայով տեղի ունեցած միջբուհական գիտագործնական կոնֆերանսում իրավագիտության դոկտոր **Ռ. Խաչատուրովն** իր ելույթում արձանագրեց, որ ոչ մի իրավունքի ճյուղ չի կարող գոյություն ունենալ առանց սեփական իրավաբանական պատասխանատվության ինստիտուտի: Այս պատճառով առաջանում են իրավաբանական պատասխանատվության ինքնուրույն տեսակներ: Հեղինակն այնուհետև նշում է, որ հատուկ նշանակություն է ձեռք բերում սահմանադրական պրոցեսուրալ պատասխանատվությունը, որը կոչված է ապահովելու օրենսդրական և իրավակիրառ ակտերի սահմանադրականությունը [1]:

Սահմանադրական իրավունքի գիտության մեջ երկար ժամանակ իշխել է այն մոտեցումը, որ սահմանադրաիրավական նորմերին բնութագրական են երկանդամ կառուցվածքը, որ նրանք չունեն սանկցիաներ, իսկ սահմանադրաիրավական նորմերի իրականացումն ապահովվում է իրավունքի այլ ճյուղի սանկցիաներով: Ներկայումս այս մոտեցումն անընդունելի է: Ս. Ավագյանը, 2001թ. մարտի 13-17-ը Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանում՝ «Սահմանադրաի-

րավական պատասխանատվության արդիական խնդիրները» թեմայով կազմակերպված կոնֆերանսում նշել է, որ յուրաքանչյուր իրավունքի ճյուղ սեփական միջոցներով պետք է ապահովի իր նորմերի իրականացումը, ներառյալ պատասխանատվության միջոցներով: Պատասխանատվության միջոցների առկայությունն իրավունքի ճյուղի հատկանիշ է, ինչպես «սեփական» հասարակական հարաբերությունները, «սեփական» նորմերը [2, էջ 124]: Այսօր էլ որոշ հեղինակներ, թեև ընդունում են սահմանադրաիրավական պատասխանատվության առկայությունը, սակայն անհասկանալի կերպով դրա առանձնացումը գնահատում են խիստ պայմանական՝ չհիմնավորելով, թե ինչու է դրսևորվում նման պայմանականությունը [3, էջ 16-17]:

Սահմանադրաիրավական պատասխանատվության որպես իրավաբանական պատասխանատվության ինքնուրույն տեսակի առանձնացման գաղափարը նորույթ չէ [4]: Դեռևս 1970թ. Ս. Ավագյանը հանդես է եկել նմանատիպ առաջարկով [5]: Տ. Ջռաժևսկին 1975թ. իր հոդվածներից մեկում նշում է. «Պետական իրավունքում պատասխանատվության մերժումն աղքատացնում է պետական իրավունքի նորմերի ապահովման կառուցակարգերը, բարդեցնում պետական շինարարության պրակտիկայում ծագող մի շարք երևույթների պարզաբանումը: Իրավաբանական պատասխանատվության համակարգում առկա են, պետական իրավունքի նորմերով ամրագրված, պետական ներգործության մի շարք միջոցներ, որոնք թեև տեղավորվում են իրավաբանական պատասխանատվության ընդհանուր հասկացության մեջ, սակայն չեն վերաբերում ո՛չ քրեական, ոչ քաղաքացիական, ո՛չ վարչական, ո՛չ էլ կարգապահական պատասխանատվությանը: Օրինակ՝ դժվար է առարկել քաղաքացիությունից զրկելը որպես իրավաբանական պատասխանատվության միջոց դիտելու դեմ» [6, էջ 80-86]:

Այսօր, կարծես, ընդհանուր առմամբ, չի վիճարկվում սահմանադրաիրավական պատասխանատվության որպես ինքնուրույն իրավաբանական պատասխանատվության տեսակի վերաբերյալ առկա մոտեցումը: Դեռ ավելին, տեսության մեջ նշվում է, որ միայն ինքնուրույն իրավաբանական պատասխանատվության (որպես իրավունքի ճյուղի ինքնուրույնության վճռական պայման և սկզբնական հիմք) առկայության դեպքում է սահմանադրական իրավունքը ձեռք բերում ամբողջականության և ներքին ավարտվածության մասին վկայող բավարար հանոգիչ հատկություններ [7]:

Իրավունքի ընդհանուր տեսության մեջ նույնպես ընդունվում է սահմանադրաիրավական պատասխանատվությունը: Պետության և իրավունքի տեսության ժամանակակից դասագրքերում սահմանադրաիրավական պատասխանատվությունը դիտվում է որպես իրավաբանական պատասխանատվության ինքնուրույն տեսակ [8], իսկ սահմանադրական իրավունքի դասագրքերում այս ինստիտուտին նվիրվում է առանձին պարագրաֆներ [9, 10]:

Թեև սահմանադրաիրավական պատասխանատվությունն ստացել է գիտական ճանաչում, սակայն, այս ինստիտուտի հետ կապված մի շարք հարցեր, դեռևս լուծված չեն, առկա են հակասական մոտեցումներ: Տեսության մեջ լուծված չէ նույնիսկ պատասխանատվության այս տեսակի անվանման հարցը: Խորհրդային ժամանակաշրջանում օգտագործվում էր «պետաիրավական պատասխանատվություն» հասկացությունը [11], մեկ այլ դեպքում այն անվանվում է սահմանադրական պատասխանատվություն [12, էջ 8], երրորդ դեպքում՝ սահմանադրաիրավական պատասխանատվություն [9, էջ 33]: «Պետաիրավական պատասխանատվություն» հասկացության օգտագործումը, կարծում ենք, պայմանավորված է եղել Խորհրդային ժամանակ պետական իրավունք անվան օգտագործման հետ: Ներկայումս, հատկապես ԱՊՀ երկրներում «պետական իրավունք» հասկացությունն ընդհանուր առմամբ կիրառում չունի: Բացի այդ, «պետաիրավական պատասխանատվություն» հասկացության օգտագործումը նպատակահարմար չէ նաև այն պատճառով, որ իրավաբանական պատասխանատվության ընդհանուր հատկանիշն է նրա պետաիրավական բնույթը: Իրավունքի տեսության մեջ իրավաբանական պատասխանատվության փոխարեն երբեմն որպես սեռային հասկացություն օգտագործվում է «պետաիրավական պատասխանատվություն» հասկացությունը [13, էջ 443]:

Որոշ հեղինակներ գտնում են, որ առավել ճիշտ է օգտագործել «սահմանադրաիրավական պատասխանատվություն» հասկացությունը, քանի որ սահմանադրական պատասխանատվությունը դա սահմանադրության նորմերով նախատեսված պատասխանատվություն է և կարող է վրա հասնել սահմանադրական պարտականությունները խախտելու համար: Ինչ վերաբերում է սահմանադրաիրավական պատասխանատվությանը, ապա այն նախատեսված է սահմանադրական իրավունքի նորմերով [14]: Այստեղից բխում է, որ «սահմանադրաիրավական պատասխանատվությունն» ավելի լայն հասկացություն է, քան սահմանադրականը, քանի որ սահմանադրական իրավունքի աղբյուրների համակարգը չի սահմանափակվում սահմանադրությամբ:

Իրավաբանական պատասխանատվության տարբեր տեսակները կոչված են ապահովելու սահմանադրության դրույթները: Սակայն դրանք չեն հանդիսանում սահմանադրաիրավական պատասխանատվություն, օժտված չեն սահմանադրաիրավական պատասխանատվության հատկանիշներով: Այս առումով պետք է տարբերակել սահմանադրաիրավական ոլորտում կիրառվող պատասխանատվությունը սահմանադրաիրավական պատասխանատվությունից: Օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգիրքը (այսուհետև՝ քր. օր.) նախատեսում է մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների դեմ ուղղված հանցագործություններ գլուխը (ՀՀ քր. օր-ի գլուխ 19): Այս հանցակազմի հատկանիշներ պարունակող արարքները հանդիսանում են սահմանադրաիրավական ոլորտում քրեական պատասխանատվության ենթարկելու հիմք: Այս տեսանկյունից, անընդունելի ենք

համարում այն հեղինակների մոտեցումը, ովքեր օգտագործում են «պատասխանատվությունը սահմանադրական իրավունքում» հասկացությունը՝ նկատի ունենալով սահմանադրաիրավական պատասխանատվությունը:

Սահմանադրաիրավական պատասխանատվության առանձնահատկությունները նախ և առաջ պայմանավորված են սահմանադրական իրավունքի կարգավորման առարկայով և մեթոդով, ՀՀ իրավական համակարգում սահմանադրական իրավունքի ունեցած տեղով և դերով, սահմանադրական իրավահարաբերությունների սուբյեկտների առանձնահատկություններով, սահմանադրաիրավական ոլորտում դրսևորվող իրավական վարքագծի առանձնահատկություններով:

Սույն հոդվածում կփորձենք ընդհանուր գծերով ներկայացնել սահմանադրաիրավական պատասխանատվության այն հատկանիշները և առանձնահատկությունները, որոնցով այն տարբերվում է իրավաբանական պատասխանատվության այլ տեսակներից: Համեմատության համար կվերցնենք քրեական պատասխանատվությունը: Բանն այն է, որ քրեական և սահմանադրաիրավական պատասխանատվություններն ունեն որոշ ընդհանրություններ. երկուսն էլ հանրային իրավական ոլորտում կիրառվող պատասխանատվության տեսակներ են: Բացի այս, սահմանադրաիրավական պատասխանատվության առանձին տեսակներ կապված են հանցագործության հետ, օրինակ, նախագահին պաշտոնանկ անելու հիմքերն են՝ պետական դավաճանությունը և այլ ծանր հանցագործությունը:

Սահմանադրաիրավական և քրեական պատասխանատվության հարաբերակցությունը կքննարկվի հետևյալ հարթություններում՝

- պատասխանատվության ենթարկվող սուբյեկտը,
- պատասխանատվության նորմատիվ հիմքը,
- պատասխանատվության փաստական հիմքը,
- պատասխանատվության ենթարկելու կարգը:

Պատասխանատվության ենթարկվող սուբյեկտը: ՀՀ քր. օր.-ի 23-րդ հոդվածի համաձայն՝ քրեական պատասխանատվության ենթակա է միայն մեղսունակ, ֆիզիկական անձը, ով հանցանք կատարելու պահին հասել է սույն օրենսգրքով սահմանված տարիքի: Փաստորեն, քրեական իրավունքում հանցագործության սուբյեկտ է միայն ֆիզիկական անձը¹ [15]:

Սահմանադրաիրավական պատասխանատվության սուբյեկտ կարող են համարվել ինչպես պետությունը, պետական մարմինները, պաշտոնատար անձինք, այնպես էլ քաղաքացիները:

Մ. Բազլայր և Ա. Հարությունյանը գտնում են, որ քաղաքացու վրա, եթե նա պաշտոնատար անձ չէ, այդ (սահմանադրաիրավական - Ղ.Ա.) պատասխանատվությունը չի կիրառվում [9, 16, էջ 39]: Դ. Լիպինցկին նշում է, որ եթե ֆիզիկական անձը դիտվի որպես սահմանադրաիրա-

¹ Քրեական իրավունքի տեսության մեջ քննարկվել է իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության հարցը:

վական պատասխանատվության սուբյեկտ, ապա սահմանադրաիրավական պատասխանատվությունը կխառնվի քրեական, քաղաքացիական, հարկային, կարգապահական պատասխանատվության տեսակների հետ [17, էջ 387]: Չենք կարծում, որ քաղաքացուն սահմանադրաիրավական պատասխանատվության սուբյեկտ դիտելու դեպքում սահմանադրաիրավական պատասխանատվությունը կնույնացվի իրավաբանական պատասխանատվության այլ տեսակների հետ:

Քրեական իրավունքում արգելվում է կոլեկտիվ պատասխանատվության ենթարկելու դեպքերը: Մինչդեռ, կոլեկտիվ սուբյեկտները կարող են ենթարկվել սահմանադրաիրավական պատասխանատվության:

Բայցի այդ, եթե քրեական իրավունքում պատասխանատվության ենթարկվող սուբյեկտ հանդիսանում է ֆիզիկական, մեղսունակ և որոշակի տարիքի հասած անձը (հանցագործության ընդհանուր սուբյեկտ), ապա անհատական սուբյեկտներից սահմանադրաիրավական պատասխանատվության առավելապես ենթարկվում են պետական իշխանության ներկայացուցիչները (հատուկ կարգավիճակ ունեցող ֆիզիկական անձիք): Մյուս կողմից՝ քրեական իրավունքում առանձին հանցակազմերի համար պատասխանատվության կարող է ենթարկվել միայն պետական պաշտոնատար անձը (հանցագործության հատուկ սուբյեկտ), իսկ առանձին դեպքերում սահմանադրաիրավական պատասխանատվության սուբյեկտ կարող է համարվել նաև ֆիզիկական անձը, օրինակ՝ քաղաքացիությունից զրկելը, եթե նա այլ պետության քաղաքացիություն է ձեռք բերել՝ քաղաքացիության մասին ՀՀ օրենսդրության խախտմամբ:

Այսպիսով, սուբյեկտային կազմի տեսանկյունից սահմանադրաիրավական և քրեական պատասխանատվությունները միմյանցից տարբերվում են ոչ միայն կոլեկտիվ սուբյեկտների, այլ նաև անհատական սուբյեկտների հարթությունում: Այս տեսանկյունից, քրեական իրավունքում պատասխանատվության սուբյեկտ են հանդիսանում առավելապես ֆիզիկական անձինք, որոնք չունեն հատուկ կարգավիճակ (չեն հանդիսանում պետական իշխանության անհատական ներկայացուցիչներ), իսկ սահմանադրական իրավունքում սահմանադրաիրավական պատասխանատվության են ենթարկվում առավելապես պետական իշխանության պաշտոնատար անձինք:

Պատասխանատվության նորմատիվ հիմքը: Քրեական պատասխանատվության նորմատիվ հիմքը, կարծում ենք, նախ և առաջ հանցակազմն է՝ հանցագործության օրենսդրական բնութագիրը: ՀՀ քր. օր.-ի 1-ին հոդվածի համաձայն՝ ՀՀ քրեական օրենսդրությունը բաղկացած է սույն օրենսգրքից: Քրեական պատասխանատվությունը նախատեսող նոր օրենքներն ընդգրկվում են ՀՀ քրեական օրենսգրքում: Սա նշանակում է, որ միայն քրեական օրենսգրքում կարող են սահմանվել այն արարքները, որոնք հանդիսանում են հանցագործություն:

Վ. Վինոգրադովը նշում է. «Սահմանադրաիրավական պատասխանատվության նորմատիվ հիմքը սահմանադրաիրավական այն նորմերի

ամբողջությունն է, որոնք ամրագրում են՝ ա. սահմանադրական դելիկտների կազմը, բ. սահմանադրաիրավական սանկցիաները և նրանց կիրառման սկզբունքները, գ. սուբյեկտների այն շրջանակը, որոնք լիազորված են կիրառելու սահմանադրաիրավական սանկցիաներ, դ. սահմանադրաիրավական պատասխանատվության միջոցների կիրառման ընթացակարգը, այսինքն՝ պրոցեսուալ ձևը» [18]: Սահմանադրաիրավական պատասխանատվության նորմատիվ հիմքն ամրագրված է ՀՀ Սահմանադրությունում, սահմանադրական իրավունքի այլ աղբյուրներում:

Քրեական և սահմանադրաիրավական պատասխանատվության նորմատիվ հիմքերի միջև առկա տարբերությունը պայմանավորված է այս ինստիտուտների օրենսդրական կարգավորման և համակարգման առանձնահատկություններով: Եթե քրեական իրավունքում հանցակազմերը և պատիժները կարող են արտացոլվել միայն քր. օր.-ում, ապա սահմանադրաիրավական պատասխանատվությունը, հանդիսանալով նոր ինստիտուտ, դեռևս չունի նույնիսկ պատասխանատվության միասնական իրավական հիմք: Այն կարգավորվում է տարբեր նորմատիվ իրավական ակտերով: Ներկայումս տեսական աղբյուրներում առաջարկվում է ընդունել սահմանադրաիրավական պատասխանատվության մասին հատուկ օրենք՝ միասնական «յուրահատուկ սահմանադրական օրենսգիրք» [19, էջ 87]: Մ. Գլիզիչ-Չոլոտարևան առաջարկում է ընդունել «Սահմանադրական պատասխանատվության» մասին դաշնային սահմանադրական օրենք [20]: Այս հարցում նախ և առաջ պետք է պարզել առաջարկվող օրենքի կարգավորման առարկայի սահմանները:

Կարծում ենք, քրեական պատասխանատվության նորմատիվ հիմքի տարր չեն համարվում այն նորմերը, որոնք սահմանում են պատասխանատվության ենթարկվող սուբյեկտի կազմը և պատասխանատվության ենթարկելու ընթացակարգը: Հայրենական իրավական համակարգում քրեական և քրեադատավարական հարաբերությունները կարգավորվում են տարբեր ծածկագրված ակտերով: Քրեական պատասխանատվության իրականացման դատավարական ձևը սահմանված է քրեական դատավարության օրենսգրքով (այսուհետև՝ քր. դատ. օր.):

Պատասխանատվության փաստական հիմքը: ՀՀ քր. օր-ի 3-րդ հոդվածի համաձայն՝ քրեական պատասխանատվության միակ հիմքը հանցանք, այսինքն՝ այնպիսի արարք կատարելն է, որն իր մեջ պարունակում է քրեական օրենսգրքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները: ՀՀ քր. օր-ի 18-րդ հոդվածի առաջին մասում տրված է հանցագործության հասկացությունը:

Սահմանադրաիրավական պատասխանատվության հիմքը սահմանադրաիրավական դելիկտներն են կամ իրավախախտումները: Վ. Լուչինը սահմանադրաիրավական դելիկտները բնութագրում է որպես սահմանադրաիրավական հարաբերությունների սուբյեկտների արարք (գործողություն կամ անգործություն), որը չի համարվում պատշաճ վարքագիծ և հանգեցնում է սահմանադրաիրավական պատասխանատվության միջոցների կիրառմանը [21]:

Սահմանադրաիրավական պատասխանատվության փաստական հիմքի կապացույթամբ հետաքրքիր է Բ. Ստրաշունի մոտեցումը. «Սահմանադրական պատասխանատվությունը կարող է վրա հասնել նաև իրավախախտման բացակայության պայմաններում, այսինքն ոչ իրավախախտման հետևանքով: Օրինակ՝ ճապոնիայի Սահմանադրությունն անրագրում է, որ յուրաքանչյուր 10 տարին մեկ սահմանադրական դատարանի անդամի պաշտոնավարման շարունակության համար պետք է անցկացվի քվեարկություն: Եթե որևէ դատավոր չի հավաքում անհրաժեշտ ձայների քանակ, ապա զրկվում է պաշտոնից, հետևաբար կրում է պատասխանատվություն, թեև չի կատարել որևէ դեղիկ» [22]: Քրեական իրավունքում միանշանակ է, որ անձը կարող է քրեական պատասխանատվության ենթարկվել, եթե կատարել է քրեական օրենքով նախատեսված արարք: Քրեական պատասխանատվությունը բացառվում է, եթե անձի արարքում բացակայում է հանցակազմը:

Մեկ հանգամանքի մասին ևս. 33 քր. օր-ի 8-րդ հոդվածի համաձայն՝ անձն ենթարկվում է քրեական պատասխանատվության միայն անձամբ իր կատարած հանցանքի համար: Մինչդեռ, անձի սահմանադրաիրավական պատասխանատվության ենթարկելու հիմք կարող է համարվել ոչ միայն իր կատարած սահմանադրական դեղիկտը, այլ նաև այլ անձի հակաիրավական արարքը: Ռուսական ընտրական օրենսդրության համաձայն՝ թեկնածուի գրանցումը մերժվում է կամ գրանցման ուժը կորցրած է ճանաչվում, եթե պարզվում է, որ նրա վստահված անձն ընտրողներին կաշառք է տվել [23]: Փաստորեն նման պարագայում, թեկնածուն ենթարկվում է պատասխանատվության (գրանցումը մերժել կամ ուժը կորցրած ճանաչել) իր վստահված անձի գործողությունների համար: 33 Ընտրական օրենսգրքի 103-րդ հոդվածում նշվում է, որ կուսակցության ընտրական ցուցակում ներառված թեկնածուի գրանցումն ուժը կորցրած է ճանաչվում, եթե նա խախտել է նախընտրական քարոզչության կազմակերպման սահմանված կարգը (ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 8-րդ կետ), իսկ 18-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ նախընտրական քարոզչության ժամանակ թեկնածուներին (կուսակցություններին) արգելվում է անձամբ կամ որևէ այլ եղանակով քաղաքացիներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով տալ (խոստանալ) դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ կամ մատուցել (խոստանալ) ծառայություններ: Ընտրական իրավունքի մասնագետներն այս կապակցությամբ նշում են, որ ընտրական իրավախախտումների հիմքով սահմանադրաիրավական պատասխանատվության ենթարկելու ժամանակ մեղքի պարտադիրության վերաբերյալ օրենսդիրը հստակ դիրքորոշում չունի: Դեռ ավելին, առանձին դեպքերում օրենսդիրը թույլատրելի է համարում օբյեկտիվ մեղսայնացումը [24]: Մինչդեռ քրեական իրավունքում օբյեկտիվ մեղսայնացումն արգելվում է (քր. օր-ի հոդված 9):

Պատասխանատվության ենթարկելու կարգը: Անմեղության կանխավարկածի սահմանադրական սկզբունքից բխում է, որ հանցագոր-

ծության մեջ մեղադրվող անձը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով: ՀՀ-ում արդարադատություն իրականացվում է դատարանների կողմից: Այսպիսով, միանշանակ է, որ հանցագործության մեջ մեղադրվող անձանց քրեական պատասխանատվության (պատժի) ենթարկելու իրավասություն ունի միայն դատարանը:

Հայտնի է, որ քրեական իրավունքի իրականացման ձևը քրեական դատավարությունն է: ՀՀ քր. դատ. օր-ով նախատեսված են այն իրավական միջոցները, որոնց կիրառմամբ հնարավոր է ապացուցել հանցագործության մեջ մեղադրվող անձի մեղավորությունը, մանրամասն կարգավորված են վարույթն իրականացնող մարմնի գործունեությունը, սահմանված են այն քննչական և դատական գործողությունները, որոնց միջոցով հավաքվում և ստուգվում են ապացույցները, դատավարական որոշումների ձևը և բովանդակությունը, դատավարության սկզբունքները:

Մինչդեռ, սահմանադրաիրավական պատասխանատվության իրականացման ընթացակարգի հարցն այդքան պարզ և հստակ չէ, քանի որ չկա սահմանադրաիրավական պատասխանատվության ենթարկելու միասնական կարգը, ի տարբերություն քրեական պատասխանատվության:

Այս հարթությունում կարևոր նշանակություն ունի սահմանադրաիրավական պատասխանատվության ենթարկելու և սահմանադրաիրավական արգելանքների կիրառման իրավասությամբ օժտված սուբյեկտի հարցը: Եթե որոշված չէ յուրիսդիկցիոն մարմինը, ապա սահմանադրաիրավական պատասխանատվության իրականացումը դառնում է անհնար:

Ընդհանուր առմամբ, իրավագիտությունում առանձնացվում է պատասխանատվության ենթարկելու վարչական և դատական կարգերը: Եթե քրեական պատասխանատվության (պատժի) ենթարկելու մենաշնորհը պատկանում է դատարանի, ապա սահմանադրաիրավական պատասխանատվության դեպքում կիրառվում է ինչպես դատական, այնպես էլ վարչական կարգը: Օրինակ՝ ընտրական իրավունքում թեկնածուներին սահմանադրաիրավական պատասխանատվության կարող է ենթարկել ընտրական հանձնաժողովը: Կարծում ենք, սահմանադրաիրավական պատասխանատվության ենթարկելու դատական կարգն առավել նպատակահարմար է: Բանն այն է, որ դատարանն անկախ և անաչառ մարմին է, գործում է հստակ սահմանված դատավարական ձևի և արդարադատության սահմանադրական սկզբունքների ու երաշխիքների շրջանակներում: Այս առումով, իրավաբանական պատասխանատվության իրավական կարգավորման զարգացումը, կարծում ենք, պետք է գնա ոչ դատական կարգով պատասխանատվության ենթարկելու դեպքերի նվազեցման ուղղությամբ:

Այս հարցը պետք է դիտարկել նաև Եվրոպական կոնվենցիայով ամրագրված իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրա-

վունքի համատեքստում (Կոնվենցիայի հոդված 13): Եվրոպական դատարանը Կոնվենցիայի 13-րդ հոդվածին առնչվող գործերով իր վճիռներում հատուկ ուշադրություն է դարձրել այն հարցին, թե ազգային իշխանության որ մարմինն է, որ պետք է ապահովի իրավական պաշտպանության արդյունավետ միջոց: *Ռոտարուն ընդդեմ Ռումինիայի* գործով վճռում Դատարանն արձանագրեց, որ 13-րդ հոդվածում նշված «մարմինը» չի կարող բոլոր դեպքերում լինել դատական մարմին՝ որոշակի իմաստով: Սակայն տվյալ մարմնի լիազորությունները և ընթացակարգային երաշխիքները կարևոր են որոշելու համար, թե արդյոք այդ մարմնի առջև պաշտպանության միջոցն արդյունավետ է [25, էջ 404]: Փաստորեն, Դատարանն իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը չի կապում բացառապես դատարանի հետ: Վարչական մարմինների գործունեությունը նույնպես կարող են համարվել իրավական պաշտպանության արդյունավետ միջոց, սակայն այդ մարմնի արդյունավետության որոշման չափանիշ է համարվում լիազորությունները և ընթացակարգային երաշխիքները: Մինչդեռ միանշանակ է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հատկանիշներով օժտված դատարանի լիազորությունները, գործունեության սկզբունքները և երաշխիքները բավարարում են Կոնվենցիայի 13-րդ հոդվածի պահանջներին:

Սահմանադրաիրավական և քրեական պատասխանատվության տարբերությունները չեն սահմանափակվում միայն վերը նշվածով: Առանձնահատուկ են սահմանադրաիրավական պատասխանատվության արգելանքները, որոնք էլ հաճախ դառնում են իրավաբանական պատասխանատվության այլ տեսակներից տարբերակելու չափանիշ (սահմանադրաիրավական արգելանքների առանձնահատկություններն առանձին քննարկման թեմա է):

Այսպիսով, վերլուծության արդյունքում կարելի է եզրակացնել.

1. Սահմանադրաիրավական պատասխանատվությունն իրավաբանական պատասխանատվության ինքնուրույն տեսակ է: Ներկայումս այս հանգամանքը համարվում է դասագրքային ճշմարտություն:

2. Սահմանադրաիրավական պատասխանատվությունն իր առանձնահատկություններով տարբերվում է իրավաբանական պատասխանատվության այլ տեսակներից, մասնավորապես քրեական պատասխանատվությունից:

3. Սահմանադրաիրավական պատասխանատվության մի շարք հարցերի վերաբերյալ առկա են տարակարծություններ, նույնիսկ ձևավորված չէ այս ինստիտուտի հասկացության հարատուր, ինչը բարդեցնում է համեմատական վերլուծությունը: Ուստի, սահմանադրաիրավական պատասխանատվության ինստիտուտը, լինելով իրավագիտության արդիական հարցերից, պետք է գտնվի հետազոտողների ուշադրության կենտրոնում:

Գրականություն

1. Актуальные проблемы юридической ответственности. Обзор межвузовской научно-практической конференции: Волжский университет им. В.Н. Татищева, 24-25 апреля 2003, Тольятти.
2. Проблемы конституционно-правовой ответственности (по материалам конференции на юридическом факультете). Вестник Московского университета. Серия 11, Право, 2001/3, с.124.
3. *Назаров Д. И., Назарова И. С.*, Ответственность в конституционном праве. Конституционное и муниципальное право. 2001, №1, с. 16-17.
4. *Оганесян Р. Г.*, История учреждения института конституционной ответственности в России. В. кн. Проблемы эффективности публичной власти в РФ. Ростов-на-Дону. 2003. <http://grant-urfak.econ.rsu.ru/public/oganes1.doc>
5. *Авакьян С. А.*, Санкции в советском государственном праве. СГиП. 1973 №11.
6. *Зражевская Т. Д.*, Ответственность по советскому государственному праву. Правоведение. – 1975, №3, с. 80-86:
7. *Виноградов В. А.*, Актуальные проблемы конституционно-правовой ответственности. Законодательство. 2002, №10.
8. *Сырых В.М.*, Теория государства и права: Учебник.- 3-е изд. перераб. и доп. М.: Юстицинформ, 2004, тз 423-425, Теория государства и права. Под ред. Малахова В.П., Казакова В.Н.- М.: Академ. Проект, 2002, тз 58-288: Теория государства и права: Учебник/ Под ред. В.К. Бабаева.-М.: Изд. Юристъ, 2002, с. 509.
9. *Баглай М.В.*, Конституционное право РФ, М., 1999.
10. *Катков Д. Б., Корчиго Е.В.*, Конституционное право России. Уч. пос. Отв. ред. Ю.А. Веденеев.-М. Юриспруденция, 1999, ՀՀ սահմանադրական իրավունք, Երևանի պետ. համալս., Եր., 2000:
11. *Авакьян С. А.*, Государственно-правовая ответственность.СГиП.1975, №10, с. 22.
12. *Колосова Н. М.*, Конституционная ответственность в РФ, М. 2000, с. 8.
13. *Поляков А. В., Тимошина Е. В.*, Общая теория права: Учебник.- СПб.: Изд. Петерб. гос. ун-та, 2005, с. 443.
14. *Авдеенкова М., Дмитриев Ю.*, Конституционно-правовая ответственность в РФ. <http://ydmitriev.ru/txt/0007.htm>.

ARTUR GHAMBARYAN

Post – graduate PAA of RA

**CONSTITUTIONAL-LEGAL RESPONSIBILITY IN THE
SYSTEM OF LEGAL RESPONSIBILITY**

In his article titled “Constitutional-legal responsibility in the system of legal responsibility” the author presents the constitutional-legal responsibility an emerging type of legal responsibility. The author especially stresses out the issue of relationship between the constitutional-legal and criminal responsibilities. This issue, i.e. the co-relation of the constitutional-legal and criminal responsibilities, is being considered from the following standpoints: the subject of responsibility, normative basis for the responsibility, the factual basis and the order of bringing to responsibility.

ՎԻԼԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

*ՀՀ ՊԿ ակադեմիայի հանրային
կառավարման ամբիոնի ասպիրանտ*

**ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ**

«Հանրային կառավարում» և «տնտեսության հանրային կառավարում» արտահայտությունները ներկայումս շատ գործածական են և համեմատաբար նոր են մուտք գործում հայ իրականություն, որպես գիտական կատեգորիաներ: Այդ իսկ պատճառով դրանք ունեն իրենց յուրահատուկ և տարբեր մեկնաբանությունները: Արտասահմանյան գրականության մեջ մենք հանդիպում ենք հանրային կառավարում տերմինի օգտագործման երկու տարբերակներ՝ «Public administration» և «public management»: Այստեղ անհրաժեշտ է ուշադրությունը սևեռել «public» բառի վրա, որը թարգմանաբար նշանակում է (պետական, հանրային, հասարակական), իսկ «administration» և «management» բառերը համապատասխանաբար՝ կառավարում և ղեկավարում: Եվ ահա հենց «public» բառի տարբեր իմաստներից ելնելով է, որ երբեմն նույնացվում են պետական և հանրային կառավարում կատեգորիաները: Սակայն այս երկու կատեգորիաների միջև գոյություն ունեն էական իմաստային տարբերություններ, որովհետև հանրային կառավարումն ընկալվում է որպես պետական և տեղական ինքնակառավարման համակարգերի միասնություն՝ իր մեջ ընդգրկելով նաև հասարակական, քաղաքական կազմակերպությունները և ՁԼՄ-ները [1, էջ 5]: Ավելացնենք նաև, որ հանրային կառավարումն ավելի բնորոշ է քաղաքացիական հասարակությանը և դիտվում է որպես երկրի զարգացման ու կատարելագործման որոշակի մակարդակ, որում հասարակությունը մասնակից է դառնում երկրի կառավարմանը:

Հանրային կառավարման համակարգում արդյունավետության հիմնահարցն առաջնային տեղ է զբաղեցնում: Վերջին տարիների զարգացման միտումները՝ միջպետական տնտեսական հարաբերությունները, պետական և մասնավոր հատվածների միջև մրցակցությունը ստիպում են պետությանը՝ ուշադրություն սևեռել արդյունավետ կառավարման և տնտեսական բարձր արդյունավետություն ապահովելուն: Արդյունավետության բարձրացման միջոցով հնարավոր է հասնել պե-

տության և հանրության միջև գոյություն ունեցող շահերի ճիշտ զուգակցման: Այսինքն՝ պետության արդյունավետ գործունեության արդյունքներն անմիջականորեն իրենց ազդեցությունն են ունենում երկրի բնակչության բարեկեցության, կյանքի որակի և կենսամակարդակի բարձրացման վրա, մի խոսքով, առնչվում են հանրության շահերի հետ: Այդ իսկ պատճառով հանրային կառավարման արդյունավետության գնահատման անհրաժեշտությունը դառնում է հրատապ:

Տնտեսության հանրային կառավարման արդյունավետության հետ բավականին մեծ շփման եզրեր ունի ներկայումս եվրոպական որոշ երկրներում գործունեության մեջ դրված *«ակտիվացնող»* քաղաքականության հայեցակարգը [2, էջ 61]: Հայեցակարգի նպատակը կայանում է ոչ պետական ինստիտուտների գործունեության ակտիվության խթանման մեջ:

Այս երևույթը դիտվում է որպես պետության գործառույթների օտարման գործընթաց և արմատական փոփոխությունների հիմք պետության դիրքի և դերի տեսանկյունից ելնելով, որը միայն պետք է կատարի խթանող, ակտիվացնող և նախաձեռնող գործառույթներ: «Ակտիվացնող» հայեցակարգը ձևավորվել է երկար տարիների ընթացքում եվրոպական որոշ երկրներում (Անգլիա, Ֆրանսիա) իրականացված բարեփոխումների արդյունքում, որին հարկ ենք համարում անդրադառնալ պատմական ակնարկի միջոցով:

Շատ տեսաբաններ սկզբնական շրջանում կարծում էին, որ հանրային խնդիրները հնարավոր է լուծել ուժեղ պետության միջոցով, հետագայում այդ հարցերի լուծման բարդությունը սկսեցին կապել մասնավոր հատվածի և շուկայի հետ, սակայն այդ սպասելիքներն իրենց ցանկալի արդյունքները չտվեցին: Իսկ այժմ ելքը տեսնում են պետության, գործարարության համագործակցության և քաղաքացիական հասարակության ուժերի մեկ միասնական համակարգում միավորման մեջ: Իսկ այդ ամենն իրականացնելու համար անհրաժեշտ են ձևավորել նոր պահանջները բավարարող հասարակական ինստիտուտներ՝ հաշվի առնելով ժամանակակից մարտահրավերներն ու վտանգները: Այդ իսկ պատճառով պետության գործունեությունը պետք է կառուցված լինի՝ ապակենտրոնացված, քաղաքացիների համար գործող, կոռուպցիայից անկախ և լավ կառավարելի հիմքի վրա:

«Ակտիվացնող» հայեցակարգի հիմքում ընկած են երեք տարրեր՝

- երաշխիքների համակարգի ձևավորում և պատասխանատվության բաժանում,
- խնդիրների լուծման հարցում հանրության ակտիվ մասնակցություն,
- արդյունավետություն և խնայողություն:

Ըստ էության դա պատասխանատվության նոր բաժանում է պետության և հանրության միջև, որը փոխում է պետական քաղաքականության ուղղությունը՝ այն տանելով դեպի սոցիալական ոլորտ: Բացահայտենք դրա պատճառը: Պարզվում է, որ դրա հիմքում առաջին

հերթին ընկած է տնտեսական աճի խթանումը և պետության սոցիալական ոլորտում արվող մեծ ծախսերը: Նշված երկու ոլորտները, որոնք ընդգրկում են մի շարք ենթաօլորտներ կրում են համակարգված բնույթ՝ ներառելով իրենց մեջ աշխատանքի շուկան, առողջապահական համակարգը, կրթությունը, հարկային և մաքսային համակարգը, տեղական ինքնակառավարումը և այլն: Վերջնական արդյունքում գիտնականները եկել են այն եզրակացության [2, էջ 62], որ պետության առջև պետք է մնան քաղաքականության նպատակների և առաջնահերթությունների որոշման, հանրության սոցիալական խմբերի շահերի կոորդինացման ու համաձայնեցման, պետական ծրագրերում և նախագծերում քաղաքացիների ներգրավման, պետական ապարատի գործունեության արդյունքների մոնիտորինգի և վերահսկողության իրականացման խնդիրները:

Պետական կառավարման ժամանակ իշխանությունը համապատասխան ռեսուրսներն օգտագործում է և՛ ձևական, և՛ ոչ ձևական ինստիտուտների միջոցով՝ հանրային բարիքներ ստեղծելու նպատակով (ապրանքներ, ծառայություններ և այլն): Այդ իսկ պատճառով կարևորություն է ներկայացնում պետության գործունեության արդյունավետության որոշումը, այսինքն՝ թե նա ինչպե՞ս է օգտագործում հանրային ռեսուրսները:

Պետության գործունեության և ընդհանրապես հանրային կառավարման արդյունավետության չափման համար ՄԱԿ-ի մասնագետների կողմից մշակվել է **պետական կառավարման արդյունավետության գնահատման մեթոդաբանությունը** [2, էջ 62-63], որը ներառում է մի շարք ցուցանիշներ, որոնք ընդգրկված են հինգ խմբերում՝

1. Պետական իշխանության հաշվետու և ընտրված լինելու ցուցանիշներ՝
 - 1.1. կառավարության ընտրությանը բնակչության մասնակցությունը,
 - 1.2. ՁԼՄ-ների անկախությունը,
 - 1.3. քաղաքական իրավունքների և ազատությունների պահպանումը:
2. Քաղաքական կայունությունը՝
 - 2.1. քաղաքական անկայունության հավանականությունը,
 - 2.2. ներքին բռնության և ահաբեկչության մակարդակը:
3. Կառավարման արդյունավետությունը՝
 - 3.1. հանրային ծառայությունների որակը,
 - 3.2. պետական ծառայության կոմպետենտությունը,
 - 3.3. պետական բյուրոկրատիայի աշխատանքի որակը,
 - 3.4. պետական ծառայության անկախությունը քաղաքական ճնշումներից,
 - 3.5. բնակչության վստահությունը պետական քաղաքականության նկատմամբ:
4. Պետական կարգավորման համակարգի որակը՝

- 4.1. տնտեսության զարգացման արդյունավետությունը,
- 4.2. պետական միջամտության մակարդակը շուկայական կառուցակարգի գործունեությանը,
- 4.3. ստվերային տնտեսության մասշտաբները:
5. Կոռուպցիայի հսկողությունը`
 - 5.1. իշխանությունը սեփական նպատակներով օգտագործելը,
 - 5.2. կոռուպցիայի ընկալումը բնակչության կողմից:

Այս ցուցանիշներով հաշվարկվում է **պետական կառավարման արդյունավետության ինդեքսը**: ՄԱԿ-ի կողմից մշակված այս ցուցանիշներն օգտագործվում են երեք խումբ երկրների (ինդուստրիալ զարգացած երկրների, արևելյան և կենտրոնական Եվրոպայի երկրների, ԱՊՀ երկրների) համար պետական կառավարման արդյունավետությունը հաշվարկելիս:

Արդյունավետություն կատեգորիան բազմիմաստ է և շատ դեպքերում բանավեճերի հիմք է հանդիսանում կառավարման բնագավառի մասնագետների և տնտեսագետների համար: Եվ այս հարցի հետաքրքիր կողմերից մեկն էլ այն է, որ հարցը դիտվում է և՛ **կառավարման (հանրային կառավարում) արդյունավետության**, և՛ **տնտեսական արդյունավետության** տեսանկյուններից ելնելով: Իհարկե, մենք կարծում ենք, որ այս երկու ասպեկտներն իրենց կարևորությամբ չեն զիջում մեկը մյուսին և ամբողջական արդյունավետության տեսանկյունից հարցը դիտարկելով՝ հանրագումարային արդյունավետությունը, այս երկու բնագավառներում այն իդեալական տարբերակն է, որին ձգտում են հասնել բոլոր երկրները, բայց և այնպես բավականին դժվար է գտնել մեթոդաբանական գնահատման այն եզրերը, որոնք կապ են ստեղծում վերոնշյալ երկու համակարգերի միջև: Այդ իսկ պատճառով ներկայացնենք գիտական գրականության մեջ առկա արդյունավետության բնորոշումներն ու տարբեր բացատրությունները:

Անգլերեն լեզվում գոյություն ունեն «արդյունավետություն» տերմինի իմաստն արտահայտող տարբեր բառեր, որոնք ունեն իմաստային որոշակի տարբերություններ և առանձնահատկություններ [3, էջ 218]:

Արդյունավետությունն անգլերեն լեզվում բնորոշվում է հետևյալ տերմիններով՝ «efficiency» – տնտեսական արդյունավետություն, «effectiveness» – տեխնոլոգիական արդյունավետություն, «managerial efficiency» – կառավարչական (կառավարման) արդյունավետություն, «productivity» - արտադրողականություն:

Տնտեսական արդյունավետությունը [3, էջ 219] ցույց է տալիս, այն տեխնոլոգիապես արդյունավետ արտադրության միջոցը, որի դեպքում օգտագործված արտադրական գործոնների այլընտրանքային ծախսերը տվյալ ծավալի արտադրանք արտադրելու համար կլինեն նվազագույնը:

Տեխնոլոգիական արդյունավետությունը [4, էջ 85] այն է, երբ թողարկված արտադրանքի տվյալ ծավալին հնարավոր է դառնում հաս-

նել, առնվազն արտադրության գործոններից գոնե մեկի օգտագործման նվազեցման շնորհիվ:

Կառավարման արդյունավետությունը [3, էջ 219] ժամանակակից գրականության մեջ առավել տարածված հասկացություն է, որի հիմքում ընկած է միավոր արտադրանքի վրա կատարված ծախսերի և ստացված արդյունքների հարաբերակցությունը:

Գիտական գրականության [5; 6] մեջ գոյություն ունեն տնտեսական արդյունավետության հետևյալ տեսությունները՝ **Պարետոյի** արդյունավետություն, **Կալդոր – Հիքսի** արդյունավետություն և **զուտ արդյունավետություն**:


Պետությունը նախ և առաջ պարատավոր է տնտեսապես արդյունավետ կերպով բավարարել իր քաղաքացիների պահանջումները հանրային բարիքներով: Բայց պետք է նշել, որ դա պահանջում է մեծ ջանքեր: Շատ դեպքերում պետությունից պահանջվում է եկամտի արդարացի բաշխում, իսկ երբեմն նաև սեփականության ճիշտ բաշխում: Բաշխման քաղաքականությունը՝ պետության գործունեության կարևորագույն ուղղություններից է, այդ իսկ պատճառով տնտեսության հանրային հատվածի արդյունավետությունն անմիջականորեն առնչվում է բաշխման քաղաքականության հետ: Շատ մեծ կարևորություն է ներկայացնում նաև վերաբաշխման գործընթացը, որը տանում է ռեսուրսների վերատեղաբաշխման և փոփոխությունների՝ անհատի բարեկեցության մակարդակում: Ազգային հաշիվների համակարգում (ԱՀՀ) օգտագործվում են եկամուտների առաջնային կամ սկզբնական և երկրորդային բաշխման հաշիվները, որոնց առանձին ցուցանիշների և դրանց կշիռների հիման վրա հնարավոր է պատկերացում կազմել երկրում գոյություն ունեցող բաշխման համակարգի արդյունավետ գործունեության վերաբերյալ: Որպես պետության բաշխման քաղաքականության հիմնական լծակ օգտագործվում են տրանսֆերտները, որոնց միջոցով ռեսուրսները վերատեղաբաշխելիս պետությունը ստիպված է լինում կատարել լրացուցիչ ծախսեր, որոնք այլ կերպ անվանվում են նաև այլընտրանքային ծախսեր, սակայն այդ ծախսերի փոխհատուցումը տեղի է ունենում ռեսուրսների սահամանային արտադրողականության հաշվին ապահովված արդյունքների շնորհիվ, այսինքն՝ մի վիճակ, որտեղ տնտեսության ներուժային հնարավորություններն օգտագործվում են առավելագույն կերպով: Պետք է նշել, որ այս դեպքում ոչ բոլոր տնտեսավարող սուբյեկտները կարող են գտնվել հաղթողի կարգավիճակում, քանի որ ոչ բոլորը կարող են իրենց գործունեությունը կազմակերպել՝ հասնելով ռեսուրսների օգտագործման սահմանային արտադրողականության մակարդակին: Այդ իսկ պատճառով հայտնի տնտեսագետներ՝ Ն. Կալդորը և Ջ. Ռ. Հիքսը [5, էջ 87-88] առաջարկում են **փոխհատուցման (կոնպենսացիայի) սկզբունքը**, ըստ որի տնտեսական մի վիճակից մյուսին անցումն իրենից ներկայացնում է հանրության կարգավիճակի բարելավվում, եթե հանրության այն անդամները, որոնց բարեկեցությունն աճել է կարող են փոխհատուցել

այն կորուստները, որոնք կրել են հանրության մյուս անդամները՝ միևնույն ժամանակ պահպանելով բարեկեցության մակարդակը՝ վատագույն դեպքում սկզբնական մակարդակին հավասար: Այս գաղափարների ի հայտ գալուց հետո դրանք շատ ու շատ հակասական քննարկումների առիթ հանդիսացան: Այս տեսության հիմնադիրները նպատակահարմար էին համարում այն կիրառել մաքսային և հարկային քաղաքականության բնագավառներում՝ կապելով այն հարկերի իջեցման և մաքսերի վերացման հետ: Այս տեսությունն ունի նմանություններ Պարետոյի տեսության հետ, որի հիմքում ընկած են բարեկեցության երկու հիմնարար թեորեմները:

Несколько с иной, скорее психоаналитической позиции, трактует индивидуальность В. Н. Колесников, считая, что "... концепция бессознательного должна стать базовой концепцией системной концепции индивидуальности", а "индивидуальность образуют живые сущностные силы, действующие из глубин, "бессознательного", при этом силы бессознательного должны иметь приоритет над осознаваемыми Силами..." [11, с. 25, 27]. В основу трактовки индивидуальности В. Н. Колесников положил идею спонтанной активности, предполагающей самодетерминацию личности и реализующегося в трех принципах: активности, саморазвития, иерархичности. "Принцип активности, - считает автор, - постулирует приоритет "внутреннего над внешним" в трактовке причинности системных явлений: причина поведения системы находится "внутри", а "внешнее" играет роль условий, влияющих лишь на специфику развертывания внутренней причины" (Там же, с. 29). "Принцип саморазвития требует поиска целевой причинности душевных явлений, "прошлое" играет роль лишь предусловий, более способствующих формированию одних целей и усыплению других" (в этой связи анализируется такая черта индивидуальности, как телеологичность или устремленность к будущему (неосознаваемой цели), отмеченной еще А. Адлером). Что касается принципа иерархичности, то он, согласно В. Н. Колесникову, "требует поиска метасистемной (наиндивидуальной) причинности душевных явлений: активность "субсистемного" уровня включена по правилу содействия в "системный" (Там же, с. 77).

В несколько ином ключе строятся исследования, понимающие индивидуальность как итог, результат индивидуального развития человека. Данный подход предполагает анализ внутренних динамических источников индивидуальности человека. В центре исследования

становится проблематика изменения, развитие и саморазвитие личности. Развитие личности осуществляется через разрешение многочисленных противоречий в жизнедеятельности, внутренних конфликтов, трудностей, связанных с социальной дезинтеграцией, которые переживаются различными способами и имеют индивидуальные закономерности. Рассмотрение этих закономерностей предполагает новый подход к индивидуальности, понимание её как результата индивидуального развития. Такое толкование больше характерно для психотерапевтического направления и исследований, направленных на изучение развития личности в онтогенезе, где становление человека рассматривается через анализ уникальности (содержательной и динамической) его социализации. В контексте возрастного развития индивидуальность нередко рассматривается как новообразование, возникающее на определенном этапе становления личности, когда она начинает быть не столько объектом воздействия среды, сколько самостоятельным творцом своего бытия и своей личности.

Интересны исследования индивидуальности, следующие принципу изучения особенностей ярких индивидуальностей. А.А.Бодалев, например, использует понятие "акме" для указания особой продуктивности личности и анализирует различные характеристики, которые могут помочь объяснить состоятельность "акме" индивидуальностей, подробно рассматривает особенности достижения "акме" выдающимися людьми [4, с.44].

Трактуя индивидуальность и процесс индивидуализации, можно бесконечно долго перечислять существующие подходы, однако в самом общем виде на основе уже проведенного анализа можно выделить некоторые подходы к индивидуализации:

1. индивидуализация как субъективация, т.е. становление личности в качестве субъекта;

2. индивидуализация как выделение из сообщества, оформление её отдельности, уникальности, неповторимости;
3. индивидуализация как существование, индивидуальное бытие личности;
4. индивидуализация как реализация уникальной сущности личности, её творческое самовыражение;
5. индивидуализация как выработка уникальных жизненных стратегий, смыслов, стилей деятельности, отражающих характер и уровень адаптивности личности;
6. индивидуализация как интимизация, т.е. включение социального в глубинные слои личности;
7. индивидуализация как индивидуация, т.е. движение от сознательного к бессознательному постижению и преодолению бессознательного сознательным, становление самости.

Литература

1. **Абульханова-Славская К. А., Серенкова В. Ф.**, Индивидуализация и типизация в изучении реальной личности и сознания. /Индивидуальность в современном мире. - Часть 1, Смоленск, 1995, с. 5-12.
2. **Ананьев Б. Г.**, Человек как предмет познания. — Л., 1968.
3. **Асмолов А. Г.**, Психология индивидуальности: методологические основы развития личности в историко-эволюционном процессе, М., 1986.
4. **Бодалев А. А.**, О роли социальной микросреды в достижении человеком вершины в своем развитии. (Личность в воспитательной системе: общение и саморазвитие), - Хабаровск, 1995.
5. **Брушлинский А. В.**, Социальность субъекта и субъект социальности. / Субъект и социальная компетентность личности / Под ред. А.В. Брушлинского. М., 1995, с. 3-23.
6. **Выгодский Л. С.**, Собр. соч. в 6-ти т., М., 1984, т. 4.
7. **Вышеславцев Б. П.**, Этика преображенного Эроса., М., 1994.
8. **Гегель В. Ф.**, Энциклопедия философских наук. Наука логики. Т. 1, М., 1974.
9. **Гулямов М. А.**, Человеческая индивидуальность, Душанбе, 1991.
10. **Дорфман Л. Я.**, Образ человека в концепциях индивидуального стиля деятельности. / Индивидуальность и способности. М., 1994, с. 43-70.
11. **Колесников В. Н.**, Лекции по психологии индивидуальности. М., 1996.
12. **Кон И. С.**, Личность как субъект общественных отношений, М., 1966.
13. **Крупнов А. И.**, Психофизиологический анализ индивидуальных различий активности личности. Учебное пособие. Свердловск, 1983.

14. **Крупнов А. И.**, Активность, направленность и саморегуляция в психологической структуре индивидуальности человека. / Психология и психофизиология индивидуальных различий в активности и саморегуляции поведения человека, Сб. научн. трудов, Свердловск, 1987. с. 3-14.
15. **Либин В. А.**, Стиль человека: от изучения индивидуальных различий к анализу общепсихологических закономерностей. / Индивидуальность в современном мире. – ч. 1, – Смоленск, 1995. с. 118-123.
16. Личность и массовая коммуникация. – Тарту, 1969, с. 47.
17. **Мерлин В. С.**, Очерк интегрального исследования индивидуальности. М., 1986.
18. **Морозов С. М.**, Проблемы индивидуальных различий с точки зрения теории деятельности (Психологические проблемы индивидуальности) , М., 1983.
19. **Орлов Ю. М.**, Восхождение к индивидуальности: Кн. для учителя. М., 1991.
20. **Петровский А. В.**, Развитие личности и проблема ведущей деятельности. / Вопросы психологии. 1987, □ 1.
21. Проблема человека в современной философии – М., 1969.
22. **Радзиховский Л. А.**, Социализация индивида. / Психологические проблемы индивидуальности. М., 1983.
23. **Резвицкий И. И.**, Личность Индивидуальности. Общество: Проблемы индивидуализации и её социально-философский смысл. М., 1984.
24. **Рубинштейн С. Л.**, Основы общей психологии, М., 1946.
25. **Рубинштейн С. Л.**, Принципы и пути развития психологии, М., 1959.
26. **Рубинштейн С. Л.**, Проблемы общей психологии, М., 1973.

-
27. **Слободчиков В. И., Исаев Е. И.,** Основы психологической антропологии. Психология человека: Введение в психологию субъективности. Уч. пособие для вузов. М., 1995.
 28. **Старовойтенко Е. Б.,** Жизненные отношения личности: модели психологического развития. — К., 1992.
 29. **Столяренко Л. Д.,** Основы психологии. Ростов н/Д, 1996.
 30. Типологические исследования по психологии личности. Под ред. В. С. Мерлина. — Вып. 4, 1967.
 31. «Կանթեղ» 2004, № 1, էջ 173-183:
 32. «Կանթեղ» 2005, № 2, էջ 159-169:

SVETLANA HARUTYUNYAN

Ph.D. of Pedagogics

PROBLEMS OF SOCIALIZATION AND INDIVIDUALIZATION IN PSYCHOLOGY

The article views the processes of socialization and individualization in the ontogenetic development of a person from various points. As the development and becoming of an individual today are viewed from new positions, namely development and not formation, the existing attitudes in psychology are being overviewed nowadays.

The process of socialization in the history of psychology is defined as:

1. exteriorization
2. hominization
3. adaptation
4. internalization
5. tipification.

Individualization is:

1. subjectivation
2. uniqueness
3. individual existence of an individual
4. creative self-expression
5. development of lively strategies
6. intimization
7. individuation.

ԳԱՅԱՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*ԳՀ պետական կառավարման ակադեմիայի
հոգեբանության ամբիոնի հայցորդ*

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԻՏՈՒՄՆԵՐՆ ԱՌԱՋՆՈՐԴՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՒՄ

Առաջնորդումը համալիր երևույթ է, որը հատուկ է ինչպես մարդկանց, այնպես էլ կենդանական աշխարհի շատ տեսակներին: Ուստի, լինելով սոցիալական երևույթ, առաջնորդումն ունի կենսաբանական արմատներ և բնորոշ է բարեփոխման բարդ համակարգով: Մարդկանց կառավարումը, այնքան վաղնջական է, որքան մարդկության պատմությունը: Այն սկիզբ է առել, առաջին իսկ սոցիալական խմբի ձևավորման հետ մեկտեղ, նրանում իսկույն առանձնացել է մեկը, որը ստանձնել է առաջնորդի դերը: Ժամանակակից կառավարման հոգեբանության տերմինաբանությամբ այդ առաջնորդին կարելի է բնորոշել «ոչ պաշտոնական»՝ ըստ ընտրության և «խարիզմատիկ»՝ ըստ ազդեցության:

Բոլոր ժամանակներում և բոլոր ժողովուրդների մոտ արդյունավետ ղեկավարման հիմնահարցերը մեծ մտածողների ուշադրության կենտրոնում են եղել: Ուշագրավ է, որ կառավարման սկզբունքներն արտացոլվել են դեռևս եգիպտական հերոզլիֆներում, որոնցով տարբերակում էին «սեսիմետ» - առաջնորդում, «սեսիենու» - առաջնորդ «սիենսու» - հետևորդներ:

Այդ օրվանից շուրջ հինգ հազար տարի է անցել և միայն XX դարի երկրորդ կեսին է ձևավորվել կառավարման հոգեբանությունը, իբրև գիտություն, որը հիմնականում ուսումնասիրում է մարդկանց կառավարելու կառուցակարգերը և ղեկավարող սուբյեկտի ու առաջնորդի սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները:

Այսօր առաջադիմական երկրներում¹ կառավարման հոգեբանությունը լայն տարածում ստացած, սրընթաց զարգացող տեսական և կիրառական գիտություն է: Ստեղծված են բազմաթիվ տեսություններ, հայեցակարգեր, գործնական ձեռնարկներ և հանձնարարականներ, խորհրդատվական կենտրոններ, որոնք նպաստում են ժամանակակից

¹ Նախ Անգլիայում, Գերմանիայում, հետագայում ճապոնիայում և Հարավային Կորեայում: Թվարկած երկրների հզոր և արագընթաց տնտեսական աճն անվիճելի է: Մեր կարծիքով այստեղ իր դերն ունի նաև կառավարման հոգեբանության գիտական արդյունքների կիրառումը:

սուր մրցակցության պայմաններում տարբեր կարգավիճակ ունեցող կազմակերպությունների և ղեկավարների առաջադիմությանը:

Հայտնի գիտնական Ռ. Ստոգդիլը, դեռևս 1974 թվականին հրատարակված առաջնորդման մասին հանրահայտ գրքում, շուրջ երեք հազար աշխատություններ է հիշատակել [1]: 1990 թվականին Նյու Յորքի պետական համալսարանի պրոֆեսոր Բ. Բասսն արդեն նշում է շուրջ հինգ հազար հեղինակների գործեր [2]: Նրա դասագիրքը համարվում է առաջնորդման մասին ամբողջական լավագույն հանրագիտարան:

Վերը նշվածը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր տարի գրեթե հարյուրավոր ուսումնասիրություններ են կատարվում, որոնցով նոր հայեցակարգեր, տեսություններ և միտումներ են ձևավորվում: Այս հոդվածում կաշխատենք ներկայացնել կառավարման բնագավառում տեղ գտած վերջին տարիների նորամուծությունները և միտումները՝ տարբեր մոտեցումների տեսանկյունից:

1. Տերմինաբանական մոտեցում: Ժամանակակից ամերիկյան կառավարման հոգեբանությանը վերաբերող գրականության մեջ ներմուծվել է «coach» տերմինը, ինչն անգլերեն թարգմանաբար նշանակում է դաստիարակ, մարզիչ, որը պետք է փոխարինի manager-ին: Առաջին անգամ, 1999 թվականին Ջերրի Ստիդը՝ խոշոր մի ընկերության ղեկավար, այցետոմսում իր անունից առաջ գրեց «Head Coach» այսինքն՝ գլխավոր դաստիարակ [3]: Դրանով նա հարուցեց ընկերության անդամների անհանգստությունը, իսկ զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների՝ զարմանքն ու խառնաշփոթը: Այս տերմինափոխության հիմքում ընկած է ղեկավարվող խմբի անդամների նկատմամբ ղեկավարի հոգեբանությունը փոխելու միտումը: Նպատակահարմար ենք գտնում նշել, որ «coach» բառով այսօր անվանում են նաև այն հոգեթերապևտներին կամ հոգեբան խորհրդատուներին, ովքեր օգնում են (coaching) ղեկավարներին աշխատանքն առավել արդյունավետ կազմակերպելու գործում, հատկապես ճգնաժամային իրավիճակներում:

Ըստ գերմանացի պատմաբան Ի. Շայդի [4]՝ մենեջմենտ տերմինն իտալական է և սերել է maneggiare բառից, որը նշանակում է ձիուն կառավարելու ունակություն: Կարելի է նկատել, որ սա ոչ մի կապ չունի ղեկավարելու հետ: Մինչդեռ անգլիական manager բառի իմաստն ոչ միայն պարզապես կառավարելու մեջ է, այլ նաև հնարք գտնելու և հաջողացնելու, այլ կերպ ասած՝ խորամանկելու, սանձահարելու և հնազանդեցնելու: Ինչպես ձիուն կառավարելու, այնպես էլ մարդուն կառավարելու արվեստը կարող է ամենատարբեր ձևեր ընդունել՝ սկսած կոպիտ առաջ քշելուց կամ ակնհայտ քծնանքից մինչև նրբանկատ խթանում, այնպիսի հաշվարկով, որ կառավարման օբյեկտը ոչ մի կաշկանդվածություն չզգա, սեփական խնդիրների պես կատարելով ուրիշի հրամանները:

Coach-ը ֆրանսիական բառ է, որն ի սկզբանե նշանակում է տեղափոխող միջոց: Այսօրվա coach-ի (դաստիարակ ղեկավարի) գործառույթն է օգնել մարդկանց զարգացման ցածր մակարդակից տեղափոխվել ավելի բարձրին:

Նրա դերը համեմատվում է ծնողի դերի հետ: «Երբ դուք ձեր առաջին քայլերն անելիս վայր էիք ընկնում և լացում, ձեր ծնողները չէին հանդիմանում, ասելով, դու երբեք այլևս չես քայլի, նստիր տեղդ և մեր ճանապարհին էլ մի կանգնիր, այլ ընդհակառակն՝ կարեկցում, սատարում էին, օգնում էին կանգնել և ձեռքը բռնելով այնքան էին քայլեցնում, մինչև դուք ազատ կարողանաք գնալ ուր ուզում եք» [5]: Դաստիարակ ղեկավարից պահանջվում է օգնել աշխատակցին հասնելու նրան, ինչին վերջինս է ձգտում: XXI դարի ղեկավարի սահմանումը դա դաստիարակ լինելն է: Երեկ ղեկավարը որոշումներ ընդունող և ռեսուրսներ միավորող էր, որի նպատակն էր ենթականերին լավագույնս շահագործել ի նպաստ կազմակերպության: Այսօր նա պետք է լինի մարդկանց ձևավորողը, նրանց հարաբերությունների կառուցողը և հարցնի. «Ինչպե՞ս ես կարող եմ օգնել այս անձնավորությանը դառնալու ավելի արժեքավոր որպես անհատ ինչպես իր համար և այնպես էլ մեր բոլորիս համար»: Տ. Գ. Գրեյնը, որն աշխատել է որպես ամերիկյան մի շարք խոշոր կազմակերպությունների ղեկավարների խորհրդական, առանձնացնում և մանրամասնորեն վերլուծում է կանխակարծությունների երկու խումբ [6]: Մի շարք կանխակարծություններ, խանգարում են ղեկավարին ստանձնելու դաստիարակի դերը, մյուսներն էլ՝ նպաստում են դրան: Ըստ Տ.Գ. Գրեյնի, որպեսզի առաջնորդն ավանդական ղեկավարի դերից անցնի դաստիարակի դերին, նա ոչ միայն պետք է տիրապետի մի քանի նոր կառավարման հնարների, այլ նաև փոխի իր մտածելակերպն ու վարքը: Այդպես՝ ավանդական բոս-ղեկավարն ավելի շատ մտածում է գործերը ճիշտ կատարելու մասին, իսկ դաստիարակ-ղեկավարը՝ ճիշտ գործեր կատարելու մասին:

2. Հայեցակարգային մոտեցում: Առաջնորդման մասին ժամանակակից ուղղություններից ամենատարածվածը «Նոր առաջնորդման» դպրոցն է, որի ուշադրությունը կենտրոնացված է *առանձնաշնորհյալ (խարիզմատիկ) կամ կերպարավորիվող առաջնորդման* հայեցակարգի զարգացման վրա [7]: Որոշ տեսաբաններ վերջինս անվանում են երազանքային կամ ներշնչողական առաջնորդման հայեցակարգ [8]:

Հայտնի է, որ առաջին անգամ «խարիզմատիկ» (առանձնաշնորհյալ) («խարիզմա» (առանձնաշնորհ) հունարեն բառ է, նշանակում է աստվածային շնորհք, պարզև) հասկացությունն օգտագործել է Սաքս Վեբերը [9]: Նրա կողմից նկարագրած առանձնաշնորհյալ (խարիզմատիկ) առաջնորդի կերպարն ընկած է արդի տեսությունների հիմքում: Ըստ Վեբերի առանձնաշնորհյալ (խարիզմատիկ) առաջնորդի իշխանությունը դա պայծառ, ցայտուն մարդու իշխանություն է, սակայն այդ պայծառության աղբյուրը, ավելի շատ գալիս է, ոչ թե տվյալ մարդուց, այլ նրան հետևող զանգվածներից, ովքեր անվերապահորեն սիրում են

նրան: Նման իշխանությունը մոլեռանդ է, սակայն իրավիճակային: Իրադրության փոփոխության հետ այդպիսի առաջնորդը կարող է շուտ խամրել: Առանձնաշնորհյալ (խարիզմատիկ) առաջնորդը խմբի ամենավառ արժեքների խտացրած մարմնավորողն է, նրան վերագրում են այն բոլոր որակները, որոնց միջոցով մարդիկ երագուն են հասնել սեփական նպատակների իրագործմանը: Այսօր, առանձնաշնորհյալ (խարիզմատիկ) կամ կերպարափոխվող առաջնորդման կողմնակիցներն ընդգծում են առանձնաշնորհյալ (խարիզմատիկ) ղեկավարների դրական ներուժը կառավարման գործընթացներում: Նրանք գտնում են, որ, ուսումնասիրելով առանձնաշնորհյալ (խարիզմատիկ) անձնավորություններին և նրանց գործունեության հոգեբանական առանձնահատկությունները, կարելի է տարբեր կարգավիճակ ունեցող ղեկավարներին սովորեցնել՝ դառնալ առանձնաշնորհյալ (խարիզմատիկ) առաջնորդ:

Մինևույն ժամանակ խոսում են առանձնաշնորհյալ (խարիզմատիկ) առաջնորդի վտանգավորության մասին: Պատմությունից հայտնի են անհատներ, որոնք ցուցադրել են առանձնաշնորհյալ (խարիզմատիկ) առաջնորդման սովերոտ կողմերը՝ լինելով վարպետ մանիպուլյատորներ և չարիք սփռողներ [10]: Բասսը և Ավոլիոն ներկայացրել են կերպարափոխվող առաջնորդի վարքը բնորոշող չորս հիմնական առանձնահատկություն. **1)** իդեալականացված ազդեցություն, **2)** ներշնչողական մոտիվացիա, **3)** ինտելեկտուալ խթանում, **4)** անհատական մոտեցում [11]: Յուրացնելով վարքի այս կառուցակարգերը՝ ցանկացած ընդունակ ղեկավար մեծ արդյունքների կարող է հասնել [12]: Կարծում ենք՝ կառավարման ասպարեզում այս նորամուծությունը կարևոր կիրառական նշանակություն ունի, հատկապես հայ իրականության համար, քանզի 62 երկրներում կատարած միջնաշաղկապային ուսումնասիրությունների համաձայն, ավանդապաշտ և զարգացող հասարակություններում գերադասում են առանձնաշնորհյալ (խարիզմատիկ) առաջնորդներին [13, էջ 219-256]:

Հաջորդ ուշագրավ միտումներից է *քրիստոնեական առաջնորդի հայեցակարգը*, որի կողմնակիցները գտնում են, որ ղեկավարի համար օրինակ պետք է ծառայի Քրիստոսի կերպարը: Հանրահայտ պրոֆեսորներ Ջ.Կոուզիսը, Բ. Պոզները և Ջ. Մաքսվելը, որոնց առաջնորդման վերաբերյալ գրված գրքերը լայն տարածում են գտել թե՛ մասնագետների և թե՛ ղեկավարների շրջանում (Ջ.Կոուզի և Բ. Պոզների «Լիդերության մարտահրավեր...» [14] գիրքը թարգմանվել է տասներկու լեզվով և միայն անգլերեն տպաքանակն անցել է մեկ միլիոնից), իրենց վերջին աշխատությունը նվիրել են առաջնորդման վրա քրիստոնեության արտացոլմանը: Գրքի հիմքում ընկած է քրիստոնեական ուսմունքի այն դրույթը, որի համաձայն զիջողականությունն առաջնորդող դրական դեր ունի բոլոր փոխհարաբերություններում: Այդ դրույթը բխում է Հիսուսի ղեկավարման օրինակներից. «Հիսուսը հաճախ չէր խոսում ղեկավարման մասին, իսկ երբ անում էր այդ, խոսում էր ծառայելու մա-

սին» [15, էջ 85-100]: Հեղինակները գտնում են, որ քրիստոնեական գաղափարները համահունչ են, իրենց կողմից (Ջ.Կոուզի և Բ. Պոզեն-րի) նախկինում մշակված, օրինակելի առաջնորդման հինգ հայտնի գործառնություններին՝ ճանապարհի ուրվագծում, ոգեշնչում ընդհանուր հեռանկարով, մարտահրավեր գործընթացին, ուրիշներին գործելու հնարավորության ընձեռնում, սրտի քաջալերում [15, էջ 7-40]: Նրանք ընդգծում են, որ հավատացյալ առաջնորդին մարդիկ հավատում և առավել խանդավառությամբ են հետևում, որն էլ նպաստում է ընդհանուր գործի հաջողությանը:

Ենթադրում ենք, որ սա կապված է հավատացյալ մարդու կերպարի անբասիրության հետ, աստվածավախ մարդն իրեն զերծ է պահում մեղքերից, արդարամիտ է և ներողամիտ: Այսպիսի մարդու հետևից գնում են ֆանատիկորեն: Հետևաբար քրիստոնեական մոտեցման հիմքում նույնպես ընկած է առանձնաշնորհյալ (խարիզմատիկ) առաջնորդման տեսությունը: Կարծում ենք ամենավառ խարիզմատիկ առաջնորդ կարելի է համարել Հիսուս Քրիստոսին: Պատմությանը հայտնի են շատ առանձնաշնորհյալ (խարիզմատիկ) առաջնորդներ, որոնց ժողովուրդն աստվածացրել է, հետո խաչել բառիս բուն կամ փոխաբերական իմատով, այսինքն՝ ֆիզիկապես կամ հոգեպես:

Մյուս նորամուծությունը *նարցիսական առաջնորդումն* է, որը մշակել է կառավարման հոգեբանության ոլորտի հայտնի տեսաբան և խորհրդատու մասնագետ Միշել Մակքոուբին: Նա «Արդյունավետ նարցիզմ...» [16] հետաքրքրություն առաջացրած գրքում, ամփոփելով ղեկավարներին ուսումնասիրելու տեսական և խորհրդատվական իրավելի քան երեսուն տարիների փորձը, հարստացրել է ղեկավարների տեսակների դասակարգումը՝ առանձնացնելով նարցիս առաջնորդի կերպարը: Մակքոուբին, ուսումնասիրելով պատմական դեպքերը, գտնում է, որ հենց Ֆրոյդի կողմից նարցիս անվանած անձնավորության տեսակն է դառնում պատմության մեջ ամենաարդյունավետ առաջնորդը ճգնաժամային իրավիճակներում: Մակքոուբին նարցիսական առաջնորդ էր համարում Նապոլեոնին: Նարցիսներն օգտակար են այն կազմակերպությունների համար, որոնք կարիք ունեն ավելի տեսանելի դառնալու, սատարվելու և նոր ուղությամբ գնալու: Սակայն նրանք կարող են ձախողվել, երբ հրաժարվում են լսել ուրիշի կարծիքները և ճիշտ խորհուրդները: Նման դեպքերում նարցիզմը վերածվում է ախտաբանության: Այստեղ հեղինակը տալիս է մի քանի գործնական խորհուրդներ: Առաջին հերթին նարցիս առաջնորդը պետք է գտնի վստահելի sidekick- ի (բառացի թարգմանելով նշանակում է կողքից բոթող), որը միշտ նրան իրականության հողի վրա կպահի, երբ վերջինս իր անձի տեսակին համաձայն կտարվի պաճուճվածությամբ: Երկրորդ՝ նարցիս ղեկավարը պետք է նույնականանա (հղենտիֆիկացվի) կազմակերպության հետ, չտարբերի սեփական նպատակները կազմակերպության և նրա անդամների նպատակներից: Միայն այդ դեպքում խմբի անդամները խանդավառությամբ կձգտեն դրանց իրա-

կանացմանը: Վերջապես այդպիսի ղեկավարները կարող են ձերբազատվել նարցիզմի բացասական ազդեցությունից հոգեվերլուծության միջոցով:

Մակքոուբիի այս տեսակետները մեծ հետաքրքրություն և հակասական արձագանքներ ստացան գիտական և հանրամատչելի գրականության մեջ, որոնց պատճառը երևում է արդեն իսկ, ինչպես նշված գրքի, այնպես էլ նրա Չարվարդի բիզնեսի դպրոցի ինտերնետային կայքում զետեղված հոդվածի վերնագրից՝ «Նարցիսական առաջնորդներ. անհավատալի կողմ և դեմ, անխուսափելի կողմ և դեմ» [17]: Ուշագրավ ենք համարում Ռ. Լևինգստոնի կարծիքը «Newsweek» -ից, «Արդյո՞ք որևիցե մեկը կպատկերացներ, որ Առնոլդ Շվարցները կընտրվեր Կալիֆոռնիայի նահանգապետ, այո, եթե կարդար Մակքոուբիի գիրքը: Կալիֆոռնիայի նոր ղեկավարը դասական նարցիս անձնավորություն է»:

Վ.Ի.Լենինը, որը մեր կարծիքով նարցիսական-ավտորիտար-մաքիավելիստական տեսակի առաջնորդ էր, քաղքենի նարցիսներ էր անվանում մենշևիկներին, էսեռներին և անկուսակցականներին» [18, էջ 239-240]: Այսպիսով, նա որպես նարցիս էր բնորոշում իր հակառակորդներին, պրոյեկտելով սեփական նարցիզմը նրանց վրա: Ինչպես հայտնի է Ադոռնոյի ավտորիտարիզմի մասին հեղինակավոր տեսությունից և նույնանվամբ թեստից ավտորիտար անձանց բնորոշ աղապատացիայի պաշտպանական հիմնական կառուցակարգերից է պրոյեկցիան (սեփական թերություններն ուրիշներին վերագրելը):

Ենթադրվում է, որ բոլոր մարդկանց էլ ինչ-որ չափով բնորոշ է նարցիզմը: Օսկար Ուայլդի նկարագրությամբ, երբ գեղեցիկ Նարցիսի մահը ողբացող գետակին հարցնում են, արդյոք շա՞տ էր գեղեցիկ Նարցիսը, նա պատասխանում է. որ չգիտի, որովհետև, երբ ամեն անգամ Նարցիսը խոնարհվում էր գետակում իր պատկերով զնայլվելու համար, գետակը նրա աչքերի խորքում տեսնում էր միայն սեփական գեղեցկության արտացոլումը: Այսպես, հետևորդները, հիանալով առաջնորդով, հաճախ նրա մեջ սեփական արտացոլումն են տեսնում: Հիմք ընդունելով Է. Ֆրոմին, որը նարցիզմը, որպես սեր սեփական անձի նկատմամբ, դիտում է դրական տեսանկյունից, կարծում ենք այն կարող է բարերար դեր խաղալ մարդու վարքում, եթե չի զուգորդվում եսակենտրոնության և էգոիզմի հետ: «Աստվածաշնչային «սիրիր մերձավորիդ, ինչպես ինքդ քեզ» գաղափարը ենթադրում է, որ հարգանքը սեփական ամբողջականության և եզակիության նկատմամբ, սերն ինքն իրեն նկատմամբ, ինքն իրեն հասկանալը չեն կարող բաժանված լինել ուրիշ անհատին հասկանալուց և սիրելուց» [19, էջ 74-80]: Ձարգացնելով այս միտքը՝ կարող են ասել, եթե անկախ կարգավիճակից, նարցիսական ղեկավարը սիրի իր գործը, իր կողմից կառավարվող խումբը, իր ժողովրդին այնպես, ինչպես ինքն իրեն է սիրում, ապա կարող է նշանակալից հաջողությունների հասնել ինչպես իր, այնպես էլ բոլորի համար:

3. Մշակութաբանական մոտեցում: Սա ղեկավարման ոլորտում համալիր մոտեցման հետաքրքրական փորձերից մեկն է, որն առաջարկել է Ահարոն Վիլդավսկին [20, էջ 87-113], և հետագայում զարգացրել են Ռ. Էլլիսը և Մ. Թոմսոնը [21]: Ըստ նրանց, առաջնորդումը քաղաքական ռեժիմի և համապատասխանաբար՝ քաղաքական մշակույթի գործառույթն է: Հետևաբար քաղաքական ռեժիմից է կախված առաջնորդման տեսակը: Վիլդավսկին առանձնացրել է ռեժիմի 4 հիմնական տեսակ և դրանցից յուրաքանչյուրին համապատասխանող մշակույթի և առաջնորդման տեսակները [21, էջ 97]:

- ա) Ռեժիմը՝** ավտորիտարիզմ
Մշակույթը՝ ֆատալիզմ (ճակատագրապաշտություն)
Առաջնորդումը՝ բռնապետական, անսահմանափակ, երկարատև
- բ) Ռեժիմը՝** կոլեկտիվիզմ
Մշակույթը՝ հիերարխիա (պաշտոնակարգություն)
Առաջնորդումը՝ դիրքային, սահմանափակ՝ ըստ ոլորտի, երկարատև՝ ըստ ժամանակի
- գ) Ռեժիմը՝** ինդիվիդուալիզմ (անհատապաշտություն)
Մշակույթը՝ շուկա
Առաջնորդումը՝ ասուպային (ասուլի պես հայտնվող և չքացող) սահմանափակ, կարճատև
- դ) Ռեժիմը՝ էգալիտարիզմ (հավասարապաշտություն)**
Մշակույթը՝ արդարություն
Առաջնորդումը՝ խարիզմատիկ, անսահմանափակ, կարճատև

Առաջին և երկրորդ ռեժիմները պրոառաջնորդական, երրորդը և չորրորդը՝ հակաառաջնորդական: Երկրորդ և երրորդ ռեժիմների պարագայում առաջնորդին պահանջներ ներկայացնելը համաչափ է նրան սատարելուն (երկրորդի ժամանակ երկուսն էլ հավասարաչափ բարձր են, երրորդից՝ ցածր): Իսկ ավտորիտար և էգալիտար ռեժիմների ժամանակ առաջնորդին ներկայացվող պահանջները չեն համապատասխանում նրան սատարելուն: Առաջինի դեպքում առաջնորդից քիչ են պահանջում, սակայն շատ սատարում, իսկ վերջինի՝ շատ պահանջում և քիչ սատարում:

Դժվար է թերագնահատել մշակութաբանական մոտեցման դերն առաջնորդման ուսումնասիրության ոլորտում: Սակայն կարծում ենք, որ այստեղ, ինչպես և խորհրդային գրականության մեջ անտեսվում է անհատի դերը, որովհետև ոչ միայն քաղաքական ռեժիմն է ծնում համապատասխան առաջնորդներ, այլ նաև ընդհակառակն՝ քաղաքական առաջնորդը կարող է ստեղծել իրեն հահամապատասխան ռեժիմ: Ինչևէ, այս տեսությունը շատ բան կարող է ուսուցանել ոչ միայն մասնագետներին, ներկայիս ղեկավարներին և ղեկավարի հավակնություն ունեցող անձանց, այլ նաև նրանց հետևորդներին:

Ինչպիսին էլ լինեն առաջնորդները, հասարակությունից շատ բան է կախված, քանզի ի վերջո նրանք են սատարում և պահանջներ ներկայացնում առաջնորդին:

Գրականություն

1. **Stogdill R. M.**, Handbook of Leadership. N.Y., 1974
2. **Bass B.**: Bass & Stogdill's Handbook of Leadership: theory, research, and managerial application. N.Y., 1990.
3. Coaching for Leadership : How the World's Greatest Coaches Help Leaders Learn / Edited by **Goldsmith M., Lyons L., Freas A.**, San Francisco: Jossey-Bass, 2000.
4. Ի նեօժեռանեօժե ի անաաաի անօ: Օ=աա. Ի ննն անն/Ի նն ննն. Ծաա. **Ա. Է. Բոժի ան, Ա. Ա. Էանի ան, Է. Ա. Էանոան, Ի. Օ. Օաննի ան** –Ի .: Էչա-ան Էիննեօօօա ի նեօննանննննն, 2004, с. 22-23.
5. **Belasco J. A.**, Foreword. In Coaching for Leadership : How the World's Greatest Coaches Help Leaders Learn / Edited by **Goldsmith M., Lyons L., Freas A.**, San Francisco: Jossey-Bass, 2000.
6. **Grane T.** The Heart of Coaching: Using Transformational Coaching to Create a High-Performance Culture. San Diego: FTA Press, 1998.
7. The Nature of Leadership /Ed. by **Antonakis J.** SAGE, 2004, p. 171-196
8. **Zacaro S.** Executive Leadership : A Conceptual and Empirical Analysis of Success. – Washington, American Psychological Association, 2002, p. 223-278.
9. **Бегер М.**, Избранные произведения, М., Прогресс, 1990.
10. **Conger J., Kanungo R.**, Charismatic Leadership in Organizations. SAGE, 1998.
11. **Bass B., Avolio B.** Improving Organizational Effectiveness through Transformational Leadership. SAGE, 1993.
12. **Avolio B., Yammario F.** Transformational and Charismatic Leadership. JAI Press, 2002.
13. **Hartog, D.N., House, R.J., Hanges, P.J.**, et al. (1999). Culture Specific and Cross Culturally Generalizable Implicit Leadership Theories: Are Attributes of Charismatic /Transformational Leadership Universally Endorsed? Leadership Quarterly, 10(2), p. 219-256.
14. **Kouzes J, Posner B.**, the Leadership Challenge: How to Keep Extraordinary Things Done in Organizations. San Francisco: Jossey-Bass, 1993.
15. **Kouzes J, Posner B, Maxwell J.**, Christian Reflections on the Leadership Challenge. San Francisco. 2004.
16. **Maccoby M.**, the Productive Narcissist: The Promise and Peril of Visionary Leadership. Brodway, 2003.
17. **Maccoby M.**, Narcissistic Leaders: The Incredible Pros, the Inevitable Cons (HBR OnPoint Enhanced Edition) Harvard Business School Press, 2001.

GAYANE HARUTYUNYAN

The article presents modern tendencies in the sphere of administration from the point of view of terminology, concept, and culturology. Theories of recent years on Transformational or Charismatic Leadership, Narcissistic Leaders and Christian Leaders, as well as culturological approach to the matter are analysed. The author thinks that psychological characteristics of the leader lying at the bottom of this concept are characteristic also of Armenian leaders and their knowledge will improve effective administration.

**ՏԻԳՐԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ
ԱՐԱՔՍՅԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

**ՈՒՐ ԵՆ ՏԱՆՈՒՄ «ԳՈՒՆԱՎՈՐ»
ՉԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃԱՄՓԱՆԵՐԸ**

Չետխորհրդային տրանսֆորմացիան սկսվեց ու ընթանում է բարդ ու լուրջ մարտահրավերներով հարուստ մի ժամանակաշրջանում: Մի քան տասնամյակ է, ինչ համաշխարհային արմատական վերափոխումներն այլևս ոչ թե քաղաքագետների կանխատեսումների առարկան են, այլ ամենօրյա իրականություն՝ որպես գլոբալացում, որը չափազանց արագ ու կտրուկ փոխում է աշխարհի պատկերը՝ զարգացման միօրինակեցման և ձևերի բազմազանության մեծացման միաժամանակյա գործընթացով [1]: Այդ ամենն ուղեկցվում է արդի ամենալուրջ մարտահրավերներից մեկով՝ ժողովրդավարության հրատապ վերափոխման ու զարգացման հրամայականով [2]: Արդյունքում հետխորհրդային տրանսֆորմացիան իրենից ներկայացնում է եզակի ու չափազանց բարդ, երկնակարգակ մի երևույթ, որն ընթանում է մի կողմից գլոբալ վերափոխումների, մյուս կողմից՝ նախկին սոցիալիստական երկրներում ժողովրդավարացման գործընթացների համաժամանակյա ազդեցությունների ներքո: Այդ երևույթն արդեն ունի մեկուկես տասնամյակի պատմություն, հայտնի են առաջին, միջանկյալ արդյունքները և առաջին փորձերը՝ ճշտելու այդ արդյունքները պայմանավորած օրինաչափությունները:

Չետխորհրդային տրանսֆորմացիայի վերջին մեկ տարվա ընթացքն առանձնանում է երկու որակապես նոր իրադարձություններով, որոնց ազդեցությունը հետագա զարգացումների վրա դժվար է գերագնահատել: Դրանցից առաջինը Եվրոպական Միության ընդլայնումն է, երկրորդը՝ «գունավոր» հեղափոխությունների շարքը: Այդ երկու իրադարձություններն իրենց հետ բերեցին որակական փոփոխություններ հետխորհրդային տրանսֆորմացիայի գործընթացում, միաժամանակ թելադրելով հենց այդ լուսի մերքո դիտարկել գործընթացն ու հետագա զարգացումների հեռանկարը, գնահատել այդ զարգացումների հնարավորություններն ու հետևանքները: Այս իրադարձություններն արձանագրեցին հետխորհրդային տրանսֆորմացիայի գործընթացում

գտնվող երկրների փաստացի բաժանումը երկու խմբի, որոնցից մեկի համար ազդարարելով այդ գործընթացի ավարտը, մյուսի համար առաջարկելով հետագա ընթացքի տարբերակ՝ «գունավոր» հեղափոխություններ, որն ունի տարաբնույթ ուժեղ աջակցություն մի շարք ազդեցիկ կենտրոններից: Հետևաբար, թե՛ տեսական և թե՛ գործնական առումով կարևոր նշանակություն են ստանում հետևյալ հարցադրումներն ու դրանց պատասխանները. որո՞նք էին այս բաժանման պատճառները, ո՞րն է լինելու հետխորհրդային տրանսֆորմացիայի ուղին ու հետագիծը, մասնավորապես, ի՞նչ հեռանկար ունեն «գունավոր» հեղափոխությունները:

Առաջին իրադարձությունը՝ Եվրամիության ընդլայնումը, ոչ միայն ունի աշխարհաքաղաքական նշանակություն՝ էապես մեծացնում է կարևորագույն եվրոպական կառույցի չափերն ու հնարավորությունները, դերակատարությունը համաշխարհային քաղաքական թատերաբեմում՝ նպատակ ունենալով վերադասավորումներ պարտադրել այդտեղ ու, թերևս, հեռանկարում փոխել մոտ երկու տասնամյակի տևողություն ունեցող միաբևեռ աշխարհակարգը: Այն գծում է նաև սահմանը (տրանզիտոլոգիայի տեսությունում՝ ժողովրդավարության կոնսոլիդացիա-[3]), որը հատող երկրների համար կարելի է արձանագրել ժողովրդավարական տրանսֆորմացիայի անդառնալիությունը և որակապես այլ հարթությունում գործելու հեռանկարներ: Միաժամանակ, այս շրջադարձն արմատապես փոխում է պատկերացումներն ընդհանուր ժողովրդավարական տրանսֆորմացիայի մասին, արձանագրելով, որ դա ավելի բարդ գործընթաց է, քան դրա վերաբերյալ սկզբնական պատկերացումներն էին:

Տրանսֆորմացիայի առաջին տարիներին քաղաքագիտական հետազոտությունների տեսակետից այս բազմաշերտ անցումային շրջանը թվում էր միանգամայն հասկանալի ու մեկնաբանվող և տեղավորվող գլոբալ ժողովրդավարացման «երրորդ ալիքի» տեսության շրջանակներում [4]: Ընդ որում, որոշ ուսումնասիրողների համար գայթակղություն էր առաջացել ենթադրելու, որ ի տարբերություն նախորդ երկու ալիքների (1828-1926 և 1943-1964թ.թ.) երրորդ ալիքը գործնականում տեղատվություններ չի ունենա՝ թույլ տալով բռնատիրությունների ու ավտոկրատիայի մասնակի վերականգնում [4, 5]: Ավելին, անգամ փորձեր են արվել նախանշել «չորրորդ ալիքի» սկիզբը, որն ուղղված է Աֆրիկային, Ասիային և մահմեդական, այդ թվում և արաբական աշխարհին [6]: Սակայն զարգացումները վկայեցին, որ առկա է ավելի բարդ գործընթաց, քան ենթադրվում էր սկզբում և այս դեպքում պետք է խոսել առնվազն հետկոմունիստական տրանսֆորմացիայի տարավեկտոր բնույթի մասին [7]: Պատահական չէ, որ բազմաթիվ փորձեր են արվել ձևակերպելու տրանսֆորմացիայի առաջին փուլի պարադիգմը, որոնցից առավել հաջողվածներից մեկը հիմնվում է հետևյալ հաստատագրումների վրա [8].

- բռնատիրական կառավարումից հեռացող երկրները շարժվում են դեպի ժողովրդավարություն,
- ժողովրդավարությունն ենթադրում է նոր ռեժիմի կայացմանը տանող հաջորդական փուլերի համախումբ,
- ժողովրդավարությանն անցման առանցքային տարր են ընտրությունները,
- կառուցվածքային բնութագրերը (տնտեսական զարգացման մակարդակը, քաղաքական պատմությունը, ժառանգած ինստիտուտները, սոցիոմշակութային ավանդույթները և այլն) շատ ավելի քիչ են ազդում տրանզիտի վրա, քան արարողակարգային բնութագրերը (քաղաքական դերակատարների գործողությունները),
- ժողովրդավարությունը կայանում է գործուն պետություններում:

Ակնհայտ է, որ այսօր արդեն կարելի է արձանագրել, որ այս բանաձևի առնվազն երկու հաստատագրում՝ առաջինն ու չորրորդը, գործնական հաստատում չստացան:

Հետաքրքիր է, որ հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրների դասակարգումը վերը նշված կամ նույնանման խմբերի ճշգրտորեն հանրակնուն է տրանսֆորմացիայի ընթացքի վերլուծությունների դասակարգումներին [9-12]: Այդ ուսումնասիրություններում որպես հաջող ընթացք ունեցող երկրներ մեկ խմբի մեջ առանձնացվում էին նրանք, որոնք հետագայում, 2004 թ. մայիսին դարձան Եվրամիության անդամներ: Դրանք վերոհիշյալ առաջին խմբի երկրներն են, որոնցում ժողովրդավարական կոնսուլիդացիան կայացած և անդառնալի է: Մյուս երկրները, ըստ այդ ուսումնասիրությունների, բաժանվում են երկու ենթախմբի. մի քանիսը (այդ թվում և Հայաստանը) ունեն ժողովրդավարության որոշակի մակարդակ և դեռևս պահպանում են ժողովրդավարական կոնսուլիդացիայի հասնելու հնարավորությունները, սակայն առայժմ լիովին չեն հաղթահարել դեպի ավտորիտարիզմ հետընթացի վտանգները, իսկ մյուսների (Բելառուս, Ղազախստան, Ուզբեկստան, Դրոլդգստան, Թուրքմենստան, հաճախ այս խմբում ընդգրկվում է նաև Ադրբեյջանը) ընտրած ուղին տանում է դեպի ավտորիտարիզմ կամ տոտալիտարիզմ: Ընդ որում, առաջին ենթախմբի գոյությունը ժամանակավոր է և այնտեղ ընդգրկված երկրները, կախված հետագա զարգացումներից, ժամանակի ընթացքում կամ կտեղափոխվեն առաջին խումբ, կամ երկրորդ: Կարելի է արձանագրել, որ սկսվում է հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրորդ փուլը, որի ավարտը պայմանավորված է առաջին ենթախմբում ընդգրկված երկրների վերջնական կողմնորոշմամբ: Այսպիսով, «ժողովրդավարություն-ավտորիտարիզմ» հակադրությունը երկրորդ խմբի երկրների քաղաքական կյանքի ամենակարևոր հարցադրումն է: Հետևաբար բացառիկ նշանակություն ունի առաջին խմբի հաջողությունների պատճառների բացահայտումը,

առավել ևս , որ հետխորհրդային տրանսֆորմացիան աննախադեպ երևույթ է մարդկության պատմության ընթացքում:

Ակնհայտ է, որ առաջին և երկրորդ խմբի երկրների տրանսֆորմացիայի արդյունքների տարբերության պատճառները կապված չեն այդ գործընթացի սկզբում նրանց որդեգրած ռազմավարությունների հետ, քանի որ 1990-1995 թվականների ընթացքում բոլոր 24 երկրներն իրենց վերափոխումների հիմքում դրեցին նեոլիբերալ գաղափարախոսությունը հետևյալ երեք հիմնասյուններով. կայունացում, ազատականացում, մասնավորեցում [13]: Ընդ որում, տրանսֆորմացիայի գաղափարական առաջնորդի ու ֆինանսական հովանավորի դերը ստանձնել էին միջազգային ֆինանսական կազմակերպությունները և առաջին հերթին՝ Համաշխարհային բանկն ու Արժույթի միջազգային հիմնադրամը: Շուկան դիտվում էր որպես մետա-նորմ, իսկ ինստիտուտներն ու դերակատարների ռազմավարությունը մեկնաբանվում էին շուկայի մոդելի համապատասխանության տեսակետից: Ընդ որում, ոչ միայն տնտեսական ինստիտուտները, այլև սոցիալական ինտեգրման ինստիտուտները: Փաստորեն քաղաքական գործընթացը դիտարկվում էր ազատականացման մեջ ներդրման տեսակետից, որպես կատարման տեխնոլոգիա, այլ ոչ որպես խորհրդարանական գործընթաց, առանցքային մասնակիցների միջև խորհրդատվություններ և փոխզիջումների արվեստ[13]: Մինչդեռ ընդամենը մեկ տասնամյակ էլ չանցած կյանքը պիտի ապացուցեր, որ հետխորհրդային տրանսֆորմացիան յուրահատուկ մի երևույթ է և դրա ուսումնասիրության համար հարկ է հաշվի առնել անցման առանձին դրսևորումների յուրահատկությունները, տոտալիտար ռեժիմի ազդեցությունը, քաղաքական ռեժիմի փոփոխության ձևերը, նոր քաղաքական էլիտայի գաղափարական հիմքերը և այլն, այդպիսով այդ տրանսֆորմացիան դիտելով որպես զարգացման և ժողովրդավարացման ընդհանուր հիմնախնդրի առանձնահատուկ տարբերակ :

Անշուշտ, հետխորհրդային տրանսֆորմացիայի սկզբում այլ տեսակետներ ևս կային, որոնք առավել ամբողջական մոտեցման կոչ էին անում: Մասնավորապես, ըստ Մ. Մալիայի[14], «խորհուրդների տոտալ համակարգը փոխարինվեց տոտալ փլուզումով: Կոմունիզմից դուրս եկած հասարակությունը հայտնվեց տոտալ խնդրի առաջ. ոչինչ հնարավոր չէ փրկել հին կարգերից, ամեն ինչ պետք է փոխել և վերափոխել՝ տնտեսությունը, քաղաքականությունը, հասարակությունը» : Իսկ Լինցը և Ստեպանն իննսունականների կեսերին արձանագրում էին, որ «սոցիալապես ու քաղաքականորեն ստեղծված ու ընդունված նորմերը, ինստիտուտներն ու կարգավորիչները» ոչ թե պարզապես կառուցակարգեր են, այլև ձևավորում են այսպես կոչված «տնտեսական հասարակություն», որը բացառիկ տեղ ունի ժողովրդավարության համախմբման, կայացման գործում, քաղաքացիական հասարակության , ազատ ընտրությունների և կանոններով աշխատող պետական վարչախմբի կողքին [15] :

Այդուհանդերձ, նախընտրությունը տրվեց նեոլիբերալիզմի գաղափարախոսությանը և միայն դարավերջին տարբեր ուսումնասիրողներ սկսեցին տազնապ հնչեցնել տրանսֆորմացիայի ընթացքի և դրսևորվել սկսող արդյունքների վերաբերյալ. «Բազմաթիվ հասարակական կազմակերպություններն իրականում գոյություն ունեն միայն թղթի վրա և նրանց ձևավորած սոցիալական ցանցն ավելին չէ, քան փոշիացված սոցիումի քաղաքական ակտիվության իմիտացիա» [16]:

Ազատ շուկայի հայրերից մեկը՝ ծայրահեղ լիբերալների կուռք Ս. Ֆրիդմանը, որ ինստիտուցիոնալ սկզբին նախկին սոցիալիստական երկրներին կոչ էր անում «մասնավորեցնել, մասնավորեցնել, մասնավորեցնել», մեկ տասնամյակ անց արձանագրում էր, որ «Իրավունքի գերակայությունն, հավանաբար ավելի կարևոր է մասնավորեցումից» [17]: Իսկ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի զեկույցը, նվիրված հետխորհրդային տրանսֆորմացիայի տասնամյակին, արձանագրեց. «Այժմ փաստերը հստակորեն ցույց են տալիս, որ անցումների գլխավոր դասն այն է, որ շուկաներն առանց իրենց հիմնական խնդիրները կատարող պետության ինստիտուտների աջացության և առողջ քաղաքացիական հասարակության չեն կարող լիարժեք գործել» [18]:

Ակնհայտ է, որ միակ հատկանիշը, որով տրանսֆորմացիոն երկրների դասակարգումը տալիս է բացարձակապես նույն արդյունքը, ինչն արձանագրվեց մեկ տարի առաջ մայիսին, Եվրամիության ընդլայնումով, նախախորհրդային շրջանի ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության հիշողությունը պահպանած սերնդի գոյությունն է: Չետխորհրդային տրանսֆորմացիա անցած ու Եվրամիությանն ադամակցած բոլոր երկրներն ունեին նման փորձ ու հիշողություն ունեցող սերունդ: Դժվար չէ նկատել, որ Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի այն երկրները, որոնք չանդամակցեցին Եվրամիությանը, առանձնանում էին նաև մինչ ԽՍՀՄ փլուզումն իրենց ծայրահեղ դրսևորումներով: Բուլղարիան շատ մոտ էր խորհրդային տասնվեցերորդ հանրապետությունը հռչակվելուն, Ռումինիայում Չաուշեսկուի բռնատիրության վերաբերյալ որևէ մեկը կասկած չունեի ընդհուպ մինչև սոցիալիստական ճամբարի փլուզումը, իսկ Հարավսլավիան, թեև գրեթե ինտեգրված չէր այդ ճամբարին, սակայն տասնամյակներ իր վրա կրեց Տիտոյի պաշտամունքի հետևանքները: Ալբանիայի վերաբերյալ անզամ նման հակիրճ փաստերի հիշատակման անհրաժեշտություն չկա: Այսպիսով, տրանսֆորմացիայի առաջին փուլի արդյունքները միանգամայն համահունչ են այդ երկրներում հասարակական հարաբերությունների նախախորհրդային և ապա խորհրդային շրջանների զարգացմանը: Փաստորեն, այս փուլը հաջողությամբ ավարտեցին այն երկրները, որոնք ունեին նախախորհրդային հասարակական հարաբերությունների փորձի ու հիշողության անհրաժեշտ պաշար և հնարավորինս կարողացել էին խուսափել կոմունիստական շրջանի ծայրահեղ դրսևորումներից: Եվս մեկ լրացուցիչ գործոն այս

տեսակետի օգտին: Այդ երկրներում, թերևս բացառությամբ Սլովենիայի, անգամ կոմունիստական վարչակարգի տարիներին բավական ուժեղ էին հակակոմունիստական և հակախորհրդային տրամադրությունները (Լեհաստանում «Սոլիդարնոստի» գործունեությունը, Չեխոսլովակիայում 1968 թ. և Յունգարիայում 1956 թ. իրադարձությունները):

Այսպիսով, հետխորհրդային տրանսֆորմացիայի մեկուկես տասնամյակի փորձն արձանագրեց, որ այդ գործընթացի ելքը միանշանկորեն կանխորոշված չէ բոլոր երկրների համար, ինչպես ենթադրվում էր իննսունականների սկզբին, և ժողովրդավարությունն էլ միակ հանգրվանը չէ: Ավելին, այն երկրները, որոնք դեռևս չեն ավարտել տրանսֆորմացիան, կարիք ունեն հետագա ընթացքի թե՛ գաղափարախոսության և թե՛ պարադիգմի ճշգրտման: Սոցիալական, ինստիտուցիոնալ և կազմակերպչական կառույցները հետկոմունիստական հասարակություններում ոչ թե շուկայական գործընթացների համար արտաքին գործոններ են, այլ էնդոգեն փոփոխականներ, որոնցով են պայմանավորված գործող շուկաների ինստիտուտներն ու սոցիալական համախմբման բավարար մակարդակը [19]: Նոր պարադիգմը բխում է քաղաքական պայմաններից՝ ժողովրդավարության նկատմամբ հավատից՝ որպես սոցիալական բախումների լուծման, երկարատև արդարացի աճի խթանման և «լավ ինստիտուտների» ստեղծման լավագույն շրջանակ: Քաղաքացիական հասարակությունը բարձրացված է զարգացման ամենաբարձր գործոնի մակարդակի [20]:

Ժողովրդավարության և դրա ինստիտուտների հաջող զարգացումն անհնարին է առանց զանգվածային աջակցության, որի կայունությունը ձեռք է բերվում միայն հասարակության կողմից համապատասխան քաղաքական արժեքների յուրացման դեպքում: Այդ արժեքներից ամենակարևորներից են ժողովրդավարական ինստիտուտների նկատմամբ հավատը, քաղաքական մասնակցությունը և հակամարտությունների առաջացման ժամանակ լուծումների որոնումը համաձայնողական պրոցեդուրաների, այլ ոչ թե բռնության կամ դրա սպառնալիքի կիրառման միջոցով: Ինստիտուցիոնալ արդիականացման հաջողության որոշիչ չափանիշը ճգնաժամային իրավիճակում քաղաքական հասարակության վարքն է [21]:

«Ժողովրդավարական ինստիտուտները կարող են ստեղծվել առանց զանգվածային մասնակցության, սակայն առանց զանգվածային մասնակցության և աջակցության ժողովրդավարությունը չի կարող գոյություն ունենալ: Ժողովրդավարության կոնսոլիդացիան ենթադրում է ժողովրդավարական մշակույթի, դրա արժեքների, նորմերի մշակում և զանգվածային յուրացում» [22]:

Յետևաբար, հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրորդ փուլի առաջնայնություններն ունեն բոլորովին այլ ձևակերպումներ, որոնց համար որպես հիմք նախընտրելի է դառնում ոչ թե նեոլիբերալիզմի, այլ նեոինստիտուցիոնալիզմի գաղափարախոսությունը, քանզի վերջինը լիովին լրացնում է առաջինի էական բացը՝ ներառում է տնտեսու-

յունն ու քաղաքականությունը կապող օղակ: Մեկուկես տասնամյակի փորձը ցույց տվեց, որ շուկան ամենակարող չէ և չի կարող ինքնաբերաբար բերել հասարակական զարգացման կարևոր ազդակներից մեկի՝ ինստիտուտների ձևավորմանը: Նեոհինստիտուցիոնալիզմի ընդգրկումը շատ ավելի լայն է և համապատասխան հետխորհրդային տրանսֆորմացիայի համակարգային բնույթին: Ըստ այդ տեսության[23]՝ ինստիտուտները ֆորմալ կանոններն են, ոչ ֆորմալ սահմանափակումները և դրանց ստիպողական իրականացման մեխանիզմները: Ֆորմալ կանոնները ներառում են քաղաքական (օրենսդրական, իրավական) և տնտեսական կանոններն ու պայմանագրերը: Քաղաքական կանոններն որոշում են պետության կառուցվածքը, որոշումների ընդունման կառուցակարգերը և «օրակարգի» վերահսկման բնութագրերը: Տնտեսական կանոններն որոշում են սեփականության իրավունքը, պայմանագրերն որոշում են տնտեսական կամ քաղաքական փոխանակման իրականացման կանոնները: Ոչ ֆորմալ սահմանափակումներն այն կանոնների համախումբն են, որոնք չեն տեղավորվում ֆորմալ կանոնների շրջանակում, սակայն հնարավորություն են տալիս լուծել փոխանակման հետ կապված բազմաթիվ հիմնահարցեր: Ոչ ֆորմալ սահմանափակումներն ավելի կայուն են ժամանակի մեջ, ավելի բարդ է դրանք փոխել, քան ֆորմալ կանոնները: Փորձը, ավանդույթները և մշակույթը ոչ ֆորմալ սահմանափակումների հիմքն են: Նեոհինստիտուցիոնալիզմն առանձնացնում է գործընթացը կանխորոշող չորս գործոն, որոնցից գաղափարախոսությունն ու մարդկանց աշխարհայացքը հաճախ արհամարհվում են շատ տնտեսագետների կողմից:

Եվրամիության ընդլայնմանը գրեթե զուգահեռ սկսված այսպես կոչված «գունավոր» հեղափոխությունների շարքը վկայում է, որ այդ երկրների համար սկսվել է տրանսֆորմացիայի նոր փուլ, որի ուսումնասիրությունը պետք է տա հետևյալ հարցերի պատասխանը. արդյո՞ք հեղափոխությունների իրականացումն այդ երկրների համար միանշանակորեն ենթադրում է գաղափարախոսության ու պարադիգմի փոփոխություն վերոհիշյալ ուղղությամբ և հեղափոխությունները միանշանակորեն տանում են դեպի ժողովրդավարության կոնսոլիդացիա:

Եթե Վրաստանում 2003 թ. վերջին տեղի ունեցած վարդերի հեղափոխությունից հետո բանավեճը՝ դա զուտ վրացական էրևույթ էր, թե պլանավորված և հետևողականորեն իրականացվող շրթայական գործողությունների մի օղակը, բուռն վեճեր էր առաջացնում, ապա այսօր դա արդեն քննարկման առարկա չէ: Ավելին, տեսականորեն անգամ հետաքրքիր էլ չէ. այդ ամենը կազմակերպվում է ազդեցության նույն կենտրոններից (նման ենթադրությունների են մղում այդ հեղափոխությունների մի շարք ընդհանուր հատկանիշներ. երիտասարդական շարժումների զարմանալիորեն նման անունները, խորհրդանիշներն ու որոշիչ դերակատարությունը, ֆինանսական միջոցների անսահմանափակ ծախսը, մի քանի օտարերկրյա կազմակերպությունների ակտիվ գործունեությունն այդ երկրներում նախահեղափոխական շրջանում և

այլն): Շատ ավելի կարևոր են այդ հեղափոխությունների ընդհանուր օրինաչափությունները.

- հեղափոխությունները հաջողություն են ունեցել երկրորդ խմբի առաջին ենթախմբի երկրներում (Սերբիա և Չեռնոգորիա, Վրաստան, Ուկրաինա), դրանք տապալվել են կամ ուղեկցվել արյունահեղությամբ, բռնություններով ու թալանով երկրորդ ենթախմբի երկրներում (Ուզբեկստան, Ղրղզստան),
- հեղափոխությունների առաջնորդները նախկինում եղել են բարձրաստիճան պաշտոնյաներ,
- հեղափոխությունները հանգեցրել են խորը քաղաքական ճգնաժամերի, որոնց հաղթահարման ընթացքում կիրառված քայլերը հարցականի տակ են դրել արդյունքների լեգիտիմությունը (Վրաստանում Շևարճնաձեի հրաժարականից հետո երկրի նախագահի պաշտոնը ստանձնեց իր լիազորություններն ավարտած խորհրդարանի նախագահը, իսկ խորհրդարանի ընտրությունները չեղյալ համարվեցին մի մասով, Ուկրաինայում անցկացվեց նախագահական ընտրությունների երրորդ փուլ, Յուլչենկոն իրեն նախագահ հռչակեց մինչ արդյունքների պաշտոնական հրապարակումը և այլն) ,
- բոլոր երեք երկրները, որտեղ տեղի են ունեցել հեղափոխություններ, կանգնած են սահմանադրական փոփոխությունների անհրաժեշտության առաջ՝ Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն իրավունքի միջոցով» (Վենետիկի) հանձնաժողովի հետ քննարկվում է այդ երկրներում սահմանադրական փոփոխություններ անցկացնելու անհրաժեշտության խնդիրը,
- բոլոր երեք երկրները գտնվում են բավականին բարդ սոցիալ-տնտեսական իրավիճակում, կարիք ունեն զգալի ֆինանսական աջակցության:

Ակնհայտ է, որ «գունավոր» հեղափոխությունների այս առանձնահատկությունները, որոնք ընդհանուր են բոլոր երկրների համար, չեն պարունակում որևէ հատկանիշ, որի շնորհիվ դրանք այդ երկրներում միանշանակորեն հանգեցնելու են վերոհիշյալ պարադիգմի փոփոխությանը: Հեղափոխությունների արդյունքը բոլորովին այլ փոփոխություն է՝ իշխանափոխություն, որը սոսկ ստեղծում է նոր իրավիճակ և քաղաքական ասպարեզի նոր որոշիչ դերակատարներ: Ընդ որում՝ հին մարտահրավերներով ու դժվարություններով: Մասնավորապես, բոլորովին ակնհայտ չէ, որ ֆինանսական աջակցության նոր աղբյուրների նպատակները միանշանակորեն կհամընկնեն հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրորդ փուլի վերանայումների հրամայականի հետ: Փաստորեն, հեղափոխությունների իրականացումը չի ստեղծում երաշխիքներ տրանսֆորմացիայի երկրորդ փուլում հաջողության համար, այլ միայն ապահովում է նախադրյալներ նոր քաղաքական ուժերի իշխանության համար: Հետևաբար, այն կարող է արդյունավետ լինել միայն երկու պայմանի միաժամանակյա գոյության պարագայում.

նախկին իշխանությունները լիովին սպառել էին տրանսֆորմացիայի ռազմավարության վերանայման ռեսուրսները և նոր իշխանություններն ունեն դրա իրականացման կարողություններ և կամք: Եթե հաշվի առնվի նաև այն հանգամանքը, որ յուրաքանչյուր հեղափոխություն իր հերթին ավելացնում է նոր խնդիրներ ու բարդություններ, ապա ակնհայտ կդառնա, որ տրանսֆորմացիոն գործընթացներում հեղափոխությունները չեն կարող լինել հայտարարվող նպատակներին հասնելու ուղի, այլ միայն միջոց են նոր իրավիճակի ստեղծման, որի զարգացման հեռանկարները կախված են միանգամայն այլ գործոններից:

Այսպիսով, հետխորհրդային տրանսֆորմացիան թևակոխել է երկրորդ փուլ և անհրաժեշտություն է առաջացել վերանայել ինչպես այդ գործընթացի հիմքում ընկած գաղափարախոսությունը, այնպես էլ պարադիգմը: Այդ ենթատեքստում «գունավոր» հեղափոխությունների առանձնահատկությունների ուսումնասիրությունը բացահայտում է, որ նման հեղափոխությունները չեն կարող տրանսֆորմացիայի հաջողության հիմք և երաշխիք լինել:

Գրականություն

1. Глобализация и Россия. Проблемы демократического развития. М. 2004.
2. PACE Resolution 1407 New concepts to evaluate the state of democratic development. (2004).
3. **Gunther R., Diamandouros N., Puhle H.-J.(eds.)**. The Politics of Democratic Consolidation. Southern Europe in Comparative Perspective. Baltimore, L. 1995.
4. **Huntington S.**, The Third Wave: Democratization in the Late Twentieth Century. Norman. 1991.
5. **Diamond L.**, Developing Democracy Toward Consolidation. Baltimore, L, 1999
6. **Diamond L.**, The End of Third Wave and the Start of the Forth.-Plattner M., Espada J.(eds.) The Democratic Invention. Baltimore, L. 2000.
7. **Мельвил А. Ю.**, О траекториях посткоммунистических трансформаций. Полис, No 3. 2004.
8. **Carothers T.** The End of the Transition Paradigm. Journal of Democracy, vol. 13, No 2. 2002.
9. Freedom House, Report, 2002 , **Karatnicky A., Motyl A., Schnetzer A.**(eds.). Nations in Transit. Civil Society, Democracy and Markets in East Central Europe and the Newly Independent States. New Brunswick. 2002.
10. **Diamond L.**, Thinking About Hibryd regimes.-Journal of Demokracy, vol. 13, No 2. 2002.
11. **Макаренко Б. И.**, Консолидация демократии: "детские болезни" постсоветских государств.-Полития, No 4. 2002/2003.
12. **McFall M.** The Fourth waveof Democracy and Dictatorship. Noncooperative Transitions in the Postcommunist World. –World Politics, January. 2001.
13. **Мюллер К., Пикель А.**, Смена парадигм посткоммунистической трансформации. Социологические исследования. No 9. 2002.
14. **Malia M.**, Leninist Endgame// Daedalus. 1992, vol. 121. 1992.

15. **Linz J., Stepan A.**, Problems of Democratic Transition and Consolidation. Baltimore, MD. 1996.
16. **Шмиттер Ф.**, Процесс демократического транзита и консолидации демократии. Полис, ,No 3. 1999.
17. Economic Freedom of the World: Annual Report.2002.Vancouver.
18. EBRD. Transition Report 1999. Ten Years of transition. L. 1999.
19. **Rodrik D.**, Institutions for High-quality Growth: What They Are and How to Acquire Them // NBER, Working Paper No 7540, Cambridge, Mass. 2000.
20. **Wolfensohn J. D.**, A Proposal for a Comprehensive Development Framework, Mimeo, Wash., DC: World Bank. 1999.
21. **Лалкин В. В., Пантин В. И.** Освоение институтов и ценностей демократии украинским и российским массовым сознанием. Полис, No 2. 2005.
22. **Шевцова Л.**, (ред.) Россия политическая. М. 1998.
23. **North D.**, The New institutional Economics and its contribution to improving our understanding of the transition problem. Wider Annual lecture. 1997.

**TIGRAN TOROSYAN
ARAXIA VARDANYAN**

**WHERE DO THE PATHS OF “COLOURED”
REVOLUTIONS LEAD?**

The article studies the results of the first stage of post-Soviet transformation. The analysis of this process shows that the main manifestations of the end of the first phase can be considered the European Union enlargement in 2004 and the wave of revolutions in a number of countries of post-communism transformations. The specific features of both of the groups of countries engaged in these processes are the quality of the social and political institutions and the situation of the civil society. The article reveals the common features of the “coloured” revolutions that do not correspond in any aspect with the features of the new paradigm of the post-communist transition. Efficiency of the revolutions in the countries of post-communist transformation from the point of view of achievement of the objectives of this process must be evaluated based on the necessity of improvement of the mechanisms for the formation of quality social and political institutions in these countries. Constitutions and the traditions in this sphere serve as such mechanisms in democratic countries. Revolutions do not improve these mechanisms but only creates a new situation with new actors.

ՄԱՐԻԱՄ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու

ԿԱՌԱՎԱՐՈՂ ԸՆՏՐԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԱՆՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Ժողովրդավարության երրորդ ալիքի շրջանակներում տեղի ունեցող արձագանքային կերպափոխությունները, համաշխարհային քաղաքական նոր համակարգի ստեղծման համար ծավալված ժողովրդավարացման գործընթացները հիմք են տալիս պնդելու, որ ժամանակակից աշխարհը թևակոխել է քաղաքական արդիականացման որակապես նոր փուլ:

Ակնհայտ է, որ ժողովրդավարական անցման գործընթացում տեղի ունեցող աշխարհաքաղաքական արձագանքային փոփոխությունները և քաղաքակրթական նոր բևեռների ձևավորման փորձերն ստիպում են հայ հասարակությանը սեփական տեսակի և ինքնության պահպանման նկատառումներով նորովի իմաստավորել քաղաքական արդիականացման մոդելը: Լատինամերիկյան, աֆրիկյան, ասիական, ինչպես նաև ԱՊՀ (նաև ՀՀ) հասարակությունների ժողովրդավարացման գործընթացների համեմատական ուսումնասիրությունը թույլ է տալիս բացահայտել անորոշությամբ հագեցված զարգացման այն վտանգավոր միտումները, որոնց կանխմանն այսօր պետք է ուղղվի ոչ միայն ժողովրդավարական անցման գործընթացում գտնվող երկրների, այլև գլոբալ քաղաքակրթության ջանքերը:

1. ԱՎՏՈՐԻՏԱՐԻՉՄԻՑ ԴԵՊԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից քաղաքական գիտության մեջ լայնորեն օգտագործվող «գլոբալ ժողովրդավարացման ալիք» հասկացությունն իր պատմականությամբ սահմանում է աշխարհի տարբեր երկրներում ավտորիտարիզմից դեպի ժողովրդավարություն՝ տեղի ունեցող անցումների բազմազանություն: Վերջինս ենթադրում է ոչ միայն պատմականորեն ձևավորված սոցիո- և էթնոմշակութային արժեքների կերպափոխման ռազմավարության հստակեցում, այլև «նոր ժողովրդավարների» երաշխավորած՝ հավասարության հաստատման անորոշություն: Հանրագումարելով ժողովրդավարական անցում ուսումնասիրող տեսաբանների կարծիքները՝ կարելի է եզրակացնել, որ այն քաղաքական զարգացման և արդիականացման որոշակի մոդել է, որը, ներառելով ժողովրդավարացման առաջին և երկրորդ ալիքների փորձը, մերժելով

պատերազմները (հատկապես՝ համաշխարհային), հեղափոխությունները (հատկապես՝ դասակարգային), պայմաններ ու ժամանակ է ստեղծում նոր ժողովրդավարների համար՝ քաղաքականության թատրոնում իրենց դերակատարումն արդյունավետ իրականացնելու համար [1, էջ 502-503, 572-576.]:

Ժողովրդավարական անցումը՝ որպես քաղաքական արդիականացման մոդել իր բազմաչափությամբ այսօր գործառնում է ոչ միայն փլուզված ԽՍՀՄ-ի նորանկախացած հանրապետություններում (նաև ՀՀ-ում), այլև Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի մի շարք երկրներում: Ինչպես իրավացիորեն նշել է անցումագետ Ա.Պշևորսկին ժողովրդավարական անցման մոդելը միարժեք պատասխան չի տալիս այն հարցին, թե «անցումը կավարտվի ժողովրդավարությամբ, թե նոր կամ հին դիկտատուրայով: Նոր ժողովրդավարությունը կայուն է կլինի, թե ոչ: Ինչպիսի՞ սոցիալական ինստիտուտներ պետք է կազմեն նրա հիմքը»: Թեև անցումն ենթադրում է ժողովրդավարական ինստիտուտների հաստատում, սակայն առկա փորձը թույլ է տալիս եզրակացնել, որ դա դեռևս չի հանգեցրել ժողովրդավարության (ինչպես ընդունված է անվանել համախմբված ժողովրդավարության) կայացման՝ իբրև որդեգրած մոդելի ցանկալի ելք: Ժողովրդավարման անցման մոդելի հիմնական առանձնահատկությունը՝ իբրև խաղային տրամաբանությամբ գործարկվող համակարգ, մասնավորապես, ապագայի նկատմամբ նրա բացությունն է՝ իր ամենաանորոշ ելքերով: Որոշիչն արդիականացման մոդելի արժեքաբանությունն ապահովող ժողովրդավարության հայեցակարգն է, ըստ որի անցումը դեպի ժողովրդավարություն որակվում է որպես կանոնակարգված բաց անվերջություն կամ կազմակերպված անորոշություն՝ «մուտքերի» և «ելքերի» արժեքային բազմաչափությամբ: Քանի որ բախումների արդյունքները կանխավ (ex ante) չեն կարող միարժեք ընկալվել դերակատարների կողմից, ուստի հնարավոր ելքերի հավանականությունը կանխավ որոշվում է ինստիտուցիոնալ շրջանակներում և միասնաբար՝ քաղաքական տարբեր ուժերի կողմից գերիշխման համար մրցակցության մեջ ներդրված տարաբնույթ ռեսուրսների հաշվառմամբ: Սակայն նույնիսկ այդ դեպքում դերակատարները չգիտեն, թե՞ որոշակի ինչ արդյունք կստանան: Այդ իսկ պատճառով հանուն ժողովրդավարության տեղի ունեցող ցանկացած բախման ժամանակ պարբերաբար մակածվում է անորոշության: Հետևաբար, ինչպես նշում է Ա.Պշևորսկին, «ժողովրդավարությունը դա համակարգված (կարգավորված) չսահմանափակվածության և կազմակերպված անորոշության համակարգ է» [2, էջ 30-31]: ՀՀ անցումային շրջանն այս մոդելով դիտարկելու դեպքում ակնհայտ երևում է, որ այն բազմաթիվ անորոշությունների հանրագումար է: Փաստորեն ՀՀ-ում մեկնարկած ժողովրդավարական անցումն ի սկզբանե անորոշության էր ենթադրում, քանի որ իր կոնունիստական անցյալից հրաժարվելու քաղաքական որոշում կայացնելուց հետո, հայ հանրույթը դեռ չէր պատկերացնում, թե ինչ արժեքներով կարող է համակարգել նոր

առաջացած սոցիալ-տարածական-ժամանակային-իրավիճակային բացը: Փաստորեն, մինչ այսօր էլ վերակառուցման ժամանակաշրջանից բռնկված և ներկայումս շարունակվող անորոշությունների համեմատական վերլուծության միտումը հրատապ է պահում այն հարցը, թե անցումը տանում է ժողովրդավարությամբ, թե՞ այլուր: Չկայացված ժողովրդավարության պատճառով էլ ավելի անորոշ բազմահանգրվան ապագայի համար անկախ ժամանակաշրջանից միշտ հրատապ է մնում նույն հարցադրումները:

Ինչպես Ա.Պշտոսկին է նշում դրանք «մշտապես ծագող հարցադրումներ են» և ունեն հետևյալ բովանդակությունը՝

1. Ինչ ինստիտուտներ են կազմավորվում, և նրանցից որոնք իսկապես ունեն ժողովրդավարական բնույթ: Ինքնուրույն «ելքեր» ծրագրավորելիս արդյոք քաղաքական համակարգն ընդունակ կլինի անկախ որոշումներ կայացնել,

2. Ի՞նչ տնտեսական համակարգ է ձևավորվում և սեփականության ի՞նչ ձևերի գերակշռության ազդեցության տակ կբաշխվեն ռեսուրսները,

3. Ինչպիսի՞ արժեքային համակարգ ի գորու կլինի համակեցություն ապահովել՝ իրականացնելով մարդասիրական քաղաքականություն («մարդիկ բոլոր երկրների, միացե՛ք»),

4. Ինչպիսի՞ պայմաններ են անհրաժեշտ ժողովրդավարության ամրապնդման համար, որը հնարավորություն կտա սոցիալական խմբերին կազմակերպվելով, հետամուտ լինել սեփական շահերի հաստատմանը՝ վախի բացակայության և օրինականության առկայության պայմաններում [2, էջ 11]:

Այսպիսով, ժողովրդավարացման գործընթացի որոշակի ելքը քաղաքական ժամանակի մեջ անորոշ է, քանի որ կախված է անցման փուլում պարբերաբար իրականացվող ընտրանքից (մասնավորապես, բարեփոխումների որոշակի ի՞նչ մոդել, քաղաքական արդիականացման ի՞նչ սցենար է ընտրվել, ինչպիսի՞ քաղաքական ընտրանի է գործառնում և այլն):

Անցումագետներից յուրաքանչյուրը մշակել է անորոշությունից դուրս գալու հնարավոր ելքի տարբեր սցենարներ: Ընդ որում, տարբեր սցենարների դեպքում ընտրանու հավաքագրման կառուցակարգերը տարբեր են: Այսպես, դիտարկվում է՝ բոլորի պատերազմը բոլորի դեմ, հաղթողը ստանում է ամեն ինչ, պատերազմ խաղի կանոններով, իշխանական լիազորությունների տնօրինում (կարծր գործադիր իշխանություն) սցենարներ, որոնց իրականացումն արդյունավետ է միայն այն ժամանակ, երբ ուղեկցվում է «ընտրամիների զուգամիտում » ենթադրող «պատկերի» կնքմամբ [3, էջ 22-25]:

2. ՀՀ Ժողովրդավարական ԱՆՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀՀ ժողովրդավարացման անցման փորձը և ստացված արդյունքը վկայում են, որ որդեգրված մոդելը հայ իրականության համար մինչ այսօր անկախ փորձագիտական վերլուծության ենթարկված չէ: Ավելին, հասարակությանը հրամցված է արդիականացման պահպանողական և ազատական հայտնի մոդելների «համաձուլվածքը»: Արդիականացման պահպանողական մոդելի կողմնակիցները (Լինց, Նելսոն, Հանթինգտոն և այլք) գտնում են, որ միայն հասարակական-քաղաքական կարգը վերահսկող կոչտ ավտորիտար վարչակարգը կարող է ապահովել անցում շուկայական տնտեսության և ազգային միասնությունը: Ըստ Ա.Հանթինգտոնի՝ եթե քաղաքական արդիականացման գործընթացում ընտրանին չպահպանի ինստիտուցիոնալ կարգի շահերը, ապա տեղի կունենա ոչ թե «քաղաքական զարգացում, այլ քաղաքական անկում» [4, էջ 109-110], քանզի դեպի բաց հասարակություն ընթացող հանրույթները չունեն կերպափոխման ժողովրդավարական ավանդույթներ:

Ազատական մոդելի կողմնակիցները (Լ.Պայ, Ռ.Դարենդորֆ, Ռ. Դալ) շեշտը դնում են ոչ թե կենտրոնացված ինստիտուտների միջոցով հասարակական-քաղաքական կարգի պահպանման, այլ ընտրանու և ժողովրդի միջև երկխոսության վրա, անկախ այն բանից, թե ինչին է խոսքը վերաբերում՝ այլընտրանքային ծրագրերով ժողովրդավարական ընտրություններին, թե՞ ընտրանիների կողմից զանգվածների հավաքագրմանը: Այսպիսով, ազատականների համար հիմնական ցուցանիշը ներկայացուցչական մարմիններում բնակչության ներգրավվածությունն է:

ՀՀ ժողովրդավարական անցման գործընթացը, մեր կարծիքով, ակնհայտորեն իրականացվեց հիմնականում առաջին մոդելով՝ երկրորդի քարոզչությամբ: Արդյունքում, հայ իրականության մեջ հաստատվել է անորոշությամբ հագեցված մոդել՝ հրատապ լուծում պահանջող քաղաքական, սոցիալ-տնտեսական, բարոյահոգեբանական բազում հիմնախնդիրներով:

Քաղաքականության տեսության մեջ ընդունված է ժողովրդավարական անցման գործընթացը դիտարկել քաղաքական համակարգերի կերպափոխման տեսանկյունից: Այդ նպատակի համար ամերիկացի քաղաքագետ Ռ.Դալը կարևորել է երկու չափանիշ.

1. Ժողովրդավարական ճանապարհով քաղաքականապես մրցունակ կառավարող ընտրանու բաց հավաքագրում և

2. ընտրանու հետ բնակչության լայն զանգվածների քաղաքական համագործակցություն և մասնակցություն քաղաքական որոշումների ընդունմանը:

Այս չափանիշների իրականացման համար Ռ.Դալը մշակեց «իդեալական մոդել»՝ պոլիարխիա (բազմասկիզբ իշխանություն) անվամբ: Վերլուծելով ժողովրդավարության տեսության հիմունքները,

Դալը գալիս է այն եզրահանգման, որ երկրում պոլիարխիայի հաստատման հավանականությունը պայմանավորված է որոշակի պայմանների ազդեցությամբ: Խնդիրը կայանում է նրանում, որ «որոշել, թե ինչպիսի՞ն են այդ պայմանները և ինչպիսի՞ն է դրանց փոփոխության ազդեցությունը պոլիարխիայի հավանականության վրա» [5, էջ 269]: Պոլիարխիան ենթադրում է այնպիսի քաղաքական համակարգ, որտեղ փոքրամասնության իշխանությունը վերահսկվում է մեծամասնության կողմից: Նման համակարգի հաստատման համար Ռ. Դալն առաջադրում է հետևյալ յոթ պայմանները.

1. քաղաքական բարեփոխումների պատմական հաջողականություն,
2. տնտեսական իշխանության կենտրոնացման աստիճան,
3. սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակ,
4. հավասարություն-անհավասարություն հարաբերությունների բնույթ,
5. ենթամշակութային տարբերությունների տիպ,
6. արտաքին միջամտության (միջազգային հսկողության) աստիճան,
7. քաղաքական առաջնորդների համոզմունքների էություն:

Միաժամանակ Ռ.Դալը նշում է, որ անցումը պոլիարխիային պետք է լինի աստիճանական. անհրաժեշտ է խուսափել ցնցակաթվածային շարժումներից, որպեսզի քաղաքական ընտրանին հետևողականորեն սովորի փոխզիջումնային տեխնոլոգիաներին և փոխադարձ անվտանգության փոխզիջումնային (ՓԱՓ) սկզբունքներ մշակի:

Փաստորեն, կարևորված է ժողովրդավարական անցման գործընթացով պայմանավորված անընդհատ բարեփոխումները, որոնց սուբյեկտը ոչ միայն ընտրանին է, այլև հասարակությունը: Ըստ Ռ. Դալի՝ ժողովրդավարական անցման արդյունավետությունը պայմանավորված է *ընթացակարգային* և *կառուցվածքային* գործոններով: Առաջին դեպքում անցման անորոշությունը հաղթահարվում է ընտրանու կողմից անցման արդյունավետությունը բարձրացնող ընթացակարգերի ընտրությամբ: Իսկ երկրորդ դեպքում կարևորվում են միջազգային, տնտեսական, սոցիալ-հոգեբանական, քաղաքական, մշակութային այն կառուցվածքները, որոնք գերակա են հանրային և քաղաքական կառավարման մեջ:

Նման պայմանների հաշվառման միջոցով ժողովրդավարական անցման պայմաններում գտնվող ՀՀ-ում կարելի է բացահայտել քաղաքական անկայունության, ճգնաժամերի պատճառները: Այսպես օրինակ, եթե խախտված է քաղաքական բարեփոխումների (ընտրանու ներսում բաց մրցակցության ապահովման և ժողովրդավարացման գործընթացում բնակչության ներգրավվածության) տրամաբանությունը, ապա, ինչպես նշում է Ռ.Դալը, անխուսափելի համարվող բախումները պարփակվում են կլանային հարաբերությունների շրջանակներով:

Ակնհայտ է, որ ժողովրդավարական անցման մոդելի արդյունավետ ադապտացման համար անհրաժեշտ են հանրության մտահայեցողական առանձնահատկություններին համապատասխանող միջոցառումներ: Հետևաբար, ՀՀ ժողովրդավարական անցման գործընթացում պետք է ստեղծվեն ոչ միայն ռեսուրսները վերահսկող ինստիտուտներ, այլև կառավարող ընտրանու և հասարակության միջև արդյունավետ երկխոսության ուղիներ: Բարեփոխումների բնույթով պայմանավորված՝ ՀՀ իրականության համար այդ գործընթացի որպիսությունը կանխորոշված էր ազատական քաղաքական համակարգի մոդելի հաստատմամբ:

Ակնհայտ է, որ ժողովրդավարական անցման գործընթացը ենթադրում է պետության և հասարակության, ավելի ճիշտ նրա սոցիալական շարժունակության համակարգի միջև հարաբերությունների փոփոխություն: Մի կողմից դա ազգային պետության ձեռքբերում քաղաքական իշխանության կենտրոնացումն է, մյուս կողմից՝ անհատի ապահովագրումն է անսահմանափակ կենտրոնական իշխանությունից: Պետության և սոցիալական շարժունակության համակարգի փոխազդեցության հիմնահարցն անհրաժեշտաբար զուգամիտվում է նորարարական ընտրախավերի (որպես շարժունակության համակարգի կարևոր բաղադրիչներ և մեղիատորներ) գործառույթները: Աֆրիկյան, լատինամերիկյան երկրների արդիականացման փորձից հայտնի է, որ ժողովրդի զանգվածներին հեղափոխականացնելու հեռանկարից անհանգստացած՝ արդիականացման տեսությունը կողմնակից է այնպիսի նորարարական ընտրանու, որը քաղաքական դաշտը շահարկում է ոչ միայն իշխանության հասնելու, այլև ժողովրդավարական արժեքների բնականոն ներդրման գործընթացն ապահովելու նպատակով:

3. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԸՆՏՐԱՆՈՒ ՈՐՊԻՍՈՒԹՅՈՒՆԸ

Ժողովրդավարացման գործընթացում քաղաքական ընտրանու իրականացրած քաղաքականությունն այլ ընտրանիներ տարբեր կերպ են ընկալում և մեկնաբանում: Այդ բազմաշերտությունը տեսնելու համար անհրաժեշտ է բազմակողմանիորեն ուսումնասիրել ՀՀ նորարարական ընտրախավերի բոլոր տեսակները: Ստորև բերված դասակարգումը կատարված է ոչ թե գաղափարական ուղղվածության, այլ ժողովրդավարական բարեփոխումների նկատմամբ ընտրանիների ունեցած վերաբերմունքի հիման վրա, քանզի քննարկման առարկան ժողովրդավարական անցման գործընթացն է՝ իր արժեքաբանական բեռնվածությամբ:

Այս նկատառումներով անհրաժեշտ ենք համարում ավանդական և ազատական ընտրանիների փոխհարաբերությունները դիտերկել քաղաքական խաղի կանոնների պահպանման տեսանկյունով:

Ավանդական ընտրանի. իշխանությունը սովորաբար որոշվում է պատմականորեն ձևավորված արժեքային համակարգի կարգավիճակով: Կարելի է ասել, որ ՀՀ-ում տիպաբանական առումով մաքուր ա-

վանդական ընտրանի չկա: Ազատական և ազգային արժեքների սինթեզ-հենքի վրա ձևավորված այս ընտրանին, երկար ժամանակ լինելով իշխանական կառույցներում, ապա ականատես լինելով արմատական-ազատականների քաղաքականության սխալներին՝ զգուշավորություն է ձեռք բերել «հանուն իշխանության» համար մղվող խաղում: Անենաթող ազատականության հետևանքները տեսած այս ընտրանին, որպես կանոն, շեշտադրում կատարելով հպատակության, կլանային հարաբերությունների հավատարմության վրա միաժամանակ հանդես է գալիս ազգային ինքնության պահպանության դիրքերից: Փաստորեն, նա հակված չէ փոփոխել այն, ինչը կարող է վտանգել իր տնտեսական և սոցիալական դիրքը, այդ իսկ պատճառով զգուշավորություն է ցուցաբերում գոյություն ունեցող քաղաքական համակարգը ժողովրդավարացնելու ցանկացած տեխնոլոգիական և տնտեսական նորարարության նկատմամբ:

Ազատական ընտրանին հանդես է գալիս ի պաշտպանություն ժողովրդավարական քաղաքական համակարգի և ամբողջ հասարակության արմատական բարեփոխման: Ջարգացած երկրներում, հենվելով ինդուստրիալացման, ինստիտուցիոնալացման և քաղաքական գործընթացներում քաղաքացիների մասնակցության վրա, նա սահմանագծել է սահմանադրական ժողովրդավարության և՛ նպատակները, և՛ մեթոդները: Յետևաբար ազատականները ձգտում են արմատական քաղաքական բարեփոխումների, մարդու իրավունքների երաշխիքով սահմանադրական կարգի ստեղծմանը, տարբեր հասարակական խմբերի շահերի համաձայնեցմանը՝ օրենքով սահմանված նորմերի և կանոնների օժանդակությամբ, իշխանության ավանդական խմբերի փոխարինմամբ (վերջինս նկատվեց 90-ականների սկզբին, նախկին պարտոկրատիկ՝ արդեն իսկ ավանդական ընտրանու ներկայացուցիչների ճնշող մեծամասնությանն իշխանությունից դուրս մղումով): Ջարգացած ազատական ընտրանին հիմնականում հավաքագրվում է միջին շերտերից, իսկ ՀՀ-ում այն հավաքագրվեց թատերականացված հրապարակներից, որտեղ քաղաքական տեքստը թատրոնի մակարդակի է: Ժողովրդավարական անցման գործընթացում դիտվող անորոշության պատճառով ՀՀ-ում էլ քաղաքական դաշտում կայացվածության առումով անենամետ բացթողումներից մեկը կապված է ազատական ընտրանու որպիսության հետ: Այդօրինակ քառասային երևույթների պատճառով ինքը՝ ազատական ընտրանին հայտնվել է այլախոհ մասնատված վիճակներում:

Ընտրանու վերը բերված տիպերը ՀՀ ժողովրդավարական անցման գործընթացում, ինչպես նկատվեց, հանդես չեն գալիս մաքուր տեսքով: Ավելին, ժողովրդավարացման յուրաքանչյուր ալիքի հետևանքով տեղի է ունենում քաղաքական ուժերի վերախմբավորում, և քաղաքական ընտրանու ներսում տարախառնունը էապես տարբերվում է նկարագրված տիպաբանությունից: Մենիշխանականները, ավանդապահները և արմատականները կարող են համատեղ հանդես գալ վարչական համա-

կարգի ավանդական հիերարխիայի պահպանման, քաղաքական մասնակցության սահմանափակման օգտին: Այդ իսկ պատճառով բարեփոխումների խորացման գործընթացում հնարավոր եղավ այնպիսի իրավիճակ, երբ միևնույն մարդիկ հանդես եկան մի էտապում բարեփոխումներին կողմ, մյուսում՝ նրանց դեմ, և սկսեցին գործողություններ ձեռնարկել ուղղված հաստատված կարգի կոնսերվացման դեմ:

Քաղաքական ընտրանու արժեքային նախընտրությունների և սոցիալական կառուցվածքի պարագայում նրա հնարավորությունները պայմանավորված են հիմնական սոցիալական խմբերի և շերտերի մասնակցության մակարդակով, նրանց շահերի հարաբերակցությամբ, ամբողջությամբ սոցիալական կառուցվածքի իշխող մոդելով: Այդ մոդելը ևս այսօր **քվազիհրականացված** է, քանի որ ՀՀ-ում մինչ օրս էլ, կուսակցական դաշտի համանմանությամբ գրանցվում է փախուստ մի սոցիալական կառուցվածքից մյուսը, փախուստ ազատությունից, փախուստ ինքնությունից: Համաձայն ընտրանու տեսության՝ (մաքիավելիստական դպրոց) «հանուն իշխանության» համար մղվող պայքարում քաղաքական ընտրանին կարող է կան թուլացնել, կան ուժեղացնել այն քաղաքական միտումները, որոնք գոյություն ունեն հասարակության ընդերքում և արտահայտվում են սոցիալական խմբերի փոխհարաբերություններում: Եթե առաջնորդվենք այս կառուցակարգով, ապա հայ իրականության մեջ քաղաքական և հատկապես ռազմավարական ընտրանուն մնում է ընդամենը զգուշությամբ հակազդել գլոբալ մակրո, մեզո և միկրո մակարդակների վրա դրված քաղաքական խաղերին, ինչպես նաև պատասխանել նետված մարտահրավերներին:

Ժողովրդավարական անցման գործընթացն ենթադրում է սոցիալական շարժունակություն: Այսինքն՝ տեղի պետք է ունենա հին սովորույթներից, նորմերից ազատագրում և մոբիլիզացված անձի ներգրավում որոշակի, հարաբերականորեն կայուն նոր խմբային միավորումների մեջ, կազմակերպություններում: Այս ամենը պետք է ուղեկցվի բնակչության տարբեր շերտերում՝ սոցիալական շարժունակության բարձր աստիճանով, շարժուն սոցիալական կառուցվածքի ձևավորմամբ, գիտելիքների, որակավորման, վերապատրաստման պահանջմունքների իրացումն ապահովող սոցիալական պայմանների ստեղծմամբ: Շարժուն սոցիալական կառուցակարգերի փոխարեն՝ հայ իրականության մեջ ի հայտ են եկել մշտապես «փախուստի» և «կառուցվածքային վազքի» մեջ գտնվող շարժուն մարգինալացված անհատներ և սոցիալական խմբեր: Արդյունքում անհատներն ընդհանրապես օտարվել են սոցիալ-քաղաքական իրականությունից, իսկ ձևավորված սոցիալական ենթահամակարգերն էլ գրեթե զուրկ են ինքնակարգավորվածությունից և գտնվում են քառսային վիճակներում ու պարտադիր վերևից հովանավորչության ու կարգավորման կարիք զգում:

Որդեգրված ժողովրդավարական անցման մոդելի գլխավոր նպատակը մարդու համար սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային, սոցիալական լայն հնարավորությունների ստեղծումն է: Նման

նպատակի իրականացումն իրողություն կարող է դառնալ միայն այն դեպքում, եթե կատարվող փոփոխությունների ընթացքում հաշվի առնվեն գոյություն ունեցող արժեքային համակարգի տիրույթները: ՀՀ-ում ժողովրդավարացվելու «մարտահրավերն» ընդունելուց հետո այդ գործընթացի արժեքային տիրույթը որոշելու համար լուրջ քայլեր չարվեցին: Հասկանալի է, որ անհրաժեշտ մոտիվացիոն-արժեքային տիրույթին հասնելը հեշտ չէ, քանի որ բարեփոխումների մոտիվացիոն ապահովմանը հակազդում է մի կողմից անհատների և սոցիալական խմբերի շահերի ձևավորվող հաշվեկշիռը, մյուս կողմից՝ հասարակական գիտակցության մեջ ձևավորվող կարծրատիպերը: Մեր կարծիքով ժողովրդավարացման գործընթացում անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել նշված հանգամանքի վրա, այլապես նորաստեղծ ժողովրդավարական ինստիտուտների գործառույթները հարցականի տակ կդրվեն:

Այսպիսով, ժողովրդավարական անցման գործընթացի արդյունքում ՀՀ-ում ձևավորվել է բազմակառուցվածքային ընտրանի, որի մի մասը, շահագրգռված լինելով տնտեսական գերիշխանությամբ և շահութաբեր տեխնոլոգիաների ներդրմամբ, ռացիոնալացնում է հասարակության կառավարման քաղաքականությունը: Այդ ուժին դիմակայում են ազգային միասնության և փորձի, տեսակի եզակիության, համակեցության նորների պահպանման կողմնակիցները: Բոլոր դեպքերում երկուսն էլ յուրովի են փորձում պատասխանել ժողովրդավարացման մարտահրավերներին:

4. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԱՆՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՏԱՐԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Ժողովրդավարացման երրորդ ալիքի տրամաբանության շրջանակներում տեղի ունեցող բարեփոխումների որպիսությունը պայմանավորված է ավանդական և ազատական ընտրանիների վարքաբանական կողմնորոշիչների փոխհարաբերություններով: Ըստ երրորդ ալիքի տեսաբանների՝ նմանօրինակ մոտեցումը հնարավորություն կտա ժողովրդավարացումը դիտարկել զարգացման այն մոդելի տեսքով, որը գոյություն ունի արևմտյան երկրներում:

Հանրագումարելով ԱՊՀ երկրների փորձը՝ նույն տեսաբաններն այսօր սակայն ոչ միայն ընդունում են նրանց «թերզարգացման» փաստը, այլև խոսում քաղաքական զարգացման ճգնաժամերի մասին: Ավելին, ռուս քաղաքագետ Ա.Պանարինը, քննադատելով «ժողովրդավարացման երրորդ ալիքի» տեսաբաններին, հավաստում է, որ ԱՊՀ երկրների աղետալի վիճակը զարգացած արևմուտքի կառավարող ընտրանու (հատկապես նրա փորձագետների) «ամբիցիաների» և «սպառողական ազդեցիկայի» արդյունքն է: Գլոբալացման, արևմտականացման, շուկայական և ժողովրդավարական արժեքների հաստատման նկատառումներով արևմտյան «պրոմթեսայան ընտրանու»

մեղքով (վերջիններս իրավունք են վերապահել աշխարհը փոխել և վերակառուցել սեփական շահերին համապատասխան), տեղի է ունենում «վազբով» արդիականացող երկրների ստրկացում [6, էջ 53-54.]: Համաձայն Ա.Պանարինի՝ նման իրավիճակը կարելի է շտկել միայն զարգացած երկրների ժողովրդավարացման մոդելի նկատմամբ քննադատական մոտեցում ցուցաբերելով և որոնումներ սկսել ազգային-քաղաքակրթական արժեքների զինանոցում [7, էջ 19-20]:

Համաձայնելով Ա. Պանարինի առաջարկած դրույթներին, միաժամանակ կարծում ենք, որ քաղաքական ընտրանու որպիսությունը ժողովրդավարական անցման գործընթացում անհրաժեշտ է ուսումնասիրել անցումագիտության շրջանակներում: Մասնավորապես, անհրաժեշտ է պարզել, թե ժողովրդավարական անցման ո՞ր փուլում են բարեփոխումները դառնում անշրջելի, և որո՞նք են հասարակությանը տևական քառսից՝ աղքատությունից, փրկող արժեքները [8]: Ակնհայտ է, որ անպատասխանարժեք է արդիականալ «վազելով», անհրաժեշտ է «քայլող» (բնականոն) արդիականացում: Արդյունքում էլ հնարավորություն կստեղծվի խուսափել անորոշությունից, մարզինալացումից և ժողովրդավարական անցման գործընթացում պահպանել ազգային մտահայեցողությունը: Ակնհայտ է, որ քաղաքական ընտրանու վարքաբանություն ներմուծված ազատական արժեքային կողմնորոշիչներն երկփեղկում են հասարակությունը՝ *ոսկե միլիարդի, մարզինալ դեգերողների, ոգով աղքատների միջև*:

Հանրագումարելով ժողովրդավարական անցման փորձը՝ նկատի պետք է ունենալ, որ ազատական արժեքային կողմնորոշիչների՝ սոցիալական վարքագիծ աստիճանաբար թափանցելու դեպքում հասարակությունն արդիականանում է բնականոն՝ պահպանելով իր Ինքնությունը և Տեսակը: Իսկ եթե նրանք սոցիալական վարքագիծ են թափանցում՝ քանդելով ավերի դամբերը, ինչպես զարման հորդառատ գետ, ապա այն մտածելու տեղիք է տալիս. դեպի ժողովրդավարացում «վազող» հասարակությունների համար Ինքնությունը և Տեսակը կորցնելու իրական վտանգ է ստեղծվում:

Ժողովրդավարական անցման գործընթացում տեղ գտած այս հակասությունները տարիմաստ բնույթ ունեն, քանի որ յուրաքանչյուր երկիր յուրովի է լուծում դրանք: ՀՀ-ում առկա են հետևյալ հակասությունները՝

1. սոցիալ-տնտեսական և գաղափարաքաղաքական արմատական փոփոխությունները մի դեպքում, քաղաքական համակարգի ժողովրդավարացման անհրաժեշտությունը մյուս դեպքում նպաստավոր պայմաններ են ստեղծել ավտորիտար-ժողովրդավարական վարչակարգի ստեղծման համար.

2. ստեղծվել է ավանդական արժեքային համակարգին վերադառնալու և ժողովրդավարացման գործընթացի հետագիծն ուսումնասիրելու պահանջ, քանի որ, կառավարող ընտրանին փորձում է իր «ուշացած ազգայնամոլությամբ» զանգվածների ուշադրությունը շեղել երկրում առկա հիմնախնդիրներից.

3. միջին խավի, հատկապես միջին և վերին շերտերի մոտ համակարգային մտածողության բացակայությունը խզում է առաջացրել կառավարող ընտրանու և բնակչության միջև:

Ընտրանու և բնակչության միջև խզվածության աճը հանգեցրել է մի կողմից ընտրանու գերքաղաքականացման, մյուս կողմից՝ բնակչության մարզինալացման, օտարվածության, աղքատության: Այս հակասությունները թույլ են տալիս եզրակացնել, որ ՀՀ-ի ժողովրդավարացման գործընթացի ավտորիտար հակվածությունն արդյունավետ է դարձնում քաղաքական կայունության համար մղած պայքարը: Ըստ անցումային ժողովրդավարության տեսության՝ դրա հիմնական պատճառը կառավարող ընտրանու հիբրիդային տիպի առկայությունն է: Ընդունելով Ռ.Դալի՝ ժողովրդավարական վարչակարգի համար մշակված «մրցակցության» և «մասնակցության» չափումները՝ կարելի է ընդհանրացնել, որ ՀՀ-ում ձևավորված «ընտրանու հանրույթը» իր վարքաբանությունը սահմանափակում է հետևյալ շրջանակներում՝

1. կառավարող և քաղաքական ընտրանու միջև շահերի ձուլում, որը հանգեցրել է ընտրանու բաց հավաքագրման թատերականացմանը՝ ժողովրդավարացման խաղի տեսքով:

2. որոշումների ընդունման գործընթացին հատկապես ոչ կառավարական կառույցների ընդգրկումը ձևական բնույթ ունի:

3. քաղաքական որոշումների ընդունման ժամանակ խմբային շահերի գերակայություն, որն առուծախի քաղաքական շուկա ստեղծելով, քաղաքական-տնտեսական խմբային միավորումների միջև համատեղում է քաղաքական իշխանությունն ու սեփականությունը: Այսօր այդ խմբային միավորումները վերածվելով հզոր և ազդեցիկ քաղաքական դերակատարների, ակտիվ կերպով մասնակցում են քաղաքականությանը: Ավելին, հանրային և պետական կառավարման ոլորտներն իրար մեջ բաժանելով՝ նրանք մեզանում ձևավորել են իրենց շահերը՝ փոխհամաձայնեցված խմբիշխանության (կոնսենսուսային օլիգարխիա) տեսքով:

Ակնհայտ է, որ ժողովրդավարական անցման գործընթացում տեղ գտած հակասությունները մեղմացնելու կամ վերացնելու համար անհրաժեշտ է կարևորել քաղաքական ընտրանու դավանած քաղաքական մշակույթը, որն իր ժողովրդավարական բնույթով առաջին հերթին ՓԱՓ ապահովելու հնարավորություն է տալիս, քանի որ միայն նրա օգնությամբ կարելի է զուգամիտել հասարակության շահերը, ապահովել երկխոսություն կառավարող ընտրանու և քաղաքացիների միջև և դիմակայելով տարաբնույթ մարտահրավերներին՝ լավ կառավարում իրականացնել:

Միայն այս արժեքները դավանող քաղաքական ընտրանին կարող է ինքնություն և էություն ունենալ: Միայն այսպիսի քաղաքական ընտրանու միջոցով և օգնությամբ հայ ժողովուրդը կարող է պատասխանել ոչ միայն ժողովրդավարացման այլև պետականության և գլոբալացման նետած մարտահրավերներին:

Գրականություն

1. Политическая наука: новые направления. Под ред. **Р. Рудина и Х. Клингеманна**. Вече – Москва, 1999.
2. **Пшеворский А.**, Демократия и рынок. Политические и экономические реформы в Восточной Европе и Латинской Америке. Пер. с англ. / Под ред. проф. Бажанова В.А. – М., 2000.
3. **Гельман В.**, Как выйти из неопределенности. // Pro et Contra. Т.3, 1998.
4. **Хантингтон С.**, Политический порядок в меняющихся обществах. М.: Прогресс-Традиция, 2004.
5. **Даль Р.**, Демократия и ее критики / Пер. с англ. Под ред. М.В.Ильина. – М.: «Российская политическая энциклопедия» (РОССПЭН), 2003.
6. **Каспе С. И.**, Империя и модернизация: общая модель и российская специфика. М.: РОССПЭН, 2001.
7. **Панарин А. С.**, Искушение глобализмом. Серия «Россия и мир: итоги XX века», №1, 2000. М.
8. **Хантингтон С.**, Третья волна. Демократизация в конце XX века / Пер. с англ. М.: «Российская политическая энциклопедия» (РОССПЭН), 2003.

MARIAM MARGARYAN

*Head of the Chair of Political
Science of the PAA of the RA,
PhD of Philosophy*

**THE RULE ELITE IN THE PROCESS OF DEMOCRATIC
TRANSITION OF THE REPUBLIC OF ARMENIA**

Democratic transition as a model of political modernization supposes a value diversity and some indefiniteness of foundation of liberal values in time and distance. Conceptual viewpoints of A. Psherovsky and R. Dal are analysed. The issues that have arisen as a result of activity of traditional and modern elites in the process of democratization of the RA have been discussed. A system analysis of the model of the RA democratic transition is offered, which allows to interpret Psherovsky's and Dal's approach in a new way.



«ՃԱԽՍԵՐ - ԱՐԴՅՈՒՆՔ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ»

ՀՀ պետական կառավարման ակադեմիան Կանադայի միջազգային կրթության գրասենյակի (CBIE) «Հանրային քաղաքականության գիտելիքների ցանց» ծրագրի շրջանակներում՝ Բաց հասարակության ինստիտուտի (OSI/LGI) ֆինանսական աջակցությամբ իրականացվող՝ «Հայաստանում հանրային քաղաքականության դասընթացի համար նյութերի պատրաստում» ծրագրով թարգմանաբար հրատարակել է Կանադայի գանձապետական խորհրդի քարտուղարության մշակած «Ճախսեր - արդյունք վերլուծություն» ձեռնարկը (Երևան, «Պետական ծառայություն», 2005, 216 էջ):

Գրքում ներկայացված է ծախսեր-արդյունք վերլուծության մոդելը, որը ներառում է բազմազան մեթոդներ՝ այլընտրանքների բացահայտում, արժեքների հաշվարկում դրամային արտահայտությամբ, տարբեր ժամանակահատվածներում կատարված ծախսերի և արդյունքների ճշգրտում, տեղեկատվական անորոշության հաղթահարում և այլն:

Ձեռնարկը բովանդակում է նաև ծախսեր-արդյունք վերլուծության սխեման և քայլերը՝ կարիքների ուսումնասիրություն և նպատակների ու խնդիրների ձևակերպում, տարբերակների բացահայտում և դրանց համեմատում, ծախսերի և արդյունքների վերաբերյալ տվյալների հավաքում և աղյուսակի տեսքով դրանց ներկայացում ըստ ժամկետների, դետերմինիստական մոդելի կիրառում և զուտ բերված արժեքի(ԶԲԱ) դետերմինիստական գնահատում, զգայունության վերլուծություն՝ որոշելու համար, թե որ փոփոխականներն են ավելի շատ ազդում ԶԲԱ-ի վրա, ռիսկերի վերլուծություն՝ ծախսերի և արդյունքների արժեքների և հավանականության վերաբերյալ առկա տվյալների հիման վրա, որոշումների կայացման ստանդարտ կանոնների կիրառում և վերլուծության արդյունքներից ելնելով՝ հիմնավորված առաջարկի ներկայացում:

Գիրքն ամփոփում է ոչ միայն ծախսերի և արդյունքների վերլուծության հիմնական սկզբունքները, այլև սահմանում հաշվետվությունների ներկայացման ձևերը՝ նպատակ ունենալով պայմաններ ստեղծել ծրագրերի համեմատումն ապահովելու համար:

Ձեռնարկը հնարավորություն է տալիս պատկերացում կազմել հանրային կառավարման համակարգում ծախսերի և արդյունքների չափման ու գնահատման վերաբերյալ, բարդ խնդիր, որի կատարման համար ծախսեր-արդյունք վերլուծություն կատարողից պահանջվում են բազմաբնույթ հմտություններ: Սովորաբար որպես ներդրումային

նախագծի ծախսերի և արդյունքների գնահատման չափանիշ օգտագործում են շուկայական գները: Սակայն երբ շուկայական գները բացակայում են, դժվար է չափել նախագծի իրականացման համար օգտագործված ռեսուրսների կամ ստեղծված արդյունքների արժեքները: Գրքում ցույց է տրվում, թե ինչպես են արժեքները գնահատվում շուկայական գների բացակայության ժամանակ, մասնավորապես ներկայացվում է ճանապարհորդության ժամանակի խնայողության, առողջության և անվտանգության արժեքների, շրջակա միջավայրի, արտարժույթի փոխարժեքի, ստեղծված աշխատատեղերի, պատմական ժառանգության արժեքների, ինչպես նաև հատուկ օգտագործման օբյեկտների մնացորդային արժեքի գնահատումը:

Գրքում համակողմանիորեն ներկայացված են անորոշության պայմաններում որոշումների ընդունման, ռիսկի քանակական արտահայտման ու կառավարման սկզբունքներն ու մեթոդները: Ռիսկերի մանրակրկիտ և ամբողջական վերլուծությունը որոշում կայացնողներին հնարավորություն է տալիս ընդունել հիմնավորված որոշումներ: Ձեռնարկում առանձին իրավիճակների և օրինակների վրա ցույց են տրվում ռիսկի քանակական արտահայտման մոտեցումները: Ռիսկի գնահատման երկու կարևոր ցուցանիշները՝ ակնկալվող վնասը և ռիսկայնության գործակիցը, առանձնացված են իբրև ծրագրերի ներդրման հետ կապված ռիսկերի ընդհանուր մակարդակն արտացոլող ցուցանիշներ:

Գրքում զգայունության վերլուծության միջոցով բացահայտվում է ծախսերի և արդյունքների մոդելում յուրաքանչյուր փոփոխականի կարևորության աստիճանը՝ հաճախ դա կատարելով գծապատկերային վերլուծության միջոցով («սարդոստայնաձև» և «տորնադո» գծապատկերներ, զգայունության կորեր):

Ձեռնարկն իբրև հավելված բովանդակում է տերմինաբանական բառարան և ընտրված գրականություն այն բոլոր հարցերի շուրջ, որոնք քննարկվել են գրքում:

Հայ իրականության մեջ նշված թեմատիկայով նման գործնական ուղեցույց թարգմանաբար հրատարակվում է առաջին անգամ:

«Ծախսեր - արդյունք վերլուծություն» ձեռնարկը նախատեսվում է բարձրագույն ուսումնական հաստատությունների հանրային կառավարման, տնտեսագիտական մասնագիտություններով սովորողների, դասախոսների, հանրային կառավարման համակարգում աշխատողների համար:

Թերեզա Խեչյան

«Հանրային կառավարում» գիտական հանդեսն իր էջերում հրապարակում է հոդվածներ, որոնցում առաջնային են ՀՀ հիմնախնդիրների վերաբերյալ թեմաները:

Խմբագրությանն ուղարկված հոդվածները չեն վերադարձվում, հանդեսի պայմաններին չհամապատասխանող նյութերը չեն ընդունվում: «Հանրային կառավարում» հանդեսի հրապարակումներում ներկայացված մոտեցումներն արտահայտում են հեղինակների տեսակետը:

Հոդվածների ներկայացման ձևը

1. Հոդվածները ներկայացվում են հայերեն, ռուսերեն կամ անգլերեն, տպագիր (1 օրինակ) և համակարգչային շարվածքով՝ կրիչով (*MS WORD* ծրագրով), հայերենը՝ «Arial Armenian», ռուսերենը՝ «Times New Roman» (*Unicode*) և անգլերենը՝ «Times New Roman» տառատեսակներով, 11 տառաչափով (Font): Պարտադիր է «և» տառի օգտագործումը: Բացակը (*space, пробел*) համարվում է առանձին նիշ: Բառերը տարանջատել միայն մեկ բացակով:

2. Էջը պետք է համապատասխանի A5 (Width 14.8 cm, Height 21 cm) չափին, ունենա լուսանցքներ՝ ձախից, աջից, վերևից ու ներքևից՝ 1 սմ: Էջերը պետք է համարակալված լինեն էջի ներքևում կենտրոնում: Տողերի միջև բացվածքը՝ 1 (Single): Ձեռագիրը պետք է ունենա կողմնորոշում էջի աջ և ձախ եզրերից (Justify):

3. Հոդվածն սկսվում է վերնագրով առաջին տողի կենտրոնում՝ մեծատառերով, որին հետևում է հեղինակ(ներ)ի անունը և ազգանունը, պաշտոնը և կոչումը: Հոդվածի վերջում ներկայացվում է ամփոփագիրն անգլերեն՝ ոչ ավելի, քան 0.5 էջ ծավալով (անգլերեն ներկայացված հոդվածների ամփոփագիրը պետք է լինի ռուսերենով): Հոդվածի ընդհանուր ծավալը՝ ոչ ավելի, քան 15 էջ:

4. Հոդվածը պետք է ձևակերպված լինի հստակ, վերջում պետք է տրվի գրականության ցանկը: Հոդվածը եզրափակվում է հեղինակ(ներ)ի ստորագրությամբ (ձախից) և աջից՝ նյութը խմբագրության հանձնելու թվականը [օրինակ՝ 15.04.2005 թ.]:

5. Նկարները, գրաֆիկները և այլ վիզուալ նյութերը ներկայացվում են էլեկտրոնային տեսքով՝ առանձին ֆայլով կամ ներմուծված հոդվածի մեջ WORD ծրագրում իբրև նկարներ (*paste special/as picture*) և առանձին EXCEL ֆայլով (գրաֆիկների, դիագրամների և այլ դեպքերում): Միևնույն նյութի ներկայացումն աղյուսակի և նկարի ձևով չի թույլատրվում: Հոդվածում նկարների հղումները բերվում են հապավումով [օրինակ՝ «(տես նկ. 8)» կամ «ինչպես հետևում է նկ. 4-ից»:

6. Ընդունված խորհրդանշանների (% , \$) օգտագործումն անհրաժեշտ է: Թվականային հապավումները բերվում են բացակով և կետով [օրինակ՝ «1824 թ. պայմանագրով» կամ «1980-2000 թթ. ընթացքում»]:

7. Հոդվածում օգտագործված աղբյուրների և գրականության հղումները բերվում են քառակուսի փակագծերում՝ միացյալ և հաջորդական համարակալումով, այդ համարի կողքին նշելով հղված էջ(եր)ը, եթե հղման աղբյուրը մե-

կից ավելի անգամ է օգտագործվում ամբողջ հոդվածում: Էջը պետք է նշել աղբյուրի բնագրի լեզվով՝ «էջ» (հայերեն), с. (ռուսերեն), р. (անգլերեն, ֆրանսերեն կամ այլ լեզվով աղբյուրներ), օրինակ՝ [1], [2, с. 11-12]: Հոդվածի վերջում, «Գրականություն» բաժնում, նույն հաջորդականությամբ բերվում է գրականության ցանկը, 10 տառաչափով, բնագրի լեզվով: Հաջորդաբար նշվում են կարգային համարը (առանց քառակուսի փակագծերի), հեղինակների ազգանուններն ու անվանատառերը՝ **նՊացված (Bold)** և *շեղ (Italic)*, հրատարակության վերնագիրը, հրատարակչության անունը, վայրը (քաղաքը), թվականը, նաև էջ(եր)ը, եթե հղված աղբյուրը միայն մեկ անգամ է օգտագործվում ամբողջ հոդվածում: Պարբերական հրատարակությունների համար հեղինակի անվան և ազգանվան ու հրապարակման վերնագրին հաջորդում են պարբերականի անվանումն առանց չակերտների, հրատարակման թվականը, հատորի հ/կամ թողարկման համարները, վայրը, հերթական համարը և էջ(եր)ը: Էլեկտրոնային աղբյուրների դեպքում վերնագիրը (եթե կա), web-հասցեն ամբողջությամբ և անսաթիվը, ամիսը, տարին: Օրինակ՝

Գրականություն

1. *Հարությունյան Ա.*, Եվրոպական Միության հանրային ծառայությունը, «Հանրային կառավարում», 2004 թ., թիվ 3-4, էջ 4:
2. *Шаранова Р.*, Панисламизм сегодня: идеология и практика Лиги Исламского Мира. "Наука", М, 1986. с. 105.
3. *Yasha Lange*. Media in the CIS, Center for Civil Society International, Amsterdam, 1997, from <http://www.internews.ras.ru/books/media>, Sept. 28, 1998.
4. <http://www@oecd.org/dsti/sti>, March 1, 2001.

8. Ենթատողային մեկնաբանությունները կամ հավելումները (footnotes) բերվում են տվյալ էջի ստորին հատվածում՝ յուրաքանչյուր էջում սկսելով 1 թվային համարակալումով (Restart each page), 9 տառաչափով:

9. Հոդվածի վերջում գրել հոդվածի վերնագիրը 3 լեզուներով՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն (մեծատառերով):

Խմբագրական խորհուրդ

Խմբագիր՝	ԼԱՎՐԵՆՏԻ ՄԻՐՁՈՅԱՆ
Համակարգչային շարվածքը և ձևավորումը՝	ԱՆՆԱ ՂՈՒՇՉՅԱՆԻ
Սրբագրիչ՝	ՊԱՏՎԱԿԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ
Տեխնիկական խմբագիր՝	ԱՍՅԱ ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ

Տպագրությունը՝ օֆսեթ, չափսը՝ 68x100, թուղթը՝ օֆսեթ,
տպաքանակը՝ 300, հրատ. մամուլը՝ 7.5: